

# Hamaratowowt'iwn / Azgayin Kedronakan Var'owt'iwn

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Azgayin Getronagan Vartchoutioun. Hamaratowot'wn / Azgayin Kedronakan Var'owt'wn. 18.-19...

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'œuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

[Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).

Կ 12357 29  
(1873)

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1872-1873 ԱՄԻ

ԱՌ

ԱԶԳ. ԸՆԴՊ-ՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԱՆ

ՄԱՍՆ Ա.

ՀՄՄԵՐԵՏՈՒՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԵՆ ԺՈՂՈՎՈՅ

Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Քաղաքական ժողով՝ ազգային ընդհանուր ժողովոյը ընտրութեամբ և վստահութեամբ պատուեալ, 1872 Յուլիս 18ին իր առաջին նիստն ընելով մինչև իր հրատարման թուականը, 3 օգոստ. 1873, գրեթէ տասներեք ամիս պաշտօնավարութիւն ունեցաւ:

Քաղաքական ժողովս առաջին օրէն իրեն ուղեցոյց ունեցաւ ազգային Սահմանադրութիւնը. թէև Ս. Նախագահը դիտողութիւն ըրաւ թէ, «Սահմանադրութիւնն ըստ առաին գործադրել անկարելի ըլլալով, քանի որ վերաքննութեան տակ է նա, պէտք է որ այն կէտերը որք դժուարութիւն կրեան յարուցանել մեր առջև, վերաքննութեամբ գործադրեմք»: Բայց Քաղաքական ժողովս Ս. Նախագահին պատասխանեց թէ՛ «Արդէն ընդհ. ժողովն ինչ ինչ կէտեր՝ որք դժուարութիւն յարուցած էին գործադրութեան մէջ, վերաքննելով սրբազրած է. մեր պարտաւոր եմք նոյն սրբազրեալները գործադրել, և մնացած կէտերը՝ որք տակաւին չեն վերաքննեալ, նոյնպէս ճշդութեամբ գործադրել միայն եթէ պատահի այնպիսի կէտ մը որք ճշդութեամբ գործադրելն դժուարանայ մեր առջև, ասանկ պարագայի մը մէջ կրնամք ընդհանուր ժողովոյ գլխեւէ և նոյն դժուարին կէտը դիւրելու համար անոր վերաքննութիւնը խնդրել. (՚ի նիստ Գ. Քաղաքական ժողովոյ 23 յուլիս 1872):

Քաղաքական ժողովս ամէն բանէ յառաջ տեսնելով որ նախորդ Քաղ. ժողովոյ ընտրութեամբ միայն Տեսեսական խորհուրդ մը կար 5 անդամէ բաղկացեալ, Դատաստանական խորհուրդ մը 5 անդամէ, և Հիւանդանոցի հոգաբարձութիւն մը 2 անդամէ, փութաց ըստ Սահմանադրութեան ընտրել վարչութեան ճիւղերը.

- 1. Ուսումն. խորհուրդը 7 անդամէ
  - 2. Տեսես. , 7 ,
  - 3. Վանօրէից , 7 ,
  - 4. Հիւանդանոցի հոգաբարձութիւնը 9 անդամէ:
- Դատաստանական խորհուրդն և Կոստ.

18  
L

կաց հոգաբարձութիւնն ընտրուեցան Խառն ժողովով :

Միայն Նրևտինց Հոգաբարձութիւնը Տընտես . խորհրդոյ կազմութիւնէն ետև ընտրելութէութեամբ ետ մնացած ըլլալով, ուր ուրեմէն այս ընտրութիւնն ալ կատարուեցաւ 7 անդամէ :

Քաղաքական ժողովս 1873 մայիսի տարեգրովիսն առթիւ՝ կատարեց նաև խորհրդոց և Հոգաբարձութեանց կիսով չափ նորոգութիւննը, ինչպէս Սահմ. կէրէ. յօդուածը կը տրամադրէ, առաջին անգամին համար վիճակ ձեւելով անոնց անդամոց վրայ :

Քաղաքական ժողովս արդէն դիզեալ ազգային խնդրոց անօրէնութեանը զբաղելուն հետ փութեաց վարչական ընթացքն ուղղելու համար Ներքին կանոնադիր մը պատրաստել, զոր վաւերացուց և զործադրութեան դրաւ, ահա անոր օրինակը :

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴԻՐ

ՔԱՂԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԿԵԴՐ . ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Ա . Ն Ի Պ Պ

1. Քաղաքական ժողովը շտաբով մէկ անդամ, որոշեալ օր մը, նիստ ընելու պարտաւոր է 'ի Պատրիարքարան և 'ի հարկին ուրիշ որոշեալ տեղ մը : Ժողովն ինքը կորոշէ օրն ու ժամը և տեղը :

Խնդրոց կարգը կանխաւ կը ծանուցուի ժողովականաց :

Ժողովականք կ'ստորադրեն ներկայութեան տումարի մը մէջ :

2. Արտաքոյ որոշեալ աւուր նիստ կրնայ ընել : Ս. Պատրիարքը կամ ժողովոյ դիւանը և կամ ժողովն ինքը կորոշէ այս արտաքոյ կարգի նիստը . և ժողովականաց կանխաւ կը ծանուցուի օրն ու ժամը և խնդրոց կարգը :

3. Ժողովական մը եթէ շաբաթական նիստի երեք անգամ իրարու վրայ բացակայ ըլլայ՝ առանց հիւանդութեան կամ ծանապարհորդութեան պատճառի, ազգաբարձութիւն կրնող ունի ժողովէն . և եթէ յաջորդ նիստին դարձեալ բացակայ մնայ, երկրորդ ազգաբարձութեամբ իրեն կը ծանուցուի որ եթէ միւս

նիստին դարձեալ բացակայ մնայ, ինքնին հարածարեալ պիտի համարուի :

Երբ հրատարեաց թիւն երեքի հասնի, ընդհանուր ժողովոյ դիւանին կը ծանուցուի, ընդհանուր ժողով գումարելու՝ հրատարեաց տեղ նորոգ ընտրութեան համար :

Բ . Ա Ք Ե Ա Ն

4. Որոշեալ աւուր որոշեալ ժամուն ատենանը կը բացուի, և անմիջապէս նախորդ նիստի ատենագրութիւնը, դիւանատան և այլ ժողովէն կարգեալ Մասնաժողովոց և Յանձնաժողովոց տեղեկագիրները կամ շաբաթական դրօշուտութեանց արձանագրութիւնը՝ կը կարգացուին, և եղած դիտորդութիւններով հանդերձ կը վաւերանան դիւանին ստորագրութեամբը :

Եթէ մեծագոյն մասը ներկայ չէ, ետքէն եկող ժողովականը կրնան ատենագրութիւնն ու միւս արձանագրութիւններն առանձինն ընթեռնուլ և իրենց դիտորդութիւնն ընել :

5. Բաց 'ի հրատարեալ անդամներէն, մնացելոց մեծագոյն մասով օրինաւոր ատեսն կը կազմուի :

6. Եթէ մեծագոյն մասը ներկայ չըլլայ, Ս. Պատրիարքը և ներկայ ժողովականք պատասխանատուութիւնն իրենց վրայ առնով կը խորհրդակցին խնդրոց կարգին մէջ զբանուող խնդրոց վրայ, և որչաւ կրնեն եւ արձանագրել կուտան : Ս. յաղխի պարագայի մը մէջ ժողովականաց թիւը Յէն սակաս ըլլալու չէ :

Մեծագոյն մասի ներկայութիւն չըլլած նիստի մէջ եթէ ժողովական մը դիտորդութիւն ընէ և առջարկէ խնդրոց կարգին մէջ զանուած խնդիր մը օրինաւոր ատեսնի թողուլ, և Ս. Պատրիարքը կամ դիւանի անդամներէն մէկը առաջարկողին համաձայն ըլլան, նոյն խնդիրը ետ կը մնայ :

7. Խնդրոց կարգն անփոփոխ կը պահուի և տեղէ դուրս խնդիր չ'յուզուիր . բայց եթէ մեծագոյն մասը ներկայ ըլլայ, և խնդրոց կարգին մէջ փոփոխութիւն մտցնելու այսինքն՝ առաջ ու ետև անցնելու հարկը տեսնէ, կրնայ ընել . կամ նոր խնդիր մը ծագած ըլլայ, և անոր ստիպողականութիւնը մեծագոյն մասամբ որոշէ, այդ նոր խնդիրն ալ քննու-

թեան և որոշման կրնայ ենթարկել: Բայց երբ մեծազայն մասը ներկայ չըլլայ, անփոփոխ կը պահուի խնդրոց կարգը, և նոր խնդրոյ համար ալ ներկայից հաւանութեամբ արտաքոյ կարգի նիստ գումարեւ կորուզի:

Գ. Դիւան

8. Ժողովն ունի զիւան մը, բաղկացեալ տտեւապետէ և տտեւադպրէ, և ՚ի հարկին մշանջնուսուր կամ առժամանակեայ փոխանորդներէ:

9. Ատենապետին պաշտօնն է.

Ա. Ատենանը բանալ և գոցել որոշեալ ժամերուն:

Բ. Ատենական կարգաց հսկել:

Գ. Վիճաբանութիւններն ուղղել և ամփոփել:

10. Ատենադպրին պաշտօնն է.

Ա. Ժողովին որոշմանց ճշդիւ արձանագրութեանը և անոնց գործադրութեանը հոգ տանիլ:

Բ. Ժողովին ներկայացնել խնդիրները և անոնց վերաբերեալ կարևոր տեղեկութիւնները:

Գ. Դիւանատան ընդհանուր բարեկարգութեանը հսկել:

11. Ժողովին զիւանը կը պատրաստէ ժողովին խնդրոց կարգը, կամ անոնց ծագման առաջնութեան կարգին և կամ ստիպողականութեան հետեւելով:

Ս. Պատրիարքը և զիւանապետը կրնան նոր խնդիրներ յաւելցնել, երբ խնդրոց կարգը դեռ ժողովականաց չէ ծանուցուած:

Դ. Տնօրէնութիւն

12. Ժողովին ներկայացեալ խնդիրները ժողովն ինքը կը տնօրինէ, և կամ իր մէջէն և կամ դրսէն կարգեալ յանձնաժողովի միջոցաւ կը տնօրինէ:

Խնդիր մը վիճաբանութեան տրուելէն ետքը ժողովականաց հաճութեամբ քուէի կը դրուի. ընդդիմադիր մասն եթէ բողոքէ կամ զիտողութիւն մ'ունենայ, արձանագրել կուտայ:

Քուէարկութիւնը յայտնի կամ դաղտնի կըլլայ ըստ կամաց ժողովին:

13. Յանձնաժողովներն ըստ եղանակի

յանձնարարութեան կը կատարեն իրենց պաշտօնը, կամ կը տեղեկագրեն առ ժողովն և կամ եթէ լիացոր իշխանութիւն առած են, պարտու պատշաճ տնօրէնութիւնը կընեն, և գործադիր իշխանութիւնն ալ ըստ այնմ կը գործադրէ:

14. Ժողովն իր մէջէն ընտրեալ երկու մնայուն Մասնաժողովներ ունի, մին ուսումնական գործոց և միւսը տնտեսական գործոց:

Ուսումնական խորհրդէն և Վանօրէից խորհրդոց ուսումնական մասէն եկած գործերն Ուսումն. մասնաժողովին կը ներկայանան, որ կը տնօրինէ արժանը:

Սոյնպէս Տնտեսական խորհրդէն և Վանօրէից խորհրդոց տնտեսական մասէն և կը տակաց հոգաբարձութեանն եկած գործերը Տնտես. մասնաժողովին կը ներկայանան, որ կը տնօրինէ արժանը:

15. Սոյն մասնաժողովներն իրենց ձեռնհասութեանէ վեր խնդրոց համար Քաղաքական ժողովին կը դիմեն:

16. Սոյն մասնաժողովոց տնօրէնութեանց արձանագրութիւնը ժողովին շտաբթական նիստին կը ներկայացուի:

17. Ժողովականներէն ուղղորդ կրնայ ներկայ գտնուիլ սոյն մասնաժողովոց նիստերուն:

18. Սոյն մասնաժողովներն իրենց վերաբերեալ Խորհրդոց և Հոգաբարձութեանց հետ համախորհուրդ նիստ կրնան ընել:

19. Դիւանը ժողովէն որոշեալ խնդրոց վրայ պէտք եղած բացատրութիւնը կամ հրահանգը կուտայ գործադիր պաշտօնէից: Դիւանը կը տնօրինէ այնպիսի խնդիրներ և գործեր, որոնք ճշդուած են արդէն կամ սահմանադրութեանը, կամ ժողովէն սահմանեալ օրինօք և հրահանգօք, և կամ կառավարութեան օրինօք:

Ս, յ տնօրէնութիւնները ժողովին շտաբթական նիստին կը ներկայացնէ զիւանապետը:

Ե. Գործադիր Իշխանութիւն

20. Ժողովոց եւ խորհրդոց որոշմանց գործադիր իշխանութիւնը կը վարէ Ս. Պատրիարքը, և ՚ի բացակայութեան նորա՝ ֆոխանորդ Հայրը հրամանաւ Ս. Պատրիարք Հոր, եւ կամ Խորհրդակից պաշտօնեայն:

Դիւանապետը եւ երկու օգնականը իւր եւ Քափու քէնեասին գործադիր իշխանութեան պաշտօնէութիւնը կը կազմեն :

21. Ժողովն ու խորհուրդներն իրենց որոշումները կրնեն իսկ պաշտօնեայք այն որոշումները կը գործադրեն , պարտաւարտած խմբագրութիւնն ընելով , Ս. Պատրիարքին կը ներկայացնեն որ ստորագրէ պաշտօնական թղթերը :

22. Գործադիր պաշտօնեայք կրնան ներկայ գանուել ժողովին նիստին , երբ ժողովն ուզէ . եւ եթէ խնդրոյ մը վրայ բացատրութիւն կամ տեղեկութիւն տալու հարկը տեսնեն , պարտաւոր են Դիւանին իմաց տալ :

23. Գործադիր պաշտօնեայք պատասխանատու են , եթէ որոշան մը գործադրութիւնը յետաձգուի . եւ ամեն յաջորդ ժողովի օր նախորդ որոշմանց մէջէն չգործադրուածները հանդերձ պատճառաբանութեամբը պարտական են ներկայացնել Դիւանին :

24. Խառն ժողովոյ վերաբերեալ խնդիրներն իրեն կը վերապահուին . եւ Ս. Պատրիարք շօր , կամ Կրօնական եւ կամ Քաղաքական ժողովոյ գիւանին հաճութեամբը Խառն ժողով կը հրահրուի :

Եթէ Խառն ժողովոյ գիւանը պատշաճ չալէ , խնդիր մը առանց Խառն ժողով գումարեւել կրնայ անօրինակի , կամ Կրօնական ժողովին անօրէնութիւնը Քաղաքական ժողովին , եւ կամ Քաղաքական ժողովին անօրէնութիւնը Կրօնական ժողովին հաղորդուելով :

25. Տեսուչ խորհրդոց , Հոգաբարձութեանց եւ Մասնաժողովոց կամ Յանձնաժողովոց վերաբերեալ խնդիրները գիւանապետը կամ օգնականը կը զրկէ անոնց , կամ Ս. Պատրիարքին եւ կամ իր ստորադասութեամբը : Դիւանատունը պարտական է յանձնարարեալ խնդրոց վերադարձին հոգ ունենալ , եւ ասոնց համար Առեմաղդարին հաշիւ տալ :

26. Իսկ այն խնդիրները , որոնց վերաբերեալ անօրէնութիւնն արդէն որոշեալ է , կամ թէ սովորական եւ ծանօթ է , Ս. Պատրիարքը պաշտօնէից հետ խորհրդակցելով կը սլուորինէ , եւ այս անօրինութեանց արձանագրութիւնը ժողովին շարաքական նիստին կը ներկայացուի :

Գրատական խնդիր մը , եթէ դատաստանական խորհրդոյ զրկուելու սէսք չունի ,

Պատրիարքական փոխանորդին կը զրկուի . եւ առանց անոր գիտութեան չի անօրինուիր :

27. Այն կարեւոր անօրէնութիւնները , որոնք հրատարակութեան յարմար կամ արժանի կը գատուին անօրինողի կողմէն , գիւանատունը հրատարակութեան : Կուտայ ուղղ ալ գային խնդրոց :

28. Ներկայ կանոնագիրը վերաբննելի է , երբ երեք ժողովականի կողմէն առաջարկուի , եւ ժողովն ընդունի :

Սոյն կանոնագրին համաձայն Գիւանատունը իր շարաքական գործողութեանց անվեկազրք կը չնրկայացնէր իւրաքանչիւր նիստի մէջ , եւ կարողացուելն յետոյ կը վաւերանար :

Այս կերպով Գիւանատան Հայերէն ճիւղը 292 թիւ և Տաճկերէն ճիւղն ալ 301 թիւ գործողութիւններ ունեցած են , որոնց զլիսաւոր պարունակութիւնն եղած են :

Հայերէն թղթակցութեանց մասին՝ Սահմանադրութեան գործադրութեանը համար պատուէրներ եւ բացատրութիւններ , գաւառներէն հասած այլ և այլ հարցմանց եւ զխտութեանց պատասխաններ , ժողովոյ որոշմանց կրկնութիւններ , վկայագիրներ , արքունի տրոց վերաբերեալ բացատրութիւններ և այլ և այլ մասնական տնօրէնութիւններ են :

Տաճկերէն թղթակցութեանց մասին՝ հարտահարութեան ծանուցեալ խնդրոց՝ կրօնափոխութեան և եկեղեցեաց վնասութեան համար թագիրներ , յանձնարարականներ թէ առ Կուսակալս և թէ առ Պօլսոյ տեղական իշխանութիւնս , փոխանորդարանի կողմէն ամուսնական խնդրոց վրայ գրութիւններ , բացատրութիւններ և այլ հարկ եղած հետադիրներ , և այլն :

Քաղաքական ժողովոյ որոշած էր Նաե որ , թէ իր և թէ՛ Գիւանատան տնօրէնութեամբը առ Բ. Գուռն ուղղելի ամենայն գլուխութեանց նախադիժր իրմէ յատկացեալ ժողովականին զխտողութեանը ենթարկուելէ ետև մատուցուին առ Բ. Գուռն :

Ներքին կանոնագրին մէջ յիշուած Աւսուցական և Տնտեսական մասնաժողովոց կազմութիւնն ետ մնաց զանազան զխտողութեանց պատճառաւ :

Գրեանատան բարեկարգութեան համար աշխարհիկ կանոնադիր մը պատրաստելով վաճառքացաւ, որոյ օրինակն է հետեւեալը :

ԳՐԵԱՆԱՊԵՏՈՒ ԿԱՆՈՆԱԿԻՐ

1. Գրեանատունն օւնի Գրեանապետ մի, որ պատասխանատու է: Գրեանատան բոլոր գործաւնութեանց. պիտի հսկէ Գրեանատուն հասած և անկէ ելած գրութեանց ճշդիւ և օրինակ որ արձանագրութեանը, խնդրոց կարգին, թղթակցութեան ըստ օրինի կատարման: Ժողովոց և խորհրդաց ատենագրութեանց և Գրեանատան թղթոց և առևմարաց սահմանութեան:

2. Քաղաքական ժողովը կը նորէ Գրեանապետը և Գրեանատան բոլոր Գրեանադպիրները:

3. Գրեանադպիրը պատասխանատու են Գրեանապետին, իրենց յատկացեալ կամ յանձնարարեալ պաշտօնին ճշդիւ գործադրութեանը մասին:

4. Հայերէնի և Տաճկերէնի Ա. խմբագիր Գրեանադպիրը Գրեանապետին օգնականն են և անոր պէս պատասխանատու, և ՚ի բացակայութեան նորա մին կամ միւրը Գրեանապետի պաշտօնը կը վարէ:

5. Գրեանատունը կը բացուի 3 Ժամ յառաջ: Կը գոցուի ամառը 9 1/2 ին և ձմեռը 40 1/2 ին:

6. Գրեանատունը կէս օրերը մէկ Ժամ կը գոցուի ճաշի Ժամանակ: Մնացեալ Ժամերուն մէջ իւրաքանչիւր պաշտօնեայ իրենց գործոց պիտի զբաղին, ըստ հրահանգի և յանձնարարութեան Գրեանապետին կամ անոր օգնականաց:

7. Իւրաքանչիւր ժողովոյ և խորհրդոյ յատկացեալ Գրեանադպիրը, անոնց իւրաքանչիւրին յատկացեալ Քտենագրչի պաշտօնէին հետ յարաբերութիւն ունին, և անոնցմէ առած հրահանգը Գրեանապետին կամ օգնականաց հարողելով: ըստ այնմ կը գործադրեն:

8. Եթէ Պատրիարքարանէ դուրս տեղ մը ժողով կամ խորհուրդ գումարի, միայն յատկացեալ Գրեանադպիրը ներկայ պիտի գտնուի որովեալ Ժամուն:

9. Առանց հիւանդութեան ... պատճառի

բացակայութիւն արգիլեալ է. և եթէ ուրիշ ստիպողական պատճառ մը պատահի, կանխադրով պիտի հարողուի Գրեանապետին:

10. Գրեանապետը կամ անոր օգնականները կարող են անբաստանել պարտազանց պաշտօնեայ մը առաջի Քաղաքական ժողովոյ: Անորոջ պաշտօնեայն իր պաշտօնէն կարձրուի:

11. Գրեանատունն ունի սպասաւոր մի, որ անոր բաց ատենը պաշտօնէնց կապասաւորէ, և գոց ատենը կը հսկէ և կը պահպանէ ամենայն զՎ ջերը:

12. Երասթաճիք պարտական են Գրեանապետին կամ անոր օգնականաց յանձնարարութիւնները կատարել:

13. Կարևոր նմանիք և այլ պաշտօնական յանձնարարութիւնք՝ որոց որ ուղղեալ է, յանձնելով՝ վտարելն ստացազիբ կաւառուն, որ ապա ներկայացնեն Գրեանապետին:

14. Գրեանատան համար թէ՛ սպասաւորին և թէ՛ ետաքանչիւրուն ըրած Ժախքերը Գրեանապետին գիտութեամբը կը լըլան և անոր ստորագրութեամբը կատանան Գանձապետին:

15. Գրեանատան ամենայն պիտոյը Գրեանապետն իր ստորագրութեամբը կը խնդրէ մատակարարելն:

16. Գրեանատան բոլոր պաշտօնէնց անասկանը որոշեալ Ժամանակի մէջ վճարուելու համար Գրեանապետը կը բանակցի Տնտեսական խորհրդոյ հետ, և իւրաքանչիւրին շէքերը կատանայ:

ՔԱՄԻՏԵ ԲԵՆԵՄԻՆ

17. Քամիտ քէհեասին ամեն առաւօտ Պատրիարքարան կիջնէ, և Ս. Պատրիարք Հօր, Փրօնանորդ Հօր և Գրեանապետին և Տաճկերէնի Ա. խմբագրին հետ տեսուելէն ետքը կերթայ ՚ի Բ. Գրեան:

18. Քամիտ քէհեասին Բ. Գրան և Ազգին մէջ եղած գործոց միջնորդն ըլլալով, իրեն եղած յանձնարարութիւնները ճշդիւ կատարելու պարտական է և ԲՅ. Գունէն զատ ուրիշ պաշտօնական տեղեաց հետ յարաբերութիւն պիտի ունենայ, և հոն Ազգային հանրական և անհատական գործոց վրայ պիտի հսկէ:

19. Քամիտ քէհեասին պարտքն է ըստ

կել, որ պաշտօնական այցելութիւններն իրենց պէտք եղած ժամանակին կատարուին, և այդ մասին թերութիւններ տեղի չունենան :

20. Քափու քէհեասին դիւանէն առած իղթերուն ցանկը պիտի ստորագրէ, և ըստ այնմ յանձնարարութիւնները կատարելով պիտի հաղորդէ Տանկերէնի դիւանին, արձանագրութեան համար :

21. Քափու քէհեասին պարտաւոր է դիտնալ թէ Բ. Դանէն առնուած հրամանագրերն իրենց զրկուած տեղերուն մէջ գործադրուած են թէ ոչ, կամ հրամանագրին տեղի տուող խնդիրներն ապա ի՞նչ վիճակ ստացած են. այս բանին համար Քափու քէհեասին դիւանագետին գործակցութիւնը կատանայ, և ըստ այնմ առնուած տեղեկութիւնները խնդրոյն վերաբերեալ թագրիրներուն տուածաբն մէջ արձանագրել կուտայ :

Յաւելուած է Գրխանայան Կանոնագիրն

1. Մէկ ամսու մէջ երեք աւուր բացակայութեան համար պաշտօնէ արձակում :

2. Մէկ աւուր բացակայութեան համար երկու աւուրէքի տուգանք :


3. Գիւանական կանոնագրին մէջ յիշուած կէս օրէն 3 ժամ յառակ ներկայութիւնը, 2 1/2 ժամու վերածել :

4. Որոշեալ ժամուն չեկող պաշտօնեայք պարտազանց պիտի համարուին. և դիւանագետին Ք. ազդարարութենէն ետև՝ ամբաստանեալ պիտի համարուին Քաղաքական ժողովին առջև :

Սոյն կանոնագրին համաձայն Քարուքէհեասի էֆէնտին իր պաշտօնին և գործոց օրագրութիւնը կը բերէր ժողովոյ նիստերուն, և Գիւանատան չարաթիական գործողութեանց ընթերցումէն յետոյ՝ ախ կը կարգացուէր, և անոնց կէտ ատենագրութեան տուածաբն մէջ կ'արձանագրուէր :

Գիւանատան բարեկարգութեան, կանոնադրութեան և մանաւանդ ապահովութեան մէջ գլխաւոր և առաջին միջոցը նկատուեցաւ զուհետքէ Գիւանատան մ'ունենալ : Այս մասին բանակցելով Մայր եկեղեցւոյ Թաղ. խորհրդը

դոյ կետ, երկու կողման հաւանութեամբ որոշուեցաւ Մայր եկեղեցւոյ կանանց կողմը գտնուած Դպրաց Պահարանը յատկացնել Պահեստի դիւանատան : Ծամանակ չեղաւ միևնոյն բանակցութիւնն ունենալ Դպրաց ընկերութեան կետ, որուն ձեռքը կը գտնուի յիշեալ Պահարանը :



Բ.

ՍՍ. Հ Մ Ս Ն Ա Գ Ր Ո Ղ Թ Ե Ա Ն  
Գ Ո Ր Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ը

Կեդրոնական վարչութեան առաջին ու գլխաւոր պարտաւորութիւնը Սահմանադրութիւնը գործադրելն ըլլալով, Քաղ. ժողովս իր պաշտօնավարութեան առաջին օրէն փութաց այս պարտաւորութիւնը կատարել :

Սահմանադրութիւնն Ազգին յառաջադիմութեան ու կենաց տարը լինելով, գաւառաց մէջ ալ անոր գործադրութիւնն անհրաժեշտ պիտոյք մ'էր, մանաւանդ որ գաւառական վարչութեանց ըստ օրինի կազմութեամբ և պաշտօնավարութեամբը իւրաքանչիւրն իր վիճակին վրայ խորհելու և զայն դարմանելու փոյթ կուենանա. ինչպէս որ Գաւառական հարստահարութեանց քննիչ Գանձատիրը զգաւառացի ազգայնոց վիճակը մանրախոյզ քննութենէ անցնելէ ետև, Ազգին ձեռք ըլլալիք դարմանաց առաջինն ու գլխաւորը համարած և առաջարկած էր. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԳՈՐԾԱԳՐԵՆ ՏԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՆԱՍԱՍ ՄԵՋ : Ուստի Քաղ. ժողովս ձեռնարկեց Սահմանադրութիւնը գործադրել ընդհանուր գաւառաց մէջ, գործակցութեամբ Կրօնական ժողովոյ :

Բայց նախ և յառաջ գաւառական Վիճակագրութիւն մ'ընելու և Հայաստանի աշխարհացոյց տախտակի մը պարտաւորութեան պիտոյքը նկատողութեան առնելով, զոր նաև ցուցըցած էր Գաւառ. հար. քննիչ Յանձնաժողովն, իր երկրորդ նիստին մէջ որոշեց յատուկ շրջաբերականաւ Վիճակագրական ցուցակներ ուղղել բոլոր Առաջնորդական վիճակներէն. և Աշխարհացոյցին պատրաստութիւնն



ալ այս մասին ձեռնհասութիւնը վկայեալ թիւիւնս Գարութիւն էք Ին յանձնարարութիւն ընել :

27— 28 Վիճակներ իրենց վիճակագրութիւնը զրկեցին, և միւսները չպատասխանեցին : Թէև քանիցս այս հրահերն կրկնուեցաւ հետզհետէ զրկուած շրջաբերականաց միջոցաւ, տես 'ի Երջարեբրականն որ Խառն ժողովոյ համարատուութեան վերջը կցեալ են : Եկած վիճակագրութիւնները կցելով համարատուութեան վերջը՝ իբրև Գ. մասն կը փութանք հրատարակել 'ի տեղեկութիւն երեսփոխանաց և հետաքրքիր ազգայնոց, յուսալով որ այս Վիճակագրութիւնը հետզհետէ կ'ամբողջանայ և աւելի կը կատարելագործուի : Ի սկզբան զժողարութիւն մ'ալ չ'աւելցնելու կամ մեկնութեան տեղի չի տալու համար՝ ազգայնոց թիւը չուզուեցաւ . թէև քանի մը գաւառներն նկատելով որ Հոռոմէական կամ Բողոքական ազգայնոց և այլոց ազգաց քանի տունէ բազկանաւը կուզուի, բարեհաճեր էին Հայոց տանց թիւերն ալ նշանակել, ինչպէս կ'երևի Վիճակագրութեան ցուցակներէն . բայց յետոյ յատկապէս Հայոց տանց և անձանց թիւերն և որիչ կարևոր տեղեկութիւններ ալ ուզուեցան Վիճակագրութիւնը զրկող գաւառներէն, և քիչերը պատասխանեցին : Հետևաբար 1873 յունիս 7 ի շրջաբերականաւ այս մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ ուզուեցան, տես 'ի Երջարեբրականն :

Իսկ Աշխարհացոյց տախտակին վրայ, որ արդէն աւարտելու մօտ է, իւրաքանչիւր Առաջնորդական վիճակք յայտնի երևալէն զատ, Վիլյայթի և Միթլսարեֆութեան ևն բաժանումներն աւանձինն պիտի ցուցուին . որով վիճակաց բաժանման արդի դրութեան աղաւաղեալ և բարեկարգութեան կարօտ մասերը յայտնի պիտի երևան : Այս տախտակը բարեկարգուելէն ետքը, արժան է որ հրատարակութեան տրուի, ոչ միայն ազգային վարութեանց համար, այլև ազգային ամեն վարութարանի մէջ տղայոց ուսուցանելու համար :

Այս Աշխարհացոյց տախտակը կարելի եղածին չափ կանոնաւոր ընելու համար, իւրաքանչիւր առաջնորդական վիճակներէ ու-

զուեցաւ թեմական քաղաքաց և դիւղորէից մէկմէկէ՝ Հեռահարութիւնը ժամու և տեղական դրից հեռեմատութեամբ . (տես նաև յունիս 7 ի շրջաբերականին մէջ), երեք վիճակք՝ Կարին, Երզնկա և Շապինգարահար պատասխանեցին . Կարին և Շապինգարահար սար ուղուածին համեմատ տեղեկագրած էին . իսկ Երզնկա իր վիճակին աշխարհացոյց տախտակը զրկեց, ընդ որ Քաղաքական ժողովու հաճելով, անոր օրինակները հանել տալով զրկեց ուրիշ վիճակաց, որ ըստ այժմ իւրաքանչիւր իր թեմին աշխարհացոյց տախտակը չիմէ ու զըրկէ՝ մթէ դիւրութիւն ունին : Թէքերտաղ նրաննօրինակ տախտակ մը զրկեց, և Խարբերդ ալ արդէն տակալ տախտակի մը օրինակը զրկեց . իսկ ուրիշ վիճակէ ձայն չեկաւ :

Այս հիմնական նախապատրաստութեանց հետ, Սահմանագրութիւնը գաւառաց մէջ գործադրելու դիւրութիւն տալու համար՝ Սահմանագրութիւն հրահրէք ոչ պատրաստուեցաւ . յարուժ ոչ միայն ընտրողական գործողութիւնները, այլև Գաւառական Ընդհանուր ժողովոյ, Գաւառական վարչութեան, Առաջնորդի ևն պաշտօնն ու պարտաւորութիւնը մանրամասն դժուրեցան . և կեդրոնական և Գաւառական վարչութեանց մէջ եղած յարաբերութեան սահմանը ցուցուեցաւ, որով գաւառներ գաւառին և կեդրոնինը կեդրոնին վերապահուելով՝ աշխատութեան բաժանման սկզբունքը գործադրուեցաւ . և կեդրոնն սկսաւ հետզհետէ ազատիլ ոչ միայն գաւառաց մասնական խնդրոց դատմունքներէն, այլև առաջնորդական խնդրոց զանաճառաւ ծագած այն սնտոի վէճերէն, որոնց համար իւրաքանչիւր կուսակցութիւն իր հանրազրկներովը Պատրիարքարանը կը դարձեցնէր, և անոր ազդեցութիւնն իր կողմը յանկուցանել կը ձգտէր :

Եւ ըստ որում Գաւառական Ընդհանուր ժողովոյ և վարչութեան և Առաջնորդի վաւերացուած Խառն ժողովոյ կը վերաբերի, ինչպէս նաև պատրաստեալ Հրահանգաց քննութիւնն ու վաւերացումը, ուստի այս մասին պիտի խօսինք Խառն ժողովոյ Համարատուութեան մէջ :

Սակայն Քաղաքական ժողովը պարտ էր համարել Սահմանադրութիւնը գործադրելու ձեռնարկութեանը մասին քանի մը դիտողութիւն ներկայացնել:

Այս ձեռնարկութեան մէջ, մինչև մեր հրատարական թուականը, չտեսնուեցաւ այնպիսի դժուարութիւն մը կամ խոչընդոտ մը, որ Սահմանադրութեան այս կամ այն մասնադրութեանէն ծագում առած ըլլար, և Ընդհանուր ժողովոյդ անմիջական վերաքննութեանն ենթարկելու հարկ ստիպողականութիւն ունենար:

Սակայն այս ձեռնարկութիւնը դաւանաց ունեց մէջ ընդդիմութեան պատահեցաւ այն անձանց կողմէն, որոնց անսահման իշխանութիւնը սահմանաւորելու կ'երթար Սահմանադրութիւնը:

Կեդրոնական վարչութիւնն այս ընդդիմութեանց 'ի սկզբան նշանակութիւն չտուաւ, յուսալով որ իր յարատև ու անյողդող ընթացից առջև հետզհետէ անոնք ալ կ'անհետանան. բայց երբ տեսաւ որ հին դրութեան այս բեկորները գիւրութիւն կուենեան ըստ որհին ընտրեալ զաւառական վարչութեանց զէմ խոչընդոտ հանել, և մինչև իսկ անդործութեան գառապարտել զանոնք: Կեդրոնական վարչութիւնը հարկ դրաց այս վիճակին հիմնական դարմանին դիմել, այսինքն ոչ միայն դրածադրել Սահմանադրութիւնը՝ այլև աստիճան դրայն. զի անոր ասպնջութեան խնդրէն կախումն ունէր գործադրութիւնն ալ:

Հոս հարկ կըլլար մեզ գէրմել Բ. Դրան միջամտութեան:

Բայց այս միջամտութիւնը խնդրելու համար նախ և յառաջ Նախագահ և Վարչութիւն Համակարծիք պէտք էին ըլլալ խնդրոյն վրայ: Թէպէտ Ս. Պատրիկոս հայրը Քաղաքական ժողովոյս ընտրութեան առաջին օրէն իր տարակարծիք ըլլալն յայտնեց, ինչպէս նաև Խառն ժողովոյ Օղոստոս 10 ի Բ. նիստին մէջ (տես Քաղաքարկութիւն Հրատարակութեան սուջև ընդդիմութիւն Նյարոյց. որով իբրև անհամաձայնութեան խնդիր Ընդհանուր ժողովոյդ ընտրութեանը բերելու վիճակին մէջ չգտնուեցանք: Նոյն իսկ Ընդհանուր ժողովոյդ

50 րդ. նիստին մէջ՝ որ 'ի 23 Օգոստոս 1872, Ս. Նախագահին և Վարչութեան մէջ սայն անհամաձայնութեան պայքար տեղի ունեցաւ յատենի անդ, և երբ նորին Սրբադեմութիւնը Սահմանադրութեան վերաքննութիւնը յանձնաժողովոյ մը յանձնելու առաջարկութիւնը պաշտպանելու առթիւ ըսաւ. « Գանի « որ արդի տարտամ ընթացքը շարունակէ, « Ազգային Վարչութիւնը չլիտի կրնայ իր « ընթացից որոշ ուղղութիւն մը տալ և « գործել, և չլիտի վերջ դաննն այն այլ « և այլ մեկնութիւնները, որոնք մերթ « այս, մերթ այն խնդրոյն մէջ օրինաց նը: « կատմամբ տեղի կուենան: Իս իսկ, կը յիշէք, որ երբեմն կ'ըսեմ թէ օրինաց չըլանաւ « կէն դուրս պիտի ելնեմ, երբ հարկը ստիւ « պէ, և այս խօսքս իրաց տրդի վիճակին « մէջ ոչ օք կրնայ մեղադրել »: Եւ քիչ մ'ալ աւելի յառաջ երթալով, նորոգ ընտրութեանց առթիւ Սահմանադրութեան մասին զանազան ակնարկութիւններ ընելն դատ՝ ըսած է. « Գանի որ ժողովուրդը իրաւանց ձանաչուց « չունի, քանի որ օրինաց ոգին չըմբռնէր, « և ուրեմն իր պաշտօնատարներուն համար ալ « Սահմանադրութեան սեյք չկայ »:

Միևնոյն նիստին մէջ երբ Քաղաքական ժողովը հրատարեալ 4 անգամայն նորոգ ընտրութեան խնդիրը կը յուզուէր, Քաղաքական ժողովոյ Առնեազպիրը բարեբէպ առիթով չը վախուց յանուն Վարչութեան յայտարարել թէ, « Նախ միտնեմ ընդ միշտ կը յայտարարեմ որ Ընդհանուր ժողովոյ մէջ երբ Քաղաքականութեան հարցումներ ուղղուին այնպիսի « խնդրոց վրայ, որոնք յատենի Քաղաքական « ժողովոյ յուշուած և անոր նկատողութեան « ենթաբրուած չեն, չեմ կարող 'ի պաշտօնէ « պատասխանել, այլ կրնամ խօսիլ միայն այն « խնդրոց վրայ, որոնք օտար չեն Քաղաքա- « կան ժողովոյ, և անոր կարծիքն ու միտում « ներք ծանօթ են ինձ: Այս կարգէն են այն « քանի մը խնդիրներն, որոնք կը յուզուին այս « պահուս Քաղաքական ժողովոյ 4 անգամայն « ընտրութեան առթիւ: Նախ կոստանդ էք. « ին՝ որ Քաղաքական ժողովն անկերպարան « վիճակի մը մէջ կ'ենթադրէ, կը պատաս- « խանեմ թէ Քաղաքական ժողովն թէև իօր « չօրս անդամներն հրատարեալ, կազմուած՝

« իւր նիստերը կը շարունակէ, և ընդհանուր « ժողովոյ կողմէ արգելն ընդունուած և 'ի գործ « գործած դրուժեան հետեւելը՝ իւր ներկայ « անբաւոյն թուոյն մեծագոյն մասովը ատենանը « կը բանայ, և վարչական գործերը կը տնօ- « րինէ »:

« Նրկորդը՝ կը յայտարարեմ որ Քաղա- « քական ժողովն առաջադրած է Ազգային Սահ- « մանադրութեան այն ամեն յողուածները՝ « որոնք վերաքննութեան բովին անցած չեն և « նոյնը կը մնան, Ենչու՞րեմք, և այն մասերը՝ « որոնք վերաքննուելով փոփոխութիւն կրած « են, եղած սրբադրութեանց համաձայն գոր- « ծադրել: Իսկ երբ Քաղաքական ժողովը Սահ- « մանադրութեան գործադրութեան մէջ դժ- « ուարութեանց պատահի, և անոր այս կամ « այն արձանագրութեան փոփոխութիւնը հար- « կաւոր երևի իրեն, այն ատեն ընդհանուր « ժողովոյ պիտի դիմէ և յարուցեալ զժուա- « րութեանց բարձուել ինքիք »:

Յայտնի է որ յանուն Վարչութեան յա- « տենի ընդհանուր ժողովոյդ եղած սոյն յայ- « տարարութեան մասնակից է նաև Ս. Պատրի- « արքը իրեն Նախագահ Վարչութեան, որ « փոխանակ Քաղաքական ժողովոյ Ստենագրու- « ին յայտարարութեանը հերքելու, Վերջ Նա- « խագահ ընդհանուր ժողովոյ հրաման ըրաւ « ընդհանուր ժողովոյ Ստենագրութիւն թէ, օրեւ- « րէ ԳՈՐԾԱՊԵՑԵՔ (տես 50 ող նիստի ատե- « նագր. երես 732): Ուրեմն Ս. Պատրարքն իր « նախկին յայտարարութիւնն ետ առած եղաւ « որով Վարչութեան և իր մէջ եղած անհամա- « ձայնութիւնը՝ որ ըրելուայն ընդհանուր ժող- « վոյդ իսկ ատենան եղած էր նոյն նիստին մէջ՝ « վերջ գտաւ »:

Սակայն խնդիրը վերջացած չէր, զի Ս. « Պատրիարքն իր համոզումը փոխած չէր և ըստ « ամենայնի համաձայն չէր Վարչութեան հիմնա- « դրծին: Թողունք Վարչութեան նիստերուն « անքերը նկարագրելը. նոյն իսկ ընդհ. Ժո- « ղովոյդ 55 ող. նիստին մէջ՝ որ 'ի 29 դեկտ. « 1872, Ս. Երուսաղէմ քաղաւ Կեանքերն « խնդրոյն առթիւ Ս. Պատրիարք հայրը Սահ- « մանադրութեան վարչ ունեցած ըմբռնումը « դարձեալ բացատրած է, և անոր շրջանակն « դուրս ելնելու կարծիքը դարձեալ պինդ բըռ- « նած, մինչև տեղի տուաւ ընդհանուր ժողովոյ

Վսեմ. Ատենագրութին զինքն յուզողութիւն « հրաւիրելու:

Փորձով և համոզմամբ կը յայտարարենք « թէ՛ գործադիր իշխանութիւնը, այն է Վարչ- « յութեան անգամը թէ իրենց մէջ և թէ ի- « րենց Նախագահին հետ եթէ տարակարծիք և « անհամաձայն ալ ըլլան, գործոց ուղղութեան « և տնօրէնութեան դէմ ելած խոչընդոտները « կրնան հարթել, ԵՐԲ ԱՄԵՆՔԵ ԱԼ ԼԱՒԱՍԱ- « ՐԱՌԵՍ ՕՐԻՆՍԱՏ ՀՊԱՏԱԿԻՆ. բայց երբ օրինաց « գործադրութեան կամ անգործադրութեան « վրայ խնդիր ծագի և անհամաձայն ըլլան, ըն- « թացքն անկարելի է:

Դէպերն այնպէս բերին որ Վարչութեան « զբաւեղանին վրայ այնչափ ծանրակելու խնդիր- « ներ կային, որոնց սխտածառու Ս. Պատրիարքը « չկրցաւ միւս անգամ այդ խնդիրն ինքնին ե- « րեան հանել. ուստի կամայ ակամայ կը հղա- « տակէր Վարչութեան որոշմանց:

Քաղաքական ժողովս գաւառաց մէջ « Սահմանադրութեան ըմբռնութեան յաճախելը « տեսնելով, որք մինչև իսկ տեղական կառա- « վարութեան միջոցաւ առ Բ. Գուռն գտնագա- « ներ կը տեղային, և Բ. Գուռնն ալ առ Պատ- « րիարքարանս. որոնք հանդերձ կրօնական ժո- « ղովով 'ի նիստ 24 յուլիս 1873, Բ. Գրան հետ « այս մասին բանակցել, առիթ բռնելով Եւդո- « կիոյ խնդրը, որոյ համար Բ. Գուռնն եկած « վերջին ծանուցագրոյն վրայ ընդարձակ պատաս- « խան մը խաղաղութեցաւ, օրինակը տես խառն « ժողովոյ համարատուութեան մէջ. որմէ Սահ- « մանադրութեան տիրող օրէնք ըլլալուն կամ « չըլլալուն խնդիրը երևան պիտի կէլար, և երկ- « րայն օրէնք իւրնը, որ այս կամ այն առթիւ Վար- « յութեան մէջ յերեան կուգար Բ. Գուռնն եկած « մէկ քանի ազդարարութեանց սխտածառու, « միտնգամ ընդ միշտ վերջ պիտի գտնէր: Եւ « այս յայտնութեամբ ոչ միայն գաւառաց մէջ « Սահմանադրական Վարչութեանց դէմ ելած « խոչընդոտները, այլ և նոյն իսկ Պոլսոյ մէջ « ժողովրդեան և Թաղական խորհրդոյ մէջ ե- « ղած յարաբերութեան անգիտութեամբ ծա- « դած դժտարութիւնները օլիտ բարձուէին, « 'ի հարկին կառավարութեան միջամտութեանը « դիմելով: Կամ 'ի հակառակ ելա՞ Վարչութիւնը « պիտի պարտաւորէր ընդհ. Ժողովոյդ անօրէ- « նութեանը դիմել:

Հարկ չկայ ըսել թէ այս կարևոր բանակցութիւնը՝ որ խնդրոյն փորձաբարը պիտի ըլլար, չսկսուած՝ Սահմանադրութիւնն անգործադրելի ցուցնելու համար ինչ միջոցներ ձեռք առնուեցան, որով Գաղաքական ժողովոյն հրաժեշտը վրայ եկաւ, անիկ ետքն ալ Խրթիւնեան Ս. Պատրիարքին հրաժեշտը . և նոր Տեղապահի ընտրութեան ատթիւ Բ. Դոնէն եկած հրամանագիրը՝ որ Սահմանադրութեան գործադրութիւնն որոշելի կը հրամայէր, ամէն կնճիւռ լուծեց և ալ՝ որ և է երկբայութեան ընաւ տեղի չի թողուց :

Երկու կուսք ալ վերաքննութեան խընդրոյն վրայ :

Սահմանադրութիւնը պէտք է գործադրել՝ ըսելը, Սահմանադրութիւնն անթերի է և վերաքննութեան կարօտ չէ՝ ըսել չէ : Վերաքննութիւնը ոչ թէ այժմ, այլ միշտ պիտոյց մ'է . վասն զի ժամանակը կը ծնանի այդ պիտոյցը և յառաջադիմութեան մէկ նշանն է :

Բայց վերաքննութեան համար բուսական փորձառութեան պէտք է . ինչպէս Սահմանադրութեան 99-րդ. յօդուածը կը տրամադրէ : Գաղաքական ժողովս չէր կրնար օրէնքը չգործադրելով անոր գործադրութիւնն անկարելի կամ դժուարին ցուցնել, կամ վերաքննութեան տակ է ըսելով՝ օրէնքէն ըստ կամու չեղիլ . այլ պարտաւոր էր օրէնքը ճշդիւ գործադրել, որպէս զի վերաքննութեան արժանի կէտերը փոքր-փոքր նշմարէ, և ոչ թէ երևակայական ըմբռնումը :

Այսպէս վերաքննութիւնը փորձառութեամբ ընկելու դրութեան հետեւելով, Վարչութեան Հրահանգները վերաքննութեան ենթարկուած են առանց սահմանելու ժամանակ ունենալու . երբ կեդրոնական վարչութիւն կամ Գաւառական վարչութիւնք ևն՝ որոնց համար որ նոյն Հրահանգները սահմանուած են, փոքր-փոքր դիտողութիւնն ունենան անոնց վրայ, և վերաքննութեան պիտոյքը երևան գայ :

Սահմանադրութեան վերաքննութեան համար փորձառութեան պէտքը նկատուած է արդէն : Վերաքննութեան պայմանելու ժամա-

նակն անցած, հետևաբար այս կապէն արձրուած ըլլալով, Ընդհանուր ժողովք քանի մը յօդուածոց վերաքննութիւնն փորձառութեամբ ստիպողական ճանցաւ և կատարեց, և յորձադրութեան դրաւ . Վերաքննիչ Յանձնաժողով մ'ալ անուանեց, որ փորձառութեամբ ստացուած դիտողութիւններով վերաքննութեան կարօտ կէտերը նկատողութեան առնու և զանոնք տեղեկագրէ առ Ընդհանուր ժողովք :

Վերաքննիչ Յանձնաժողովն՝ ինչպէս ամեն պաշտօնական մարմնոց՝ նոյնպէս և Գաղաքական ժողովոյս չրջաբերականաւ ծանուցած և վերաքննութեան մասին դիտողութիւնը խընդրած էր ժամանակին . ուստի Գաղաքական ժողովս՝ թէ և յետ հրաժարման, բայց փութաց այս մասին իր ունեցած փորձառութեամբ քանի մը դիտողութիւններ ներկայացընել Վերաքննիչ Յանձնաժողովոյ՝ հետեւեալ տեղեկագրով :

**Գերադասելի Սըբազան Նախագահ  
Սահմանադրութեան Վերաքննիչ Յանձնաժողովոյ**

Պատուարժան Վերաքննիչ Յանձնաժողովոյ յունիս 1 թուականաւ չրջաբերականը ժամանակին ստացած, և Գաղաքական ժողովոյ յունիս 16 ի նիստին մէջ նկատողութեան աննելով, անոր մէյմէկ օրինակը իւրաքանչիւր անդամոց ղրկուելին որոշած էր . որպէս զի իւրաքանչիւրն իր փորձառութեան արդիւնքը հաղորդէ, և ժողովն ալ ըստ այնմ իր դիտողութիւնը տեղեկագրէ Պատուարժան Յանձնաժողովոյդ, պայմանելու ժամանակին մէջ :

Հարկ չիկայ ըսել թէ, նոյն թուականէն քիչ ետքը Գաղաքական ժողովոյ հրաժեշտը վերայ հասաւ : Այժմ որ Յանձնաժողովք սկսած է իր պաշտօնը կատարել, Գաղաքական ժողովք թէ ևս հրաժարեալ՝ բայց իւր անգաղտն մանց կողմէն ստացած քանի մը դիտողութիւնները Յանձնաժողովոյդ ուշադրութեանը եւ քննութեանը կը ներկայացնէ :

Այս դիտողութեանց զլիստորը սա է թէ Սահմանադրութեան գործադրութիւնը դաւառաց մէջ նոր սկսուած ըլլալով, վերաքննութեան էական պայմանը համարուած փորձա-

ուսմանը պէտք եղածին չափ ստացուած չէ . բնականաբար որչափ Սահմանադրութեան գործադրութիւնը ընդարձակի դաւաճաց մէջ, նոյնչափ կարելի պիտի ըլլայ հետզհետէ շօշափել թերութիւն կամ դժուարութիւն, ինչ որ պատահի Սահմանադրական ընթացքի մէջ : Այս պատճառաւ պատշաճ կը նկատուի որ յաջորդ վերաքննութիւնը փոխանակ որչափ ժամանակի մէջ կատարելու, ընդ միշտ կատարուի . երբ Վարչութիւնը հետզհետէ իր փորձառութեամբը հարկ տեսնէ Սահմանադրութեան որ եւ է յօդուածին փոփոխութիւնը : Հետեւաբար կուտայարկենք, Սահմանադրութեան 99դ. յօդուածին մէջէն, որ վերաքննութեանը կը վերաբերի, պայմանեալ ժամանակը բաժնայ : Սոյն գիտողութեան հետ կը ըրծորենք նաեւ հետեւեալները :

Ա. Սահմանադրութեան 48դ. յօդուածին երկրորդ պարբերութիւնը կը տրամադրէ որ իւրաքանչիւր վանք իրեն համար յատուկ կուսնոնք ունենայ, եւ այս կանոնադրութիւնը ընդհանուր ժողովով վաւերանայ : Վանօրէից համար ընդհանուր կանոնադրութեան մը պէտք կայ, զոր Վարչութիւնը կրնայ պատրաստել եւ Քնդհանուր ժողովը վաւերացնել : Եւ իւրաքանչիւր վանքի Միաբանութիւն նոյն ընդհանուր կանոնադրութեան համաձայն կրնայ պատրաստել իր ներքին յատուկ կանոնադիր եւ Վարչութեան ներկայացնել ՚ի վաւերացումն :

Բ. Թաղական խորհրդոց պաշտօնավարութիւնը երկու տարւոյ վերածել :

Գ. Երեսփոխանները փոխանակ երկու տարին անգամ մը փոփոխութեան ենթակայ ընելու, ինչոք տարին անգամ մը կիսուակէս փոփոխել . այս կերպը անկի ղիւրադործադրելի կըլլայ Գաւառական Քնդհանուր ժողովոց համար :

Դ. Յայտնի է որ Սահմանադրութիւնը Քաղաքական ժողովոյ պաշտօնը քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնն ըլլալը գծելէ զատ, պաշտօն տուած է նաեւ չորս տեսուչ խորհուրդներ եւ երեք հոգաբարձութիւններ ընտրել (Գատառաստանական խորհուրդն եւ Առաջին հոգաբարձութիւնն ընտրելով Կորնական ժողովոյ գործակցութեամբը) : Այս ընտրական իրաւունքէն զատ պաշտօն տուած է « Տեսուչ « խորհրդոց կողմէն մատուցեալ ազդողութեան

« ասջարկութիւնները քննել, եւ ատենց կարելորդութիւնը յայտնուէնցն ետքը հաստատել « կամ գործադրութեան արգելքները բաժնապէս ջանք ընել » :

Ըսել է որ Քաղաքական ժողովը միայն Տեսուչ խորհուրդներն ընտրելու եւ անոնց մատուցած առաջարկութիւնները քննելու պաշտօնն ունի, եւ արդարեւ ալ Սահմանադրութեան 42դ. յօդուածը կը տրամադրէ որ, « Քաղաքական ժողովն իրեն եկած գործերը « որ խորհրդոյ վերաբերեալ ըլլան՝ քննուելու « համար այն խորհրդոյն կը յանձնէ . եւ մինչ « չեւ որ անոր կարծիքը չաճնու՝ չի կրնար « գործադրութեան ձեւնարկել . եւ թէպէտ « կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ « խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ու « բիշ անօրէնութիւն չի կրնար ընել նոյն նիւ « թին վրայ, եւ կը պարտաւորի դարձեալ նոյն « խորհրդոյն յանձնել գործը » :

Այս վիճակին մէջ պատասխանատուութեան չփոփոխելու եւ յարաբերութեան զբոսուարութիւն կայ . որոնք բացառութեան կարօտ ըլլալով, կը խոստանանք յատենի Գանձնատեղադրող կատարել, եթէ պէտք տեսնէք :

Արդ այս վիճակին գործումը ըլլալու համար, միջոց մը կատաղարկենք :

Նախ քննենք թէ ինչ են Տեսուչ խորհրդոց եւ հոգաբարձութեանց պաշտօնը :

Ուսումնական խորհուրդը դատարարութեան պաշտօնէութիւնն է ,

Տեստական խորհուրդը՝ կալուածոց եւ հաշուական գործողութեանց պաշտօնէութիւնը, Գատառաստանական խորհուրդը՝ դատական գործոց պաշտօնէութիւնը ,

Վանօրէից խորհուրդը վանօրէից տեսչութեան պաշտօնէութիւնը ,

Եւեւմոնից հոգաբարձութիւնը Կեդրոնական մատուկին, Կատակց հոգաբարձութիւնը Կոտակց անօրէնութեան, եւ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը արդային Հիւանդանոցի պաշտօնէութիւններն են :

Արդ ՚ի բաց առնունք Գատառաստանական խորհուրդը, Եւեւմոնից եւ Հիւանդանոցի հոգաբարձութիւնները, այս վերջին երկուքը մասնաւանդ մասնաւոր պաշտօնէութիւններ են . կը մնան Ուսումնական, Տեստական, Վանօրէից խորհուրդներ եւ Կատակց հոգաբարձութիւնն մը :

Ստոն պաշտօնն ալ երկուքի կը վերածուին :

1. Ուսումնական

2. Տնտեսական.

Վասն զի Վանօրէից խորհրդոյ, ազգային վանօրէից վրայ ունեցած տեսչութեանն մէկ մասը Ուսումնական եւ միւս մասը Տնտեսական է : Նոյնպէս Կասկաց հոգաբարձութիւնը բոլորովին Տնտեսական :

Հետեւաբար այս չորս պաշտօնէութիւնները կրնան երկուքի վերածուիլ, կամ լաւ եւս՝ մէկի : Վասն զի Ուսումնականն առանց Տնտեսականին գործակցութեան ապարդիւն է, եւ այս երկուքն իրարու հետ այնքան վերաբերութիւն ունին, մանաւանդ Ուսումնականը Տնտեսականին, որ առանց անոր չի կրնար ըլլալ :

Ուստի կառաջարկենք,

Ուսումնական, Տնտեսական, Վանօրէից խորհրդոց եւ Կասկաց հոգաբարձութեան տեղ մէկ Տեսուչ խորհուրդ մը կարգել :

Այս խորհուրդին պաշտօնն ըլլայ Ուսումնական տեսչութիւնը, ինչ որ Սահմանադրութեան 43դ. յօդուածը կը տրամադրէ, Տնտեսական տեսչութիւնը, ինչ որ Սահմանադրութեան 46դ. յօդուածը կը տրամադրէ, Վանօրէից տեսչութիւնը, ինչ որ Սահմանադրութեան 48դ. յօդուածը կը տրամադրէ, Կասկաց տեսչութիւնը, ինչ որ Սահմանադրութեան 30դ. յօդուածը կը տրամադրէ :

Սոյն Տեսուչ խորհուրդն ընտրուի Ընդհանուր ժողովէն, ըստ օրինակի Կրօնական եւ Քաղաքական ժողովոց : Երով Տեսուչ խորհուրդին ուղղակի եւ որոշ պատասխանատուութիւն կ'ստանանէ առ ընտրողն իւր, եւ յարաբերութեան դժուարութիւնն ինքնին կը բարձուի :

Այս կերպով Սահմանադրութեան մէջ ալ մեծ փոփոխութիւն մ'ընկելու հարկ չկայ : Դի Սահմանադրութեան 45, 46, 48, եւ 30 դդ. յօդուածները նոյնութեամբ պիտի մնան, ՚ի բաց առեալ 45, 46, եւ 30 դդ. յօդուածոց առաջին պարբերութիւնները, եւ 48 դդ. ինչ ութ երկրորդ պարբերութիւնը, որ իրենց ընտրութեան հանդամանքն ըլլալով պիտի բարձուին. նոյնպէս եւ 44 դդ. յօդուածը ամբողջ պիտի բարձուի, եւ անոր տեղ միայն մէկ յօդուած պիտի աւելնայ, այն է,

« Տեսուչ խորհուրդը Ընդհանուր ժողովոյ

« մէջ կ'ընտրուի, որոյ պաշտօնն է ազգին եւ « սուսնական, Տնտեսական, Վանական եւ « Կասկաց տեսչութիւնն ընել » :

Տեսուչ խորհուրդն իր պաշտօնին բնութեամբ պիտի ընարէ. Երեւմտից եւ Հիւսնոզանցի հոգաբարձութիւնները, եւ պիտի հսկէ ասոնց վրայ եւ որոշեալ ժամանակներ եւ ՚ի հարկին համար պիտի պահանջէ :

Հետեւաբար Սահմանադրութեան մէջ Քաղաքական ժողովոյ ընդ Տեսուչ խորհուրդն եւ հոգաբարձութիւնն ունեցած յարաբերութեան մասերը պիտի բարձուին, եւ միայն ընդ Գատաստանական խորհրդոց յարաբերութեան մասը պիտի մնայ :

Ըստ այսմ Քաղաքական ժողովոյ վերաբերեալ այն մասերը՝ որ Սահմանադրութեան մէջ տեղ տեղ տրամադրուած են, եւ այժմ նոյն մասերը Տեսուչ խորհրդոյ պիտի վերածուին, փոփոխութեան կարտա պիտի ըլլան :

Սահմանադրութեան գործադրութիւնը որ թէ եւ Քաղաքական ժողովոյ պաշտօնն է, բայց այն եւս Տեսուչ խորհրդին աւելի կը պատկանի, զի ազատաբաղկութեան, անտեսութեան եւ այլ ազգային կենսական խնդրոց տնօրէնութիւնը Սահմանադրութեան գործադրութեան հետ սերտ առնչութիւն ունին :

Իսկ Քաղաքական ժողովոյ կը մնայ զուտ քաղաքական գործոց տեսչութիւնը, ինչպէս է Կրօնական ժողովինը՝ զուտ կրօնական գործոց տեսչութիւնը, եւ խառն գործոց տեսչութիւնը՝ այս երկուքին, կամ Տեսուչ խորհրդին հետ եւս կազմեալ Խառն ժողովոյ : Ինչպէս են Առաջնորդի եւ Գաւառական Ընդհանուր ժողովոց եւ վանահարց վաւերացման եւ պաշտօնանկութեան խնդիրները, որ երեքին միանգամայն կը պատչանին : Իսկ Գաւառական Կրօնական ժողովոյ վաւերացում եւ պաշտօնանկութեան Կեդրոնական Կրօնական ժողովին, Գաւառական Քաղաքական ժողովինը՝ Կեդրոնական Քաղաքական ժողովին, Գաւառական Տեսուչ խորհրդից եւ Վանօրէիցը՝ Կեդրոնական Տեսուչ խորհրդին կը պատկանին, ինչպէս նաեւ համարատուութիւննին :

Մայրաքաղաքի Թաղական խորհրդոց ընտրութեանց վաւերացում եւ պաշտօնանկութիւն, ուսումնական եւ անտեսական եւ այլ ներքին գործը մասին տեսչութիւնը պիտի

վերաբերի Կեդրոնական Տեսուչ Խորհրդին . այսօրէս նաև Գաւառական Թաղական խորհուրդք իւրաքանչիւրն իր գաւառին Տեսուչ Խորհրդին հետ յարաբերութիւն պիտի ունենան եւ համարատու ըլլան : Ի բաց առեալ Թաղական խորհրդոց պաշտօնին այն մասը , որ կի՛ն կրօնական է՝ Կրօնական ժողովոյ , եւ կի՛ն քաղաքական յարաբերութեան եւ դատական խնդրոց փը վերաբերի՝ Գաղաքական ժողովոյ հետ յարաբերութիւն պիտի ունենան եւ համարատու ըլլան :

Իսկ Դատաստանական խորհրդոյ ընտրութիւնն ըստ առաջնոյն պիտի վերաբերի Կրօնական եւ Քաղաքական ժողովոց : Եւ Տեսուչ խորհուրդք ընաւ այս մասին վերաբերութիւն պիտի չունենայ , մինչև իսկ իր իրաւաստութեան ենթարկեալ Հոգաբարձութեանց եւ Թաղական խորհրդոց եւն . մէջ ծագած խնդիրներն երբ իրաւախոնութեան սահմանէն դուրս ելնեն եւ վէճի կերպարանք առնուն , եւ դատասանի հարկ տեսուի , ինք դատուել չի պիտի միջամտէ , այլ պիտի զրկէ Քաղաքական ժողովոյ կամ Կրօնական ժողովոյ , որու որ կը պատշաճի . եւ ասոնք ալ կամ իրենք կը տեսնեն եւ կամ Դատաստանական խորհրդոյ կը յանձնեն : Բայց այս կարգի դատերուն վճռոյն համար կան խաւ Տեսուչ խորհրդոյ կարծիքը պիտի առնուի . եւ ապա վճիռը տրուի : Թէ այս եւ թէ այլ ամէն պարագայի մէջ կի՛ն անհամաձայնութիւն ծագի Տեսուչ խորհրդոյ եւ Կրօնական եւ կամ Քաղաքական ժողովոց մէջ , Սահմանադրութեան 88-րդ յօդուածին ուժովը Ընդհանուր ժողովոյ իրաւարարութեան կենթարկուին :

Ըստ այսմ դատական գործոց մասին՝ Ի բաց առեալ առանձին Կրօնական ժողովոյ իրաւաստութեան ենթարկեալ դատերը , Քաղաքական ժողովոյ իրաւաստութեանը ենթարկեալ պիտի ըլլան ոչ միայն ընտանեկան վէճերը եւ Բ . Դռնէն յանձնարարեալ դատերը , այլ եւ ազգային Հոգաբարձութեանց եւ Թաղական խորհրդոց մէջ ծագած վէճերը , ժողովրդեան եւ ասոնց մէջ երեւան ելած խնդիրները , ընտրական գործողութիւններէ ծագած կի՛ններն եւ յուզումնները , են :

Այս կերպով Քաղաքական ժողովը ազգին քաղաքական գործոց ընդհանուր տեսչութեանը եւ արտաքին յարաբերութեանց պաշ-

տօնին հետ կը վարէ նաև Դատական գործոց ընդհանուր տեսչութիւնը , որոնք իր պաշտօնին ալ կը համաձայնին . զի ասոնք Բ . Դրան հետ բանակցութեան եւ անոր միջամտութեանը կարօտ գործեր են :

Հետեւաբար կ'ունենանք ,


1. Կրօնական ժողով մը՝ Կրօնական գործոց պաշտօնէութիւն .
2. Քաղաքական ժողով մը՝ արտաքին եւ դատական գործոց պաշտօնէութիւն .
3. Տեսուչ խորհուրդ մը՝ ներքին գործոց պաշտօնէութիւն .

Երևին ալ համազօր իշխանութեամբ կարգեալ Ընդհանուր ժողովէն , ընդ նախագահութեամբ Ս . Պատրիարքի . եւ Կրօնական ու Քաղաքական ժողովները միայն վաւերացեալ Բ . Դռնէն , իրրեւ անոր հետ յարաբերութիւն ունեցող պաշտօնէութիւններ :

Ահա այս քանի մը զիտողութիւններն են , որ պատշաճ կը համարիմք Պատուարժան Յանձնաժողովոյ ուշադրութեանը եւ զննութեանը ներկայացնել :

5 Փետրվար 1874

Ի խորհրդարան Ղալաթիոյ



Գ .

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԱՐՆԵՐՈՒԹԻՒՆ

Քաղաքական ժողովոյ Խաթիթի Հիւմա յուններով մեր Ազգին վաշխեած առանձնաշընորսութեանց եւ արտօնութեանց եւ նոյն իսկ Սահմանադրութեան համաձայն , մտադրութիւն եւ փոյթ ունեցաւ բարեխնամ Կառավարութեան Հայրական պաշտպանութեանն՝ ու խնամողը կարօտ ազգային խնդիրները Թաղրիով ներկայացնել Բ . Դրան : այս մասին ուզեցոյց ունենալով արքունի օրինադրքը՝ Տիւսթուր :

Թէպէտեւ Բարձր . Միտնաթ բաւայի Աեծեպտրղոսութեան միջոցին՝ Վ . Պելիկիճի պէ-

յէն բերանացի պատուէր ընդունեցաւ ինչպէս որ ըրէ ազգաց՝ նոյնպէս և մեր Պատրիարքաւ ընդ ըստ թաղաքական գործաց վրայ թագրիւր չընեցու . բայց այս մասին Պատրիարքարանին կողմանէ ալ թէ բերանացի բանակցութեամբ բացատրութիւն չենդրուեցաւ Վ . Պէյլիկճի պէչէն և թէ՛ հարկ եղած խնդրոց վրայ սու վերական կերպիւ թագրիւրները շարունակուեցան : Միւս կողմէն այն ինչ պատրաստութիւն կար ըստ աղքարարութեան Պէյլիկճի պէյի՛ ուղղակի բանակցել Մեծեպարտոսն հետ , նորա պաշտօնանկութիւնը վրայ հասաւ : Անկէ ետքն ալ ըստ առաջնոյն թագրիւրները կը շարունակուէին : Իսկ Քլիի խնդրոյն վրայ ետքէն ընդունուած թ . Գրան մէկ հրամանագիրը , որոյ օրինակը յետոյ պիտի տեսնուի , այս մասին թագրիւր ընելու Պատրիարքարանին իրաւունք ունենալը հաստատած էր : Նոյնպէս յետոյ Դուշուշանի խնդրոյն մէջ , երբ Դուշուշանցի աղերսագիր տուած էին Վեհ . Սուլթանին , Մեծեպարտոսն յատկապէս կոչելով Քափու քէշեասի Էֆէնտին , Դուշուշանցւոց կրած հարստահարութեանց վրայ Պատրիարքարանին ունեցած տեղեկութիւններէն ամբողջ նկարագրող թագրիւր մ՛ ուղեց , զոր Քաղաքական ժողովս պատրաստեց ՚ի նիստ 11 յունիս 1873, ու զրկեց առ Բ . Գուռն :

Ըստ Ներքին կանոնադրի , Գլխաւորապէս հաւանութեամբ Ս . Պատրիարքի այլ և այլ խնդրոց վրայ թագրիւրներ ընելէն զատ , հարստահարութեան վերաբերեալ հետեւեալ խնդրոց վրայ ալ թագրիւր պատրաստած և Քաղաքական ժողովոյս Առեկապետին հասնութիւնն առնելէն յետոյ մատուցուած են առ Բ . Գուռն :

1 . Սրղընի Մատնի՛ ըստքն ճանապարհի շինութեանց առթիւ ժողովորդը հակառակ Տէրութեան օրինաց ձրի աշխատուելուն և որոշեալ օրէն և ժամէն հետի տեղեր տարուելուն համար գանդատանաց թագրիւր գրուեցան : 5 Օգոստոս 1872 .

2 . Կապին Գարահիւսարի Ալամէլիի զիւղի Գերա՛ մերձակայ զիւղի Տաճիկ բնակիչները իւրաւորեցած ըլլալուն թագրիւր գրուեցաւ : 5 Օգոստոս 1872 .

3 . Մաշէն Գասթամոնի աքերեալ հա-

րթառահարի քրթթ՛ Ծարիս և և իւր եղբարքը , վերապիս Մուշ դարձած և և իրենց հայրատանաւ թութիւնը առաջընէ առկի ՚ի գործ դրած ըլլալուն համար Մուշէն հետաքննելու խնդրանօք թագրիւր : 18 Օգոստոս 1872 .

4 . Բաբեքրու Բուսի՛ զիւղի բնակիչներէն Հայ օրերդի մը Մանէտականութեան խնդրոյն առթիւ Բաբեքրու Տաճկաց Հայոց դէմ ըրած յարձակման և զանազան բռնութեանց դէմ գանգատանաց թագրիւր : 24 Օգոստոս 1872 .

5 . Սերաստիոյ Եար հիւսար և և որիչ զիւղորէից մէջ Աէրքէզ գաղթականները բնակութիւն հաստատելով զիւղացւոց արտերէն աւանց տեղ տրուած ըլլալուն թագրիւր : 27 Սեպտեմբեր 1872 .

6 . Կեսարիոյ զիւղորէից մէջ Տաճիկը և Աէրքէզը Հայոց դէմ բռնութիւններ ՚ի գործ գնելով հարստահարելուն համար գանգատանաց թագրիւր : 30 Սեպտեմբեր 1872 .

7 . Տիգրանակերտի Սասուն գաւառը և և չրջակաները Պէյի օւլու Սիւս և և իւր արքանեկաց ի գործ դրած հարստահարութեանց դէմ թագրիւր : 30 Սեպտեմբեր 1872 .

8 . Տիգրանակերտի Սաթը զիւղի արտօրայքը Մուսթէհա հանրմ առուն Տաճիկ կին մը իմ հօրեանական ժառանգութիւնս է ըսելով իր վրայ թափու ըրած և զիւղացի Հայերը առանց արտի մնացած ըլլալուն վրայօք թագրիւր : 9 Հոկտեմբեր 1872 .

9 . Կարնոյ մէջ սպանեալ Պատրիարքան Խաչատուր Էֆէնտինն սպանիլը գտնալու և պատժելու խնդրանօք թագրիւր : 14 Հոկտեմբեր 1872 .

10 . Վանայ Նարեկայ վանուց Չաղացը կողոպտուելուն և Չաղացանը սպաննուած ըլլալուն վրայօք թագրիւր : 1 Նոյեմբեր 1872 .

11 . Սերաստիոյ Եար հիւսար և և Մանեքները սնուն զիւղորէից Հայոց արտերէն Աէրքէսներուն արհու՛ տեղերուն նկատմամբ մատուցուած Եօկորդ թագրիւրը կրկնուեցաւ : 8 Նոյեմբեր 1872 .

12 . Բաբեքրու քնդրոյն նկատմամբ կրկին թագրիւր : 8 Նոյեմբեր 1872 .

13 . Սայ վանքէն փողոպտուած անօթ և աչիս երեսան հանելու և վանքին յանձնուելու խնդրանօք թագրիւր : 9 Նոյեմբեր 1872 .



13. Եսկի շէնիբի մէջ Քրիստոսէից դէմ Տանկիներէն ոմանց 'ի գործ դրած անարդանաց թշնամանաց եւ բռնութեանց դէմ դանդաւատանաց թաղբիր մատուցուեցաւ : տեղւոյն Հայոց եւ Յունաց մարանական մահղէրազրութիւնը մէկ տեղ սայով : 27 Նոյեմբեր 1872 :

15. Փահասի մէջ ( Ատանայի կուսակալութեան տակ ) Կատարարութեան ապարանքին շինութեան գտածառու եւ ուրիշ առիթներով էնդդէմ կամաց Վարիճանով Տէրութեան Հայոց կրած նիզուցեանց դէմ Քաղբիր : 29 Նոյեմբեր 1872 :

16. Ազշէնիբի մէջ ( Գօնեայի կուսակալութեան տակ ) Հայոց ննկեղեայներ եկեղեցի եւ անկից գերեզմանատուն փոխադրուելու միջոցին, Տանկի սրիկայից ըրած անարդանաց դէմ դանդաւատանաց թաղբիր մատուցուեցաւ : 7 Մարտ 1873 :

17. Աֆիօն Գարահասրի մէջ ( Պրուսայի կուսակալութեան տակ ) Տանկի սրիկայից Քըրիստոսէիութեան դէմ ըրած անարդանաց վրայօք բողոքոյ թաղբիր գրուեցաւ : 23 Ապրիլ 1873 :

18. Սըղբրահի մէջ Հոմէական Ասորի մը սպաննուած ըլլալով եւ մարդասպանը չը գտնուելով սպաննուողին արեան դիմը տեղւոյն ժողովրդէն պահանջուեր է, ասոր արգելուալի խնդրելով թաղբիր մատուցուեցաւ : 25 Ապրիլ 1873 :

19. Հայեպու մէջ աղգային գերեզմանատան կից աղգային կալուած գետին մը օտարները գրաւելու ելեր քն եւ տեղական Կատարարութիւնը անհոյժ կեցեր է մեր իրաւունքը պաշտպանելու : թաղբիր մատուցուած է : 16 Յունիս 1873 :

Իսկ Քանդաքական Մողոքոյ որդմամբ թաղբիր գրուած են Չարսանճախի, Քղիի, Ղուզուջանի վնդածանօթ լեռքոց վրայ : որոց պատճէնն ահաւաստի :

Տիրապէթի Վիլայեթիմտէ Չարսանճաղ գաղստանն միութէ վիթթիս Նրմէնի միլլէթի էֆրասըրը : Էպոս անճէտտին միւթշարրըֆ

օլտըզլարը խանէ վէ պաղ վէ պաղճէ վէ թարլալըրին թէպատի միւսլումէտէն քէօյ աղալըրի գալիթ իթմէք տայիէսի իլէ էրմէնի միլլէթի էֆրաստըր միւսլէթըր կիպի գուլանալըրազ վիրու վէ սայրէն թալէպ օլունարազ իրաճ վէ թաղիք իլէ կէլթիլըրիտէն 12 սէնէտէն պէրու կէրէք էֆրատի մէրուլմէտէն թողրուտան թօլրույա հիւրիւմէթի մահալլէթէ վէ կէրէք Պաթիլըրիմիթ թարաֆըրուտան ճանիլի Պապը Ալլիլէ վուգու պուլան շէքեայթ վէ իտտաա իւղիլինէ կէչէն պին իքի իւզ սէքսէն պէշ սէնէսինտէ Շուրայի Տէվլէթտէ ինրա գըլընան թէտգիգաթտէն մէրգուման քէօյ աղալըրիին իտտասը վուրի վէ պի էսաս օլտուըր թէպէլլիէն իտէրքէ բէլաֆիլէթ հալլ վէ թէպիլլէ օլունմուշ վէ օլ պապտէ թանցիմ օլունան մաղպաթա իւղիլինէ Իրատէլի սէնիլիէ հաղբիթի Փատիլանի շէրէֆ սուտուր պուլըրլարազ' մանթուըր միւսիլթի վէճէլէ ինպարըն ինրասը զըմընտա վիլայեթի միւլարիլէյնայէ միւթէտտոթո էվալիլնամէկ սամի պաս վէ թէպիլըր զըլընմըր իտէ տէ, մէրգուման աղալըրին թէտանիւտ վէ մուսալլիֆիթի ճիէթի իլէ քէՆֆիլէթ մէր նաըլլ իտէ մուղայիթի նիլամ թէթէքրար Շուրայի Տէվլէթէ գօնուլարազ վէ գարաըր սաղըգտան վէ իրատէլի սէնիլէտէն ռալա պահս օլունմայալրազ : քէՆֆիլէթի մահալլինէ պիտանէթէն Ֆիսալ վէ բույէթիին գարար վէրիլմըր տիք : Հալ պու թէ միւտայիլըր մահալլինէ թիւնէֆիլիւզ էֆիթրիւտ իթմիլ աղվաթտան վէ պիլ աըն իրիսթիան էհալի իտէ ֆուգարէ վէ իւնչէտէն պուլունմուշ օլտըզլարընտան' քէյաֆիլէթի պիտայեթէն բույէթի էօլունա կիտիլիկի հայտէ 10—12 սէնէտէն պէրու տէվամ իտուպ էրմէնի միլլէթի էֆրաստըր մաղտուր վէ քերիլան իտէն մէվատտի միւնաղիմֆիլիա առհա խայլի սէնիլէր սիւրէնճէմէտէ գալարազ պիւսպիթիլին խարապ օլանաղլարը տէրքետր պուլունմուղընտան իրատէլի սէնիլէնիլն թաղայիթ աճեհամըն իմա իտէր սայիլ պիլը գաիրարն գապուլ օլունմանեաալըր սրգու պէյան էլէ էլմէնի միլլէթի էֆրաստըր վիւղայէ վէ էրմայէ պուլըրմաըն իտաղ վէ իսթիլտա օլունմուշ իտէտէ : Երէն քէմաքեան պիւչարէ էհալի հէգարը գահմէթ վէ մէլազաթիլէ պիլնա վէ իմար իթմիլ օլտուըր խանէ վէ պաղ

վէ պագղէ վէ թարլաքընտան թարա վէ տէֆ  
 օլունմագտէ պուլունմուչ օլուուղընտան , իմա-  
 պի աալ ու հազգանիյէթիին ինքասի զըննընտա  
 սուրէթի մէրպուլթէն թագախմի խազիփայի  
 ալիի ճէնապի վէքեալթիփէնանչիլէրի զըլընան  
 ճարայի Տէվլէթ մազպաթասընըն վէվգիլի իմ-  
 րայէ գօծուլարագ ինգագի հաջ օլունմասը  
 խուսուքըն միւսաստէի ճէվլէի հազրէթի սա-  
 տորէթիփէնանչիլէրի պիտիլըն վէ մչպզուլ  
 պուլըլընագ նիազի պասընտա վէ հէր հալտէ  
 էմր ու Ֆէրման հազրէթի մինչհիւլ էմրին  
 տիր :

1289 ճէմազիլ ախըր 13 :  
 1872 օգոստոս 5 :

Էրզրուի միլայէթի տախիլինտէ Էրզին-  
 ճան սանճաղը իլէ Քղի գազասընտա վէ հէ-  
 վալիսինտէ միւթէվէթթիին Էրմէնի միւլէթի  
 հազգընտա էֆալի պաղըքանէ վէ իթխաֆի-  
 յէլէրի վէ նիլէ նիլէ զուլմ ու թէստտիլէրի  
 միւսպէթ օլուն Գուգնան գայմադամը Շահ  
 շիւսէլին օղլու շիւսէլին պէյ միւթէ-  
 ալիգաթընըն վէ Նիւլլապ օղլու Աղիլին վէ  
 Քղի տէրէպէյլէրինին զուլմ ու թէստտիլէրի  
 մէյ իլէ էմնիլէթի էհալիլին թէմալի իս-  
 թիհապ ու իսթիքամիլինէ տայիլ Շուրայի Տէվ-  
 լէթ գարարը ալիսի իլէ թէսթիլը վէ իրալ  
 պուլըլիան էմիրնամլի սամի անքեամընա  
 թէվիթիլ հարաքէթ օլունմատըրը վէ ազտլմ  
 լէրի ինրա օլունուպ ստէթա պիր կէօսթէրիչ  
 նէվիլնտէն պուլունան մուհաքէմաթիլէ իթթի-  
 ֆա օլունարագ միլը ու վէթանէ աղիմ զա-  
 րար ու իւրյանէթլէրի տէրքեար օլան էչխասի  
 զալմն հազգընտա պիր մուճիլի գարարը ալի  
 պիր կէօնա մուսմէլէի մուզթագիլ ինրա օ-  
 լունմատըրտան պաղապ մաղլու մ վէ մաղտուր  
 էհալի միւթիթէրի սըրասընա գօծըլըր սըր :  
 Արզ ու պէյանէ հանէթ օլմաըրը իւզղէ՝ է-  
 հալիի մէրգու մէ գուլլէրի թարաֆընտան  
 խայլի սէնէլէրտէն պէրու տօղրուտան տօղ-  
 րուեա մահալիլ հիւքիւմէթիլնէ վէ պաթրիգ-  
 րաննէմիլ զասէթաը իլէ ճանիպի պապը Ա-  
 լլէվ վաղը օլան շիգեաեաթ վէ միւսթիտիեաթ  
 իւզղրիննէ զուլմ ու թէստտի տէֆ վէ իլզալ  
 օլունմայարագ պու աարի ստալէթ հասրի  
 հազրէթի փատըլախտէ մուզպլիլի տիլմասի

ալի էլան էկըլու էկըրինտէ գարմագտէ վէ քէ-  
Կերտանէն Մտառ : Ելլեմտից Հոգաբարձութիւնն աւշ հաստատուած ըլլալով , Կեդր . անտուկին մատակարարութեան պաշտօնը կը վարէր Տեսչական խորհուրդը :

Այս մասին Տեսչական խորհրդէն հետզհետէ ընդունուած տեղեկարոց համաձայն՝ Քաղաքական ժողովս Կեդրոնական անտուկին նկատմամբ քանի մը որոշումներ ըրաւ .

1. Փանչէլէրի եւ Մուգաթայի յաւելումները , որ նախորդ Տեսչական խորհրդոյ միջոցաւ կատարուած էին , զեղչեց , եւ ինչ որ էին յաւաք՝ նոյնութեամբ պահել որոշեց :
2. Կեդրոնական ուղղակի արոց թերհաշիւ առնուած 75 եւ 25 զուրուշի հաւարման գործողութիւնը վերահաստատեց ,
3. Քոմսոնակ միայն Պատրիարքարանի մէջ գործող կանղներէն այս թերհաշիւ տուրքըն հաւաքելու , յատուկ հաւաքել որոշեց :



գուրմէն ալ հաւաքելու, 20 առ 0<sup>1</sup> հաւաքչին տարւա պայմանաւ :

4. Հետզհետէ զեղչեց ամսական ծախքէն 3850 զուրուշի չափ գումար մը, և աւելցուց 4610 զուրուշի ամսական գումար մը, որոյ մէջ են նախորդ Տեղապահ Տ. Արխատկէս Արքազանի յատկացած 700 զուրուշ ամսականը, և Սեթեան Յովհաննէս Արքազանի յատկացած 240 զուրուշի ամսականը :

Քաղաքական ժողովս չի կրցաւ, ինչպէս որ պարսն էր, կեդրոնական սնտուկին վիճակին վրայ դադարէլ : Իսկզբան եկամուտ և ծախք հաւասարակութիւն ունենալով, և ինքն ալ գաւառաց մէջ Սահմանադրութիւնը գործադրելու և յարուցեալ քանի մը ազգային ծանօթակիւս խնդրոց դրաւելուն պատճառաւ չի կրցաւ կեդրոնական սնտուկին վրայ խորհիլ : Բայց երբ ասոնք ըստ մասին թեթևացան, երբ վարչական մեքենային շողին համարուած դրամին պիտոյղը և զայն հայթայթելու միջոցները նկատողութեան առնուլ ուղեց, փութաց նախ Ելեմտից հոգաբարձութիւնը կարգել ըստ Սահմանադրութեան :

Յաւելով իրենք թէ 4873 յունվար 11 ին սկուտած այս ընտրութիւնը հաջի նոյն տարուոյ յունիս 30 ին կրցանք աւարտել : և մինչդեռ ըստ օրինի մայիս 1 ին հաշուեցոյցին և հաշուեկիւնին գալուն կըսպասէինք, հաղիւ կրցանք քանոնք ստանալ յունիս 30 ին :

Հաշուեցոյցին ուշանալուն պատճառ Պատրիարքական ամսականաց խնդիրն էր, որն որ Ս. Պատրիարքն յարուցած էր հակառակ նախորդ որոշմանց և կեդրոնական տուժարաց մէջ երեք տարիէ հետէ գործադրուած եղանակն : Այս ամսականաց խնդիրը պատճառ եղաւ Պատրիարքի և Քաղաքական ժողովոյ մէջ վերջին անգամին ծաղած անհամաձայնութեանը : ասոր վրայ հասնելով Ելեմտից հոգաբարձութեան կազմութիւնն, և Հաշուեցոյցին քննութեան և հաշուեկիւնին տնօրէնութեան ձեռնարկելու դիտաւորութիւննիս, այն ատեն իրերը բողոքովին կերպարանափոխ եղան, և հրաժարեցանք օգոստոս 3 ին, որոյ պատճառութիւնը տեղն 'ի տեղը կը տեսնուի Քաղաքական ժողովոյս Ինժեպարի Բացատրութեան տետրին մէջ :

Ահա այս պատճառաւ ոչ ժամանակ ու-

նեցանք սնտուկին հաշուեցոյցը քննելու, ոչ յաջորդ տարուան հաշուեկիւնը (պիւտճէն) պատրաստելու և Ուսումնական խորհրդոյ ազգային լեւելով զաստիարակութեան պիտուցից գումար մը յատկացնել և վճարել տարու, ոչ ուղղակի արոց հաստատութեան մասին և ոչ պարզեւուոր վիճակահանութեան մը վրայ տեղեկագիրներ պատրաստելու և բերելու առ ընդհանուր ժողովը : որոնք Քաղաքական ժողովոյս ուշադրութեան աւարկայ եղած էին :

Սակայն Քաղաքական ժողովս փորձառութեամբ կը յայտարարէ թէ, հաշուեկիւնը (պիւտճէն) ընդհանուր ժողովը վաւերանալու մեծապէս պէտք կայ, ինչպէս որ Սահմանադրութիւնն ալ կը տրամադրէ : Այս կերպով ոչ միայն կեդրոնական սնտուկին վիճակը ապահովութեան տակ կ'առնուի, և Քաղաքական ժողովը տարժանելի դրաւմունքէ մը կ'ազատի : այլ ժողովրդեան վստահութեանը կ'արժանանայ, և ազգօգուտ ձեռնարկութեանց ալ կարելի կ'ըլլայ նկատուի : մինչդեռ այժմեան ընթացքնին մէջ, որչափ սնտուկին վիճակը բարձրի և ջրամը առատանայ, այնչափ բարձր պաշտօնաւորներն իրենց առ սակակող աւելցնել տալու և այլ և այլ արտաքոյ կարգել աւելցնել տալու փոյթ պիտի տանին : որով միայն թղթի վրայ սահմանուած պիտի մնան ազգօգուտ ձեռնարկութեանց համար այլեայլ գումարները, և 'ի զուր Ուսումնական խորհուրդն ալ պիտի աղաղակէ թէ չ գաստիարակութեան խնդիրը դրամի խնց դիր է ք :

Հանգանակութիւն Պարտոց : Ս. Պատրիարք հօր ձեռք հանդանակութիւն մը բացուած և յատուկ Յանձնաժողովի մը միջոցաւ ազգային պարտոց վճարուած եղած ըլլալով, նոյն Յանձնաժողովը իր տեղեկագիրը հրատարակեց : Յետոյ Ս. Պատրիարքը առանձին իր ձեռքը վճարեալ պարտոց տեղեկագիրն ալ հրատարակեց :

Քաղաքական ժողովս 1873 մայիս 15 ի նիստին մէջ սոյն երկու տեղեկագիրները նկատողութեան առնելով, մնացեալ պարտոց վճարման մասին վերջնական հանդանակութեան մը դիմելէ առաջ հարկ տեսաւ յիշեալ

երկու տեղեկազերը Տնտեսական խորհրդոյ քննութեանն ու գիտողութեանը յանձնել, խնդրելով որ հանուած տոմսակաց թիւն ու որքանութիւնը գտնելով, ցրուեալ տոմսակեւորը ժողով, հաւաքելի ստակ կայ նէ՛ հաւաքէ, պատրաստ տոմսակեւորը դանձէ և պարտուց մնացորդն ստուգելով տեղեկազրէ :

Տնտեսական խորհուրդն այս մասին հետեւեալ տեղեկազիրը մատուց Բաղաբական ժողովոյս :

**Ամենապատիւ Արքայան Հայր**  
Նախարահ Աղայային Վարչութեան  
Բաղաբական ժողովոյ

« Տնտեսական խորհուրդն ստացաւ Ձեր « Արքայութեան 736 համար պաշտօնազիրն « եւ ընդ նմին հին պարտուց համար բացուած « հանգանակութեան հաշուոց երկրորդ տեղեկա- « ղիրը, ինչպէս նաև առաջին տեղեկազիրն « ալ ստացած էր յառաջագոյն : Սոյն առաջին « տեղեկազիրն վրայ Տնտեսական խորհուրդն « իւր քննութիւնը կատարած եւ վճարմանց օ- « թինաւորութիւնն ստուգելէ ետև՝ պէտք ե- « ղած արձանագրական գործողութիւններն « Կեդրոնական հաշուետումարաց մէջ կատա- « բած էր ըստ օրինի . այս անգամ նաև երկ- « րորդ տեղեկազիրն ալ 'ի քնին ստելով տե- « սաւ որ կատարուած գրամական վճարքներն կը « պատասխանեն Պատրիարքարանի հաշուետու- « մարաց, ի բաց առեալ Ա. Յ. աղայի եղած 42000 « դուրուչի պարտքի մը վճարումը, որ Կեդրո- « նական սնտուղի պահանջատեարց միակ եւ օ- « թինաւոր հաշուետումարին մէջ կ'այ նըշա- « նակուած, թէ եւ Ա. Յ. աղայն հին պարտա- « ղիւր մ'ունի 'ի ձեռին, եւ այսպիսի պարտքի « մը հետքը կը նշմարուի հին հաշուետումարի « մը մէջ : Այս պատճառաւ Տնտեսական խոր- « հուրդն սոյն վճարման գործողութիւնը մեկու- « օթիթողով Կեդրոնական հաշուետումարներէն « մինս գործողութեանց արձանագրութիւնը « կատարեց, եւ արժան դատեց Ա. Յ. աղայի « պարտուց մասին Պատկառելի Ժողովոյդ որո- « չումը խնդրել : Իսկ թէ Հանգանակութեան « համար որքան տոմսակ հանուած եւ ցրուած « են, եւ թէ որքան կան մնացորդ կամ աւեւ « լորդ այս ու այն անձանց ձեռքը՝ հակնալու :

« հետեւապէս մնացորդներն հաւաքելու եւ ա- « նոնց թուոյն որքանութիւնը ստուգելու հա- « մար, Տնտեսական խորհուրդն կը կարծու- « ք Ձեր Արքայութեան սուլիք տեղեկութեանց « եւ ծանօթութեանց, եւ զանանք ստանալ « ետև՝ կրնայ այս մասին պէտք եղածը տօ- « թինել : Հանգանակութեան հաշուոց մասին « Տնտեսական խորհուրդն այսքան գիտողու- « թիւն ընելէ ետև՝ կը փութայ յայտարարել « որ թէ՛ Պարտուց բարձման Յանձնաժողովոյ « եւ թէ՛ Ձեր Արքայութեան միջոցաւ հին « պարտուց համար 440093 դուրուչ վճարուե- « լէ ետև՝ տակաւին Կեդրոնական սնտուղի « հին պարտքը կը մնայ 542460 դուրուչ, եւ ա- « նելիքը զանազաններէ 706470 դուրուչ, որոց « մանրամասն յայտաղիրը Տնտեսական խորհուր- « դըն արդէն մատուցած է Պատկառելի ժողո- « վոյդ :

2 Յունիս 1873 Մտածը յարգանք  
Համար 181, Ի Կիւմաց Տնտ. Խորհրդոյ  
Փ. Առեհաղայիր Առեհապետ  
(Կիւք) Միհրան Մ. Չօպանեան Ա. Թորոնեան

Բաղաբական ժողովս յունիս 16 թ նիս- տին մէջ սոյն տեղեկազիրը նկատողութեան առելով, և Ս. Պատրիարք հօր բացարու- թեանցը վրայ՝ որոնց գրել առ Տնտեսական խորհուրդն օրյիշեալ 42000 դուրուչ պար- տուց խնդիրը նոյն ժամանակի Հոգաբարձու- թեան հաշուետումարէն պէտք է ստուգել, նոյնպէս և հարցնել Պարտուց բարձման Յանձ- նաժողովոյ կամ անոր ատեհադութեանէն ստուգել թէ ինչո՞ւ չեն ուզեր վճարել, և ըստ այնմ տեղեկազրիւ առ Բաղաբական ժո- ղովն, որ կարենայ արձանագրուիլ կեդրոնա- կան տումարաց մէջ :

Իսկ Հանգանակութեան տոմսակաց հաշ-ւոյն համար Արքայոան Պատրիարքը յայտենց Ժողովին թէ ինք պատրաստելու ետեւէ է ար- դէն :

Այս հաշիւը մինչև մեր հրատարման թուականը չի տեսնու :

Իսկ մնացորդ պարտուց խնդրոյն համար Ժողովս միևնոյն նիստին մէջ հարկ տեսաւ նախ Ելեմարց հոգաբարձութիւնը կազմել, և Կեդրոնական սնտուղի հաշուեցոյցն ու հաշ- ուեկիւնն ունենալ 'ի ձեռին : և մինչ Ելեմար-

տից հոգարարման թիւեր կազմուեցաւ և հաշուեցոյցն ու հաշուեցիւնն եկան : Քաղաքական ժողովն հրաժարելու ստիպուեցաւ , ինչչպէս որ բարեք սակէ առաջ :

3. ՎԱՆՈՐԷՒՅԹ ԽՈՐՀՈՒՐԿ

Վանորէից Հրահանգին համեմատ վանքերը ոչ միայն կ'ուսանործ եկեղեցական այլ և քահանայ և վարժապետ հասցնելու պիտի ծառայեն, գաւառաց համար թէ վարդապետանոց և թէ վարժապետանոցն որ պիտի ըլլան և իւրաքանչիւր վանք իր դաստիւն և վանք չունեցող ժողովայ գաւառաց համար այս ծառայութեան կրօնմն ունենալով , ըստ այնմ թէ վանորէից խորհրդայ և թէ Քաղաքական ժողովայ կողմանէ ուշադրութեան առնուած էին :

Վանորէից խորհուրդն 1872 սեպտեմբեր 13 թուականաւ գրութեամբ կ'առաջարկէր որ անյայտալ և անպատճառ վարժարաններ բառան իրենց մէջ հետեւեալ ձեռնհաս վանքերը .

- 1. Կեսարիոյ Ս. Կարապետ
- 2. Գաղաթիոյ Ս. Աստուածածին
- 3. Սեբաստիոյ Ս. Նշան
- 4. Մարդուանու Ս. Աստուածածին
- 5. Պայպիտու Ս. Յովնանէս
- 6. Արղնու Ս. Աստուածածին
- 7. Մշոյ Ս. Առաքելոց
- 8. Վանայ Ս. Գանչիկաղործ
- 9. Աղթամարոյ Ս. Խաչ
- 10. Եւդոկիոյ Ս. Յովնան
- 11. Տիգրիկի Ս. Լուսաւորիչ
- 12. Մանճըլիսի Ս. Թորոս
- 13. Խարբերդու Գուլէ վանք
- 14. Երզնկայու Ս. Ներսէս
- 15. Շապիղգարահիսարու կամ Թամազապի վանք
- 16. Կարնոյ վանորէից մին
- 17. Ալբազու Ս. Բարթողիմէոս :

Այս առաջարկութիւնն անմիջապէս ընդունուեցաւ և ստիպողական կերպով ըջրաբերական գրուեցաւ նշանակեալ վանքերուն , Հասած պատասխանները Վանորէից խորհրդայ ուշադրութեանը յանձնուած են :

1873 յունվար 20 թուականաւ Վանօ .

րէից խորհրդայ գրութեան վրայ հետեւեալ որոշումներն եղան յունվար 23 ի նիստին մէջ :

1. Վանորէից վիճակագրութիւնն ընելու համար խորհուրդն ուղարկի Վանական մասնագրարութեանց հետ բանակցի , և այս վիճակագրութիւնը շինել ապա :

2. Արմաշու վանուց վարժարանի նմար արդէն 10 ձրիավարժ աշակերտներ տալ որոշուած ըլլալով , ստաց 3ը Կիլիկիոյ Կաթողիկոսին ուղեւոր պայմանաւ , մնացեալ 7 ին ընտրութեան համար Վանորէից խորհրդայ առաջարկութիւնը քանի մը փոփոխութեամբ ընդունուեցաւ այսպէս .

Սըղբրդէն	2	աշակերտ
Գերջանէն	1	»
Արճէջէն	1	»
Խարբերդէն	2	»
Քղղէն	1	»

Որոշուեցաւ որ այն աշակերտը Գաւառական վարչութեանց ձեռք ընտրուին , ամենէն յաջողակ և Աղղին խնամոցն արժանի և ապագային իրենց թեմերուն մէջ վարժապետութիւն ընելու տրամադիր տղայքներ ըլլալու պայմանաւ :

3. Ս Երեսաղմի և Արմաշու վանուց վարժարանաց համար կարողութիւն ունեցող վանքերին առնուելիք թշուառ որ աշակերտաց մասին , Վանորէից խորհրդայ առաջարկութիւնը քանի մը փոփոխութեամբ ընդունուեցաւ այսպէս :

- 1. Աղթամար
- 2. Սեբաստիոյ Ս. Նշան
- 3. Կեսարիոյ Ս. Կարապետ
- 4. Մարդուանու Ս. Աստուածածին
- 5. Եւդոկիոյ Ս. Յովնան
- 6. Կարնոյ վանքերին մէջը
- 7. Գաղաթիոյ Ս. Աստուածածին
- 8. Արղնու Ս. Աստուածածին

Որոշուեցաւ որ այս 8 վանքերը մէկ մէկ յաջողակ աշակերտ զրկեն իրենց վանուց սընտաւիկին օժտեալութեամբ կամ 'ի Ս. Երեսաղմի և կամ յԱրմաշ, որն որ յարմար դատեն որովս զի հոն ըստ արժանւոյն դաստիարակուելով՝ ապագային իրենց վանուց մէջ վարժապետելու կարող ըլլան : Բայց այս վանքերն արդէն իրենց մէջ վարժարան բանալու պարտ

տական են կանխաւ եղած որոշման համաձայն :

Վանօրէից խորհուրդը մեծ դժուարութեան մը մէջ էր , ինչպէս նաև Վարչութիւնը Առաջնորդութեան կամ Փննիչութեան և այլ պաշտամանց համար , արժանաւոր եկեղեցականներ գտնելու մասին այն վանօրէից վանահայրութեան և մատակարարութեան համար , որոքը կարօտ են խնամոց . և եթէ խնամուին՝ յոյժ օգտակար կրնան ըլլալ . կամ եթէ արժանաւորը գտնէր , ա՛ն ալ խոյս կուտար :

Սիւայն պէտք է խոստովանիլ թէ Տանկատանի մէջ գոնեաւ թագապէս երկու նշանաւոր վանքեր , Երուսաղէմ և Արմաշ , որոնց վրայ կարևոր տեղեկութիւններ առած էինք , միայժ ունին այս մեծ պակասը լեցնել , և արժանաւոր եկեղեցականներ և վարժապետներ հասցնել :

Այս երկու հոշակաւոր վանօրէից վարժարանաց տեղեկագրերն արդէն հասած են , և 'ի հարկէ Վանօրէից խորհրդոյ համարատուութեան տեղեկագրին մէջ պիտի բերան : Քաղաքական ժողովս Ս. Երուսաղէմ վարժարանին մէջ աշակերտաց թիւը նկատողութեան առաւ իբրև անբաւական՝ հոշակաւոր վանքի մը համար . բայց այս մասին պէտք կըլլար Ս. Երուսաղէմի վանուց սնտուկին հայուեցոյցն ունենալ 'ի ձեռին , զոր ինչպէս նախորդ վարչութեան խոսացածք էր զրկել Ս. Երուսաղէմի Ամենապատիւ Տ. Եսայի Ս. Պատրիարքը , նոյնպէս և մեզ կը խոստանար զրկել :


Իսկ Արմաշի վանուց հաշիւներն արդէն եկած հասած էին 'ի Պօլիս . ինչպէս նաև Արմաշու վանուց նորոգ կառուցեալ Ս. Եկեղեցոյն շինութեան ծախուց հաշիւը , որ 'ի ձեռն հանգուցեալ բարեխիշտակ վանահօր Տ. Գէորգայ եպիսկոպոսի , Վանօրէից խորհրդոյ քննութեանը յանձնուցեալ :

Արժաւոր վանուց ճիւղալովտ աշակերտաց թիւը 20 որոշուած է , որոյ 10ը միաբանութիւնը նիկիովիցի թեմերէն պիտի ընդունի ընտրանքը , և 10ն ալ Կեդրոնական վարչութիւնը պիտի տայ : 3ը Կիլիկիոյ վիճակներէն ըլլալու պայմանաւ , ինչպէս կանխաւ ծանուցինք . բայց ցաւ է ըսել թէ Կիլիկիոյ Աթուղիկուց ցարդ անպատասխանի թողուց չայս

հրաւերը , և երեք յաջողակ աշակերտ չըրկեց առ Կեդրոնական վարչութիւնն , որ Սարմաշ գրիչը ճիւղապարհակու երու համար : Արմաշու վանուց համար ուրախութեամբ լլուսած եմք որ եթէ Եկեղեցոյն շինութեան պատճառաւ 1500 Օսմանեան ոսկոյ մօտ պարտքը վճարէ , անմիջապէս պիտի ձեռնարկէ իր վարժարանին մէջ ընդարձակել Հոլագործութեան ուսումը , Երուսաղէն յատուկ ուսուցիչ բերել առաջ :

Արդէն Ուսումնական խորհրդոյ առաջարկութեանը համաձայն հրահանգ տրուած է Վանօրէից խորհրդոյ , որ ազգային վանօրէից մէջ Հոլագործութեան ուսումնաւ մտնելու մասին միայժ և մտադրութիւն ունենայ :

Կը վախճելինք , ինչպէս որ Ազգը կը վախճարի , որ Ս. Երուսաղէմի և Արմաշու վանուց օրինակին հետեւէին Հոյաստանի միւս բազմաթիւ վանքերը , մանաւանդ Վանայ և Մշոյ վանքերը , որոնց ձեռնհասութիւնը հանրածանօթ ըլլալով մեծապէս կրնան նպաստել նոյն տեղայն ժողովրդեան ուսման և կրթութեանը : Կը յուսանք որ Վանօրէից խորհրդոյ փութաջան գործունէութեամբը Ազգին այս վախճաբը հետաշեղտ կը կատարուի :



Ե .

ՊԵՏԱԿԵՐ ԸՆԹՈՍՅՈՑ  
ՔՈՂՈՎԱԿԱՆ ԺՈՂՈՎԱՅ

Մինչև ցարդ Քաղաքական ժողովոյս 1. Կաշմութեան , 2. Սահմանադրութեան բոնադրութեան , 3. Քաղաքական յարաբերութեան և 4. Տեսուչ խորհրդոյ հետ յարաբերութեան վերաբերեալ գործերը զլիսաւորաբար տեղեկագրուցեան Այժմ հարկ կը տեսնենք Քաղաքական ժողովոյս իւրաքանչիւր նիստերն առանձինն նշանակել ներկայ ժողովականաց թուերով և խնդրոց կարգերով , որպէս զի յստակ տեսուի թէ Քաղաքական ժողովս ինչ տեսակ խնդիրներով և ինչ կարգով զբաղած է :

Բայց կանխաւ պարտինք սա տեղեկու-

թիւններն յաւելուլ, թէ՛ այսպիսի հրատարակութիւն մը որ ֆազաբական ժողովոյն ներքին միճակուն է ընթացից ճշգրիտ պատկերն է, հասարակութեանն պահուն խորհուած ըլլալով ՚ի սկզբանէ ըստ այսմ կարգաւորութեանը ուղղուած չէ. և թէ՛ պիտի տեսնուին այնպիսի խնդիրներ՝ որք ըստ կարգաւորութեան մերոյ Ղրեւանատան միջոցաւ կրնային տնօրինուիլ. և թէ՛ պիտի տեսնուին այնպիսի խնդիրներ, որք թառն ժողովոյ վերաբերեալ են. այս անակ խնդրոց վրայ կտմ կանխաւ թառն ժողովոյ մէջ խօսուած է, և կտմ ոտիւ պողակառութեանը համար ֆազաբական ժողովոյ ուղղութեան առած է, և ըրած տընտրելութիւնը ծանուցած է թառն ժողովոյ: Եւ ըստ որում թառն ժողովոյ համադաւանութեան վերջը միօրինակ պիտի դրուի նաև թառն ժողովոյ խնդրոց կարգն ալ. եթէ առնոց մէջ ալ միայն ֆազաբական ժողովոյ վերաբերեալ խնդիրներ տեսնուին, զիտնալու է որ ֆազաբական ժողովոյ ըստ անգամ թառն ժողովոյ օրն ալ առանձին նիստ ըրած ըլլալով, երբեմն պատահած է որ իրեն վերաբերեալ խնդիր մը անխտիր ՚ի ներկայութեանն արծանական ժողովոյ Հարցալ ուղղութեանն առած է: Այս ֆազաբական ժողովոյ նիստերն և խնդրոց կարգերը ցուցնող պատկերն:

Ա. ՆԻՍՏ 18 ՅՈՒՆԻՍ 1872

Ներխայ՝ Ս. Պարբերք, Բաղ. Ժողովանք 9

ԿԱՐԳ ԻՆՎՐՈՑ

1. Ընտրութիւն Դիւանի:
2. Ժողովոյն գործոց բաժանման խնդիր:
3. Պատրաստութիւն ընտրութեանն Տեսուչ խորհրոց եւ Հոգաբարձութեանց:
4. Առաջարկութիւն Առանձնագիր էֆ, ի ժողովին ներկայանալը խնդրոց վրայ Ղրեւանատունէն տեղեկագիր ուղղելու մասին:

Բ. ՆԻՍՏ 20 ՅՈՒՆԻՍ 1872

Ս. Պարբերք, Բաղ. Ժողովանք 8

1. Տեսուչ խորհրոց եւ Հոգաբարձութեանց ընտրութիւն:
2. Հայաստանի աշխարհացոյց տախտակ:
3. Գաւառական միճակագրութիւն:

4. Սահմանադրութեան գործադրութիւն ի գաւառս:

5. Ապրո էֆէնախի հրատարականը:

Գ. ՆԻՍՏ 27 ՅՈՒՆԻՍ 1872

Ս. Պարբերք, Բաղ. Ժողովանք 7

1. Խնդիր հրատարականաց, ֆազաբական ժողովոյ 3 անգամոց:
2. Շարունակութիւն ընտրութեան Տեսուչ խորհրոց եւն:
3. Կարգութիւն եւ առաջարկութիւն Վաստրէից խորհրոցին:
4. Գաւառական խնդիրք
  - Ա. Ձարսանձախի.
  - Բ. Քղիի եւ Ղուղուլջանի:
  - Գ. Բաբերդի:
  - Դ. Վանայ առաջնորդական:

Դ. ՆԻՍՏ 3 ՕԳՈՍ. 1872 ՅԱՒՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պարբերք, Բաղ. Ժողով. 8

1. Շարունակութիւն ընտրութեան Տեսուչ խորհրոց եւ Հոգաբարձութեանց:
2. Սամաթիոյ Ազապեան վարժարանի խնդիր:
3. Նոր Հրահանգ կարգութեան Գաւառական ընդհանուր ժողովոց:
4. Ձարսանձախի, Քղիի եւ Ղուղուլջանի խնդրոց վրայ Մեծ Եպարքաբն մատուցանելի մասնաւոր տեղեկագիր:

Ե. ՆԻՍՏ 31 ՕԳՈՍ. 1872 ՅԱՒՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պարբերք, Բաղ. Ժողովանք 9

1. Հացադրոք Պ. Ձաբար:
2. Պատրիարքարանի մատակարարութիւնը:
3. Երեսադէմի փոխանորդին կալուածական խնդիրները:
4. Գնալը կղզոյ եկեղեցոյ շինութեան պարտուց խնդիրը:

Զ. ՆԻՍՏ 7 ՍԵՊՏ. 1872 ՅԱՒՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պարբերք, Բաղ. Ժողով. 7

1. Մուշէն Երեւազի մը տեղւոյն Մէնֆաւթ սանառդիին վրայօք:
2. Տեղաբնակերտի հայրենասէր էնկ. նե-

ապօրէն Արդընի վանուց վարժարանին նկատմամբ :

3. Եւրպիսէրէցուց հանրադիրը իրենց վարժարանին գոցուելուն վրայ :

4. Վանէնց գանջատ Մոլլա Շահապ անուն քերտին դէմ :

5. Խարբերէն խնդիր՝ Խարբերը կուսակալութիւն ընելու մասին :

6. Կեսարիայէն գանջատ Չէրքէզներուն դէմ :

7. Մատին Աւսքելայ վանուց վանահօրմէն գանջատ Սատուն դաւառի Աշիր քրդաց դէմ :

8. Երբայի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ պարտուց վիճակը :

9. Շէֆքի Էֆէնտիլին սէքէսթրօն :

Է. ՆԻՍՏ 8 ՍԵՊՏ. 1872

Ս. Պապրէտրէ, Բաղ. Ժողով. 8

1. Բերայի զերեղմանատան վրայ Տնտեսական խորհրդէն յայտադիր :

2. Հիւսարի Անթառաւ կնոջ կտակի լընդիր :

3. Քանչէլէրի արոց խնդիր :

4. Պատրիարքարանի դրամական խնդիր :

5. Հասարակաց կրթութեան պաշտօնէին ծանուցագիրը՝ աղջային վարժարանաց եւ ընկերութեանց վիճակագրութեան համար :

6. Կարնոյ Առաջնորդին բողոքը Հայրենիք լրագրոյ յօդուածին դէմ :

7. Անդրիանուպօլսոյ եկեղեցիաց կալուածական արոց խնդիր :

8. Պէշիքթաշի եկեղեցւոյ պօստանի խնդիր :

9. Ենիի գիւղի եկեղեցւոյ պարտքը :

10. Կիլիկիոյ կաթաղիկոսի Փէրմային ծախքը :

Ը. ՆԻՍՏ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1872

Ս. Պապրէտրէ, Բաղ. Ժողով. 6

1. Հիւանդանոցի մոմատան եւ Վաղըֆի հասցիքի խնդիր :

2. Պատրիարքարանի Էլիւմսից հաշուեցոյց եւ ընդհանուր արոց խնդիր :

3. Չարսանճախի խնդիր՝ եւ Օտեան Էֆէնտիլին ու Պէլլէկճի պէլին հետ բանակցութիւն :

4. Սամաթիացուց ոմանց բողոքը Աբապեան վարժարանի կարասեաց փոխադրութեան մասին :

5. Պրուսայի տեսուչներէն նամակ :

6. Ընդհանուր ժողովոյ դիւնալէն նամակ յատուկ դիւանապարտ ուղկու համար :

7. Իզմիրի Վաղաքական ժողովէն նամակ :

8. Պօղոս սրբադանին մահը եւ Առաջնորդական տեղապահութեան ընտրութիւնը ծանուցանող :

Թ. ՆԻՍՏ 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1872

Ս. Պապրէտրէ, Բաղ. Ժողով. 5

1. Պատրմանեան Էֆ. ի սպանման սուղեկագիրը :

2. Երուսաղէմայ փոխանորդին կալուածական խնդիրները :

3. Տնտեսական խորհրդէն յայտադիր Էյուսպի Ս. Աստուածածնայ գանձապետին խնդրոյն վրայ :

4. Արիստակէս Սրբազանի ամսականի խնդիրը :

5. Ընդհանուր արոց հաւաքչի որոշում :

6. Մուքաթթայի արոց եւ Պատրիարքարանի մատակարարութեան խնդիրները :

Ժ. ՆԻՍՏ 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1872

Ս. Պապրէտրէ, Բաղ. Ժողով. 8

1. Վիլայէթ նիզամնամէսի թարգմանութեան եւ տպագրութեան խնդիր :

2. Հիւանդանոցի հողաքարձութեան խնդիրը, Հիւանդանոցի դրամական վիճակին վրայ :

3. Բափուքահասի ընտրութիւն :

4. Քընալը կղզւոյ եկեղեցւոյն շինութեան պարտքը :

5. Պրուսայի տեսուչներէն նամակ :

ՅԱ. ՆԻՍՏ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1872

Ս. Պապրէտրէ, Բաղ. Ժողով. 4

1. Բարթողիղնոս եպիսկոպոսի վերադարձըն ի Պրուսա :

2. Եօղատու առաջնորդութեան մասին նախորդ որոշման դրժագրութիւնը :

3. Բալուչի Առաջնորդին գանջատը ընդհանուր պէնելու դէմ :

4. Երթուղայի Առաջնորդին նամակը սովալուակ աղջամոց օգնութիւն խնդրելու համար :

5. Սերաստիոյ Առաջնորդին դրութիւնը Ձառայի քանի մը բռնաւորաց բանաստիճակուն մասին :

6. Իսղատիոյ այցելու Նաթանեան վարդապետ, Բ. Դոնէն հրամանագիր կը խնդրէ :

7. Եղեւսիոյ Իււրի վարդապետին տեղեկագիրը, Սահմանադրութիւնը դործադրելու մասին :

8. Գառատանական խորհրդոյ 3 տեղեկագրերը :

9. Բալուշէն մամուտօրաց հետագիր, Առաջնորդէն դժգոհ ըլլալուն համար :

10. Տօքթօր Չայեանի խնդիրը, Հիւանդանոցի բժշկութեան համար :

11. Ատանայի եւ Փայասի շրջակայ դիւորէից ընկերաց հանրագիրը :

12. Արմաշէն Սանցի Նիկողոս եպիսկոպոսի պատասխանագիրը :

ԺԲ. ՆՍՍ 21 ՀՈՎՏԵՐԵՐ 1872

Ս. Պարբերք, Գաղ. Ժողով. 6

1. Դիւանատան կանոնագիր եւ Դիւանապետութեան խնդիր :

2. Թաղական խորհրդոց հաշուց վիճակը :

3. Աղջային Վարչութեան իրաւասութեան սահմանը ընդհանուր վարժարանաց նկատմամբ, Ուսումնական խորհրդոյ յանձնարարեալ ծրագիր պատրաստելու համար :

4. Պատրիարքարանի դրամական եւ մատակարարութեան խնդիրը :

5. Աղջային պարտուց հանդանակութեան եւ հին աւանդեաց խնդիր :

6. Հացադործ Պ. Զաքարի պահանջքին վճարման անօրէնութիւն :

7. Հիւանդանոցի հողաբարձութեան պատասխանագիրը մոմտած համար :

8. Գաւառական հարստաւարութեանց ընդհանուր տեղեկագրին Բ. Բնգամ մատուցման խնդիր :

ԺԳ. ՆՍՍ 28 ՀՈՎՏԵՐԵՐ 1872

Ս. Պարբերք, Գաղ. Ժողով. 4

1. Պրուսոյի Առաջնորդին համար թագրեր :

2. Հիւանդանոցի Հողաբարձութեան խնդիրները :

3. Պատրիարքարանի դրամական վիճակը :

4. Ղալաթիոյ Թաղական խորհրդոյ վիճակը :

5. Կարուշայի Աջնաւորեան Յարութեան պահանջքի խնդիրը :

6. Ս. Պատրիարքին առաջարկութիւնը յատուկ խորհրդականի համար :

7. Վանայ Պողոս վարդապետի կուսակցաց խնդիրը, Պողոս վարդապետը Կարին փոխադրելու համար :

ԺԴ. ՆՍՍ 2 ՆՈՅՏԵՐԵՐ 1872

Ս. Պարբերք, Գաղ. Ժողով. 7

1. Կրօնական ժողովոյ առաջարկութիւնները, Վառնայի առաջնորդական տեղապահութեան, եւ Բաբերդ եւ Երզնկա միացեալ վիճակաց բաժանման համար :

2. Գաղաքական ժողովոյ ներքին Կանոնագրի հաստատութիւն (A) :

3. Բերայի Աբըղաբի խնդիր :

4. Պրուսայի երկու տեսչաց յետադարձը, եւ տեղեկագիր Պրուսայի առաջնորդական խնդրոյն եւնի :

5. Սամաթիոյ Թաղական խորհրդոյն հրաժարականը :

6. Աղէքսանդրիոյ խնդրոյն համար հետադիր առ Մեսրոպ եպիսկոպոսն :

7. Տօքթօր Չայեանի :

ԺԵ. ՆՍՍ 4 ՆՈՅ. 1872

Ս. Պարբերք, Գաղ. Ժողով. 5

1. Բերայի Աբըղաբի, եւ կալուածոց ու պարտուց խնդիրը :

2. Սերաստիոյ Առաջնորդին բողոքը, Թագրեր չըրիւու եւ կառավարութեան ժողո-

4. Ըստ Ներքին Կանոնագրի Գաղաքական ժողովոյ Դիւանատուն աղէկ շրջանաց ընդունած եր օր, էջէն Թաղական խորհուրդ մը առնց պատճառի հրաժարական տուց, Դիւանատունը հուանութեամբ Ս. Պատրիարքի նոր ընտրութեան հրահանգը զրկէ. եւ երբ նոր ընտրութեան տեղեկագիրը ցայ, եւ օրինակ օրանէ, Դիւանատունը այն ընտրութիւնը ներկայաննելով Ս. Պատրիարք հօր է փաւերացածը՝ ըստ այն գործադրէ : Այնքան երահանգին համաձայն Գարակոմլուկի, Ենիկեպօլտի, Հալոպի, Օրթոպիւղի, Աթոկ փաշայի, Գուսթափուկ զբօի նոր թաղական խորհրդոց ընտրութիւնները, եւ Գարժաօի Թաղական խորհրդոց 5 անդամաց նոր ընտրութիւնը փաւերացած են :

վոյ մէջ չի նստելու համար կուսակալէն առ ինքն եղած աղբարարութեան մասին :

3. Վանայ Պօղոս վարդապետի խնդիրը :

4. Կիլիկիոյ Կաթողիկոսին խնդիրը , Աթոռոյն կրուստները փնտնելու համար Բ. Գոնէն հրամանագիր առնելու համար :

5. Հիւանդանոցը պատժարան եւ բանասարան չլրջարու մասին Բ. Գրան ծանուցագրոյն պատասխան :

ձ.Ձ. ՆՍՍ 9 ՆՈՅ . 1872 ՅԱՆՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 5

1. Բերայի պարտուց եւ կալուածոց խընդիրը :

2. Իւսկիւտար Սէլամիէի Թաղական խորհրդոյ հրատարականք :

3. Գուճգափույի զրօի Թաղական խընդիրը :

4. Եէնի գափույի աղջկանց վարժարանի շինութեան հաշւոց խնդիրը :

5. Կեսարիոյ վանական հողերու Թափույի խնդիրը :

6. Տօբթօր Զայեան :

ձ.Յ. ՆՍՍ 11 ՆՈՅ . 1872

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 8

1. Արմաշի Ստեփան վարդապետի ճանապարհորդութեան ծախքը :

2. Ս. Պատրիարքին առաջարկութիւնը , տեղական մասնաժողովոյ եւ Պատրիարքական խորհրդականի ընտրութեան համար :

3. Բաղաքական ժողովոյ հրատարակ 4 անդամոց տեղ նոր ընտրութեան խնդիրը :

4. Պրուսայի խնդիրը :

5. Մասնաւոր այցելութիւն ունանց ժողովականաց յԱզգ. Հիւանդանոց :

ձ.Գ. ՆՍՍ 16 ՆՈՅ . 1872 ՅԱՆՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 7

1. Իւսկիւտար Սէլամիէի Թաղական խընդիրը :

2. Սամաթիոյ Թաղական խնդիրը :

3. Մեծ. Օտապաշեանի նուէր յանուն Ազգ. Հիւանդանոցի , Բրէտիթ—1,օգ վիճա-

կահանութեան հարիւրական Ֆիօրիննոց չորս բաժին թիւ 31 , սէրի 661

32 , » 664

27 , » 4165

14 , » 3618

ձ.Թ. ՆՍՍ 23 ՆՈՅ . 1872 ՅԱՆՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 8

1. Իւսկիւտար Սէլամիէի հրատարակ Թաղական խորհրդոյ հաշւոյ եւ նորին ընտրութեան խնդիրը :

2. Եէնի գափույի Թաղական խորհրդոյ նորոգ ընտրութիւն :

3. Ընտրութիւն Հոգաբարձութեան եկեղեցւոյն Ղալաթիոյ :

Խ. ՆՍՍ 30 ՆՈՅ . 1872 ՅԱՆՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 9

1. Իւսկիւտար Սէլամիէի Թաղական խընդիր , առժամանակեայ խորհրդոյ ընտրութիւն :

2. Ուսումնական խորհրդոյ առաջարկութիւնը Հիւանդանոցի Որբանոցին համար :

3. Ուսումնական խորհրդոյ բողոքը Մասիս լրագրոյ մէջ ակնարկութեանը դէմ :

4. Հիւանդանոցի Հոգաբարձութեան առաջարկութիւնը , ՎազրՖի գործողութիւնն Իրեն յանձնուելու համար :

5. Նէվէնիբքի հանգուցեայ Տ. Յովհաննէսի 104 Անգղ. ոսկւոյն խնդիրը :

ԽԱ. ՆՍՍ 2 ԳԵՏՏ . 1872

Ս. Պարբերք , Բաղ. Ժողով 8

1. Ազգային պարզեււար վիճակահանութեան խնդիրը :

2. Բերայի գերեզմանատան խնդիրը :

3. Պրուսայի խնդիրը :

4. Գաւառական հարստահարութեանց տեղեկագրին Բ. անգամ մատուցման խնդիրը :

5. Պատրիարքարանի մատակարարութեան խնդիրը :

6. Կրօնական եւ Բաղաքական ժողովոց հաստատութեան համար Քաղրիր :

7. Բերայի Ս. Ներսիսի Թեմայի եկեղեցւոյ պարտուց եւ կալուածոց խնդիրը :

8. Արմաշի վանահայր Գեորգեւ կալիակոպուի վախճանման լուրը :



ԻԲ. ՆԻՍՏ 7 ԴԵԿՏ. 1872 ՅԱՌՈՒՐ Ի. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով՝ 7

- 1. Գաւառական հարստահարութեանց սեղեկագրին Բ. անգամ մատուցման խնդիրը :
- 2. Սամաթիոյ թաղական ընտրութեան դէմ արգելք յարուցանողները քննելու համար նանձնաժողովոյ մը կազմութիւն :
- 3. Գումրակույի զբոյ թաղական խորհրդոյ առժամանակեայ կազմութիւնը :

ԻԿ. ՆԻՍՏ 9 ԴԵԿՏ. 1872

Քաղ. Ժողովու՞մնք 8

- 1. Արմաշու նոր վանահօր ընտրութեան տեղեկագիրը :
- 2. Բերայի պարտուց եւ կալուածոց Հոգաբարձութեան ընտրութիւն :
- 3. Բերայի գերեզմանատան հոգաբարձութեան ընտրութիւն :
- 4. Բերայի Ագապարի հոգաբարձութեան ընտրութիւն :
- 5. Քզիի եւ չրջակայից մէջ եղած հարստահարութեանց մասին Պատրիարքարանի թագրերնորուն ի պատասխան Բ. Դոնէն եկած ծանուցագիրը :
- 6. Աղզային պարտուց հանգանակութեան հաշիւը :

ԻԿ. ՆԻՍՏ 14 ԴԵԿՏ. 1872 ՅԱՌՈՒՐ Ի. ԺՈՂՈՎՈՅ

Քաղ. Ժողովու՞մնք 8

- 1. Վերահաստատութիւն Սամաթիոյ Թաղական խորհրդոյ :
- 2. Գումրակույի զբոյ յուզումները :
- 3. Օրթագիւղի Թաղական խորհրդոյ հրաժարականը :

ԻԵ. ՆԻՍՏ 16 ԴԵԿՏ. 1872՝

Քաղ. Ժողովու՞մնք 8

- 1. Քզիի եւն. հարստահարութեանց նրկատմամբ Բ. Դոնէն եկած ծանուցագրին Պատրիարքարանի տախիք պատասխանագրին պատաստութիւնը :
- 2. Կիւանատան կանոնադրին յաւելուած :
- 3. Ա՞՞վեհ. կաթողիկոսն նամակ ի Բերայի գերեզմանատան խնդրոյն համար :

4. Ուսումնական եւ Տնտեսական Մասնաժողովոց ընտրութեան խնդիրը :

ԻԶ. ՆԻՍՏ 19 ԴԵԿՏ. 1872 ԱՐՏԱՔՈՅ ԿԱՐԳԻ

Քաղ. Ժողովու՞մնք 9

- 1. Պրուսայի Առաջնորդական եւ Բերայի գերեզմանատան խնդիրները :
- 2. Քզիի եւն. խնդրոյն համար պատասխանագիրը :
- 3. Բերայի Ս. Նրբորդութեան եկեղեցւոյ կալուածոց Հոգաբարձութեան կազմութիւնը :
- 4. Արտաքին գործոց Պաշտօնէի ծանուցագիրը Գ. Հիւպչի առնելիքի մասին :
- 5. Արտաքին գործոց Պաշտօնէի ծանուցագիրը Եւզոկիոյ Առաջնորդին վրայ :

ԻԵ. ՆԻՍՏ 28 ԴԵԿՏ. 1872

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով՝ 9

- 1. Պրուսայի խնդիրը :
- 2. Տնտեսական խորհրդոյ փոխառութեան խնդիրը կեդրոնական նստակիսն համար :
- 3. Խաղիւղի եկեղեցւոյ կալուածոց մը շինութեան խնդիր :
- 4. Քարակէօմրիւկի եկեղեցւոյ կալուած կազինոյին վորձակալութեան դատը :
- 5. Դրան ծանուցագիրը, կրօնական եւ Քաղաքական ժողովոց վաւերացման համար :
- 6. Բերայի Ամբաստան վարդապետին բողոքը Մէրեէ՛-գուլի էֆ. ի դէմ :
- 7. Կտակաց Հոգաբարձութեան ներքին կանոնագրի խնդիրը :
- 8. Իւսկիւտար Սէլամիէի հրաժարեալ խորհրդոյ հաշւոց խնդիրը :
- 9. Աղզային պարտուց հանգանակութեան հաշւոց խնդիրը :
- 10. Ուսումնական խորհրդոյ բողոքը Հիււանդանոցի Արքանոցի մասին :

ԻԸ. ՆԻՍՏ 30 ԴԵԿՏ. 1872 ՅԱՌՈՒՐ Ի. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով՝ 9

- 1. Պահետի գիւնանատան խնդիր :
- 2. Տեսուչ խորհրդոց եւ Հոգաբարձութեանց պակասած անդամոց տեղ նոր ընտրութիւն :
- 3. Բանչէլէրի տրոյ խնդիր :

ԻԹ. ՆԻՍՏ 4 ՅՈՒՆՎԱՐ 1873 ՅԱՌՈՒՐ Ի. ԺՈՂՈՎՈՅ

Քաղ. Ժողովու՞մնք 5

- 1. Տօքթօր Չայեան :

2. Պահեստի դիւանատուն :  
3. Ընտրութիւն եկեղեցական դիւանադպրի գաւառական թղթակցութեան համար :

1. ՆՈՍ 11 ՅՈՒՆՎ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Քաղ. Ժողովանք 7

1. Ղալաթիոյ եկեղեցւոյն Հոգաբարձութեան խնդիրը :
  2. Ազգային կարուածոց վիճակադրութեան և Քաղական խորհրդոց հաշուէտուութեան խնդիրը :
  3. Ընտրութիւն Ելևմտից հոգաբարձութեան :
  4. Տնտեսական խորհրդոյ հրատարակ մէկ անդամոյն տեղ շոր ընտրութիւն :
  5. Բերայի եկեղեցւոյ պարտապահանջ
- Պ. Հրեպի առնելեաց վճարումը :

1Ա. ՆՈՍ 18 ՅՈՒՆՎ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Քաղ. Ժողովանք 8

1. Ելևմտից հոգաբարձութիւն :
2. Սամաթիոյ յուլիանոց քննութիւնը :
3. Բերայի կարուածոց Հոգաբարձութեան տեղեկագիրը :
4. Քանչէլքի տրոց խնդիր .
5. Տրապիզոնի ազգային կարուածոց տուրքի խնդիրը :
6. Դիւանադպիր Յովհաննէս էֆ. Թուրքաճեանի ամսականի խնդիրը :
7. Գափու Չուխատարի Պ. Ասատուրի ամսականի խնդիրը :
8. Հիւանդանոցի Որբանոցին համար գատ Հոգաբարձութեան խնդիր :
9. Ուսումական և Տնտեսական խորհրդոց գաւառաց հետ յարաբերութեան խնդիր :
10. Ենչիգափույի նախորդ թաղական Ղազարտեան Խ. էֆէնտիի բողոքը :

1Բ. ՆՈՍ 23 ՅՈՒՆՎ. 1873 ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ

Քաղ. Ժողովանք 8

1. Հրաւիրագիր Արտաքին գործոց պաշտօնէին առ Ս. Պատրիարքն :
2. Մամբրէ վարդապետին խնդիրները :

1Գ. ՆՈՍ 25 ՅՈՒՆՎ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով 6

1. Ելևմտից հոգաբարձութիւն :
2. Կտակաց »
3. Հիւանդանոցի »
4. Խսկիւտար Ալլամիկի հրատարակ խորհրդոյն հաշուց խնդիրը :

1Դ. ՆՈՍ 1 ՓԵՏՐ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով 8

1. Ալթեան Յովհաննէս սրբադանի ամսականի խնդիր :
2. Խ. Նահանեանի դատական վերաբննութիւնը :
3. Տօթթօր Չոյեան :
4. Ազգային պարտուց հանգանակութեան տեղեկագիրը :
5. Սամաթիոյ թաղական խնդիրը

1Ե. ՆՈՍ 8 ՓԵՏ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով 5

1. Ազգային վաղըֆի վերադարձու մահլիւլի մը խնդիր :
2. Հիւանդանոցի վաղըֆին խնդիրը :
3. Ազգային ընդհանուր վաղըֆաց բարեկարգութեան խնդիր :
4. Սամաթիոյ երկուս վարժարանաց համար առժամանակեայ հոգաբարձութեան ընտրութիւն :
5. Սամաթիոյ Թազական խորհրդոյ հրատարականը :
6. Քընալը կղզիի եկեղեցւոյ շինութեան պարտքը :
7. Կտակաց հոգաբարձութեան առաջարկած շրջաբերականը :

1Զ. ՆՈՍ 19 ՓԵՏ. 1873 ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով 8

Եւշոնիոյ և Պրուսայի առաջնորդական խնդիր, Հրաժարական առաջնորդին Եւշոնիոյ և առաջնորդական տեղապահի ընտրութիւն :

1Է. ՆՈՍ 22 ՓԵՏ. 1873 ՅԱՌՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՑ

Ս. Պատրիարք, Քաղ. Ժողով 6

1. Ուսումական խորհրդոյ առաջարկութիւնը վան Վարժապետանոցի :

2. Եկեղեցափոստի նախորդ թաղական Խ. Ղազարոսեան էֆէնտիի բողոքը իր առնելեացը մասին :

ԼԸ. ՆՆՍՏ 27 ՓԵՏ . 1873

Ս. Պապրէիարք , Բաղ . Ժողով . 9

1. Հիւանդանոցի վաղըֆէն մահլիււ մը :
2. » այդիէն երկաթուղեաց գործածուած տեղին փոխարինութիւնը :
3. Շուսար—Շահնաշար վարժարանի մէջ կիլիկեցի ձրիավարժ աշակերտաց վիճակը :
4. Ազգային վաղըֆաց ընդհանուր բաբկարգութիւնը :
5. Ազգային կալուածոց ապահովութիւնը :
6. Պահեստի Գիււանատուն :
7. Ուսումնական խորհրդոյ բողոքը Հիւանդանոցի հոգաբարձութեան դէմ որբանոցի մասին :

ԼԹ. ՆՆՍՏ 1 ՄԱՐՏ 1873 ՅԱՒՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պապրէիարք , Բաղ . Ժողով . 9

1. Բերայի կալուածոց Հոգաբարձութեան պարտամուրհակաց վաւերացման խնդիր :
2. Սեցիի Տ. Կարապետ և Տ. Գրիգոր քահանայից խնդիրները :
3. Տօքթօր Չայեան :
4. Հիւանդանոցի Հոգաբարձութեան խնդիրը , Հիւանդանոցի կալուածազրոց , արտօնազրոց ևն օրինակն առնել տալու մասին :
5. Բերայի առժամանակեայ թաղական խորհրդոյ հրատարականը :

Խ. ՆՆՍՏ Տ ՄԱՐՏ 1873 ՅԱՒՈՒՐ Խ. ԺՈՂՈՎՈՅ

Ս. Պապրէիարք , Բաղ . Ժողով . 10

1. Ուսումնական խորհրդոյ բողոքը Հիւանդանոցի հոգաբարձութեան դէմ որբանոցին համար :
2. Տօքթօր Չայեան :
3. Հասարակաց կրթութեան պաշտօնեայ

Բէմալ փաշայի Ս. Պապրիարք հօր տալիք այցելութիւնը :

4. Խ. Ղազարոսեան էֆէնտիի առնելիքի խնդիրը :

ԽԱ. ՆՆՍՏ 17 ՄԱՐՏ 1873

Ս. Պապրէիարք , Բաղ . Ժողով . 5

1. Խնդիր Հանդանախութեան ազգային մնացորդ պարտուց :
2. Ելեւմտից հոգաբարձութեան կազմութեան խնդիրը :
3. Հիւանդանոցի հոգաբարձութեան Խասագիւղի եկեղեցիէն պահանջած գումարի մը խնդիրը :
4. Ընդհանուր ժողովոյ ատենազրութեանց խմբագրութիւնը :
5. Գաւառական այցելուաց ամսականց համար Տնտեսական խորհրդոյ հարցումը :
6. Պահեստի Գիււանատուն :
7. Գումալափոյլի զրաի նոր թաղական խորհրդոյ ընտրութեան հրահանգ :
8. Գիտողութիւն Տնտեսական խորհրդոյի վերայ ամսականի Բարթուղիմէոս եպիսկոպոսի :
9. Երուսաղէմի փոխանորդ Խորէն վարդապետին տեղե կըը մահլիւլի մը խնդրոյ վրայ :

1873

Ս. Պապրէիարք , Բաղ . Ժողով . 5

1. Սամաթիոյ Թաղական ք ընտրութեան խնդիրը :
2. Իզմիրի նորընտիր Աւաջնորդին հրատարականը :
3. Խ. Ղազարոսեան էֆ . ի առնելիքը :
4. Ելեւմտից Հոգաբարձութեան մնացեալ անդամոց ընտրութիւնը :
5. Երուսաղէմի փոխանորդ Խորէն վարդապետի Տեղեկագիրը մահլիւլի մը խնդրոյ վրայ :
6. Ազգային մնացորդ պարտուց հանգանակութիւնը :

- 7. Պատրիարքարանին լմտտակարարութեան խնդիրը :
- 8. Իսթէնիայի Թաղական խնդիրը :
- 9. Իւսկիւտար Ս. Կարապետի ՎազըՖէն Մանլիւլի մը վաճառման խնդիր :

ԽԳ. ՆԻՍՏ 24 ՄԱՐՏ 1873

Ս. Պարբէիքս, Բաղ. Ժողով. 6

- 1. Պրուսայի խնդիրը :
- 2. Մշոյ մէջ Սահմանադրութեան դործադրութեան խնդիրը :
- 3. Կարսայ Ռչաունի Յովհաննէս եպիսկոպոսին վախճանիրը :
- 4. Ընդհանուր ժողովոյ ատենագրութեանց խմբագրութիւնը :
- 5. Տնտեսական խորհրդոյ յարաբերութեան խնդիրը դաւառաց հետ :
- 6. Ելեւմտից հոգաբարձութեան մնացեալ անդամոց ընտրութիւնը :

ԽԴ. ՆԻՍՏ 29 ՄԱՐՏ 1873

Ս. Պարբէիքս, Բաղ. Ժողով. 8

- 1. Յունաց Պատրիարքարանին այցելութեան խնդիրը :
- 2. Հիւանդանոցի ՎազըՖին խնդիրը :
- 3. Պէկեան էֆէնտիի խնդիրը :
- 4. Ազգային մնացորդ պարտուց խնդիրը, Ի ներկայութեան Տնտեսական խորհրդոյ :
- 5. Դիտողութիւն Տնտեսական խորհրդոյ Ի վերայ ամսական պահանջից Ս. Պատրիարքին :
- 6. Փոխառութիւն Կեդրոնական մատուկին համար Չատկական տօնի առթիւ :
- 7. Ելեւմտից Հոգաբարձութեան ընտրութիւնը :
- 8. Խ. Ղազարոսեան էֆէնտիի առնելիքը :

ԽԵ. ՆԻՍՏ 3 ԱՊՐԻԼ 1873

Ս. Պարբէիքս, Բաղ. Ժողով. 9

- 1. Ինչդիր ընտրութեան ելեւմտից Հոգաբարձութեան :
- 2. Տօքթօր Չայեան :

- 3. Բերայի Տօյապ տէրէ Թաղեցոց հանգանակութեան խնդիրը :
- 4. Հիւանդանոցի որբացին տաճկերէն դաստիարակութեան խնդիրը :
- 5. Բերայի Ազգապարի խնդիրը :
- 6. Բերայի կալուածոց Հոգաբարձութեան նոր պարտամտերակաց վաւերացումը :
- 7. Դիւանդապիր Յովհաննէս էֆ. Թուղլաճեանի ամսականի խնդիրը :
- 8. Արմաշու մանուց ելեւմտից եւ Տաճարին շինութեան հաշուեցոյցերը :
- 9. Փախաղեան Պետրոսի առնելիքի խնդիրը :

ԽԶ. ՆԻՍՏ 14 ԱՊՐԻԼ 1873

Ս. Պարբէիքս, Բաղ. Ժողով. 6

- 1. Եղմիրի Աւաջնորդական խնդիրը :
- 2. Բանթարճի Յակոբի ժառանգորդաց խնդիրը :
- 3. Շիրինեան Հաճի Թազնորի բողոքը Յունաց Պատրիարքարանի մէկ գրութեանը դէմ :
- 4. Չէլթունի ազգային արսային բողոքը Յունաց Պատրիարքարանի մէկ գրութեանը դէմ :
- 5. Սամաթիոյ Թաղական ընտրութիւնը :
- 6. Նորատունկեան Խաչիկ աղայի մատուկին խնդիրը :
- 7. Հիւանդանոցի ՎազըՖին ճապարակեան խնդիրը :
- 8. Բարեգործական ընկերութեան գումարին խնդիրը :
- 9. Պ. Ասատուր Ֆաբրեանի խնդիրը :

ԽԷ. ՆԻՍՏ 21 ԱՊՐԻԼ 1873

Ս. Պարբէիքս, Բաղ. Ժողով. 5

- 1. Բերայի Ազգապարի խնդիրը :
- 2. Սամաթիոյ Թաղական ընտրութիւնը :
- 3. Բերայի ընտրողական ժողովոյ անհամաձայնութիւնը :
- 4. Պէզճեան Նշան աղայի նպաստ :
- 5. Մուրատեան Եղիազար էֆ. գասառուին խնդիրը :

ԻՐ. ՆԻՍՏ 28 ԱՊՐԻԼ 1873

Ս. Պարբերաբար : Բաղ. Ժողով. 6

1. Բերայի ընտրողական ժողովոյ անհամաձայնութիւնը :
2. Բերայի Ալքազարի խնդիրը :
3. Սէլամիէի առժամանակեայ Թաղական խորհրդոյ հրատարականը :
4. Խ. Ղաղարտեան էֆ. ի առնելիքի խնդիրը :
5. Ս. Պարբերաբարի առաջարկութիւնը իւր եւ վարչութեան մէջ անհամաձայնութեան առիթ եղող խնդրոց համար յատուկ Խառն ժողով հրաւիրելու մասին :

ԻԹ. ՆԻՍՏ 5 ՄԱՅԻՍ 1873

Ս. Պարբերաբար : Բաղ. Ժողով. 7

1. Բերայի Ալքազարի խնդիրը :
2. Քընսալը կղզիի, եկեղեցւոյ շինութեան պարտքը :
3. Չարսանձախի խնդիրը :
4. Սամաթիոյ Թաղական ընտրութիւնը :
5. Աէզեան Նշան աղախի նպատակ :

Ծ. ՆԻՍՏ 15 ՄԱՅԻՍ 1873

Ս. Պարբերաբար, Բաղ. Ժողով. 7

1. Ժողովական Պայանեան եւ Հովուեան էֆէնտիներուն հրատարակիրը :
2. Ս. Պարբերաբարին ամսականաց խընդիրը :
3. Խ. Ղաղարտեան էֆ. ի առնելիքը :
4. Ազգ. մնացորդ պարտուց խնդիրը :
5. Վերանորոգում զիւանին Գաղաքական ժողովոյ :
6. Վարժապետանոցի խնդիրը :
7. Հիւանդանոցի Հոգաբարձութեան դիտողութիւնը Վազըֆի գործողութեանց վերաբերեալ վերջին հրահանգին դէմ :
8. Բարեգործական ընկերութեան գումարին խնդիրը :
9. Բերայի Ս. Յարութիւն Հիւանդանոցը :
10. Տնտեսական խորհրդոյ երկու տեղեկագրերը :

ԾԱ. ՆԻՍՏ 2 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պարբերաբար : Բաղ. Ժողով. 5

1. Ֆերադի իւմուխապէրի ժը խնդիրը :
2. Սամաթիոյ Թաղական խնդիրը :
3. Խ. Ղաղարտեան էֆ. ի առնելիքը :
4. Ճանիկ էֆ. Արամեան եւ Տէր Երեմիա քահանայ :
5. Տնտեսական խորհրդոյ բողոքը Ասիա լրագրոյ դէմ :
6. Թէքրիտաղէն ժողովրդական հանրագիր Առաջնորդին դէմ :

ԾԲ. ՆԻՍՏ 16 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պարբերաբար, Բաղ. Ժողով. 6

1. Ազգային պարտուց հանգանակութեան, Ս. Պարբերաբարը Հօր ամսականաց պահանջման, եւ ժողովոյ քրոջման նամակին պատասխան խնդիրները :
2. Սէլամիէի հրատարակ Թաղական խորհրդոյ հաշւոց եւ վարժապետաց պահանջի վճարման խնդիրները :
3. Դատը դիւղի Թաղական խնդիրը :
4. Սամաթիոյ Թաղական խնդիրը :
5. Սահմանադրութեան վերաբերման մասնաձեւ յարձակոյ շրջաբերականը :
6. Մարդուանէն հեռագիր մը :
7. Հիսարլեան Աարգախի եւ Աիզէճեան Միքայէլի հին առնելիքը :
8. Կտակաց Հոգաբարձութեան խնդիրը Թաղականաց Գ. անգամ աղաբարտադիր շրկելու մասին :

ԾԳ. ՆԻՍՏ 30 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պարբերաբար, Բաղ. Ժողով. 6

1. Ընտրութիւն Ելեւմտից Հոգաբարձութեան :
2. Կեդրոնական օնտուկին հաշուեցոյցին ու հաշուէկշռին գալը եւ ասոնց համար քընտրութեան մասնաձեւորոյ կառմութիւնը :
3. Տեսուչ խորհրդոց եւ Հոգաբարձութեանց կիսուակէս նորոգութիւնը :

4. Եկեղեցւոյ պարտուց եւ արտաներուն խնդիրը :

5. Կարնոյ առաջնորդին նամակը , Աղէքսանդրաբոյ քաղաքի ազգային ուսումնարանին շինութեան համար Կարսոյ անտառէն 2 հազար կտոր փայտի խնդրոյն վրայ , որ Ս. Էջմիածնի սինոզն նամակաւ ծանուցած էր :

6. Հիարու վարժարանին Կեդրոնական անուղիէն տրուելիք տմական նպատարին շարունակութեան խնդիրը :

7. Հացագործ Պ. Զաքար եւ անոր անվայել վարժուցքը :

ՄԻ. ՆՈՍ 7 ՅՈՒՒՍ 1873

Ս. Պարբերք , Բաշ. Ժողով . 6

1. Տօքթէօր Պէլրանի ժառանգութեան խնդիրը :

2. Գատը դիւղի Թաղական խնդիրը ,

3. Գանակլիի Թաղական խորհրդոյ հրաժարականը եւ ատենագետին բողոքը ,

4. Պէշքօղի Թաղական խորհրդոյ մէջ ծագած անհամաձայնութիւնը ,

5. Քրնայը կղզիի եկեղեցւոյ շինութեան պարտքը :

6. Ղուղուլջանցւոյ խնդիրը :

7. Սամաթիոյ Թաղական խնդիրը ,

8. Տէրոյնոց պատուեկի տան քառորդ մասին մահչիւլի խնդիրը :

9. Հաճի Ահմէտ էֆ. ի հին առնելիքի մասին Բ. Դռնէն ծանուցազիրը :

ՍԵ. ՆՈՍ 14 ՅՈՒՒՍ 1873

Ս. Պարբերք , Բաշ. Ժողով . 5

1. Իւսկիւտար Ալլամիլէի Թաղեցւոց ուսման պահանջումը :

2. Գատը դիւղի Թաղական խնդիրը ,

3. Ուսումնական խորհրդոյ խնդիրները ,

4. Բերայի Ս. Յարութիւն Հիւանդանոցը ,

5. Քրնայը կղզիի եկեղեցւոյ շինութեան պարտքը :

6. Վարժագետանոցի խնդիրը :

ՍՁ. ՆՈՍ 21 ՅՈՒՒՍ 1873

Բաշ. Ժողովակա՞ր 8

1. Նամակ Ս. Պատրիարքէն , Հայրենիք լրագրոյ մէջ Նրեմիա եպիսկոպոսի երկու նամակաց հրատարակութեանը համար քննութիւն պահանջելով :

2. Գատը դիւղի Թաղական խնդիրը :

3. Մշեցւոց թէ հանրագրով եւ թէ անձամբ բողոքելը մէջ մէջ Սահմանադրութեան դործադրութիւնն ետ մնալուն դէմ :

4. Առնադպր Գափաղեան էֆ. ի դիտողութիւնը :

ՍԼ. ՆՈՍ 26 ՅՈՒՒՍ 1873

Ս. Պարբերք , Բաշ. Ժողով . 8

1. Գատը դիւղի Թաղական խնդրոյն վրայ Ս. Պատրիարք Հօր բացատրութիւնը :

2. Ս. Պատրիարք Հօր հրատարակու դիտաւորութիւնը :


3. Տնտեսական խորհրդոյ եւ Ելեւմտոց Հոգաբարձութեան հրաժարեալ անդամոց տեղ նորոգ ընտրութիւն :

4. Նախորդ Տնտեսական խորհրդէն բացատրութիւն պահանջել ելմտական պաշտօնաւարութեան մասին :

ՍՐ. ՆՈՍ 2 ՕԳՈՍՏՈՍ 1873

Բաշ. Ժողովակա՞ր 6

Խնդիր Հրատարականի Գաղաքական ժողովոյ :



Չ .

ԱՌՁԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

Գաղաքական ժողովոյ իր համարատուութեան տեղեկագիրը կնքելու եւ կրօնական ժո-

զույգ խորհրդակցութեամբ և գործակցութեամբ տնօրինած գործոց համարատուութեան անցնելու մայրիկներն կը փոփայ Ազգային Ընդհանուր Ժողովոյէ հետեւալ առաջարկութիւնը ներկայացնել :

Յայտնի է որ Ընդհանուր Ժողովոյէ բնական և անժխտելի իրաւունքն է ,

Ա. Ազգային վարչութիւնն ընտրել .

Բ. Ազգային վարչութեան համարն աւետուր

Մինչև ցարդ Ընդհանուր Ժողովն իր ընտրական իրաւունքը միշտ գործադրած է . բայց համարատուութեան իրաւունքն երբեք գործադրած չէ : Եղած են Վարչութիւններ , որ իրենց համարատուութեան տեղեկագիրը տակալ ներկայացուցած են . բայց Ազգային Ընդհանուր Ժողովն դաննք նկատողութեան առած չէ :

Մինչև որ ըստ օրինի համարատուութիւն չկատարուի , և Վարչութեան արարքն ըստ արժանւոյն չքննուին , անհնար է Սահմանադրութենէն իրական օգուտ սպասել , և վարչական մեքենայն ուղղել . զի անցեալ վարչութեան գործոց համարատուութիւնը պիտի ուղղէ յաջորդ վարչութեանց քայլերը :

Եւ որովս պի այս համարատուութիւնը ճշդիւ և ժամանակի կատարուի , զիւրին և դանակ մը կ'առաջարկենք .

« Երբ սահմանադրական տարեդուին հասնելով Վարչութեան պաշտօնավարութեան պայմանաժամը լրանայ և նորն ընտրուի , կամ թէ Վարչութիւնը յաւաք քան զպայմանաժամն հրատարակի , Ընդհանուր Ժողովն ընտրէ Քննիչ Յանձնաժողով մը , որ երկուք 'ի Պատրիարքարան և հրատարեալ Վարչութեան առնադրութեանց , իջնակցութեանց , Թագրիրներու և այլ տուժարները մի առ մի քննէ , և իր զխտողութիւնները տեղեկագրէ առ Ընդհանուր Ժողովն : Միւս կողմն ալ զադարեալ կամ հրատարեալ Վարչութիւնն իր սովորական համարատուութեան տեղեկագիրը պարատեսչու և հրատարակութեամբ Ընդհանուր Ժողովոյէ ներկայացնելու պարտքը պիտի է որ կատարէ » :

Այս եղանակ համարատուութեամբ կը քննուին այն ամեն խնդիրները , որոնք ընդհանրապէս զանց կ'ըլլան համարատուութեան տեղեկագրին մէջ :

Այս եղանակ համարատուութիւն մը յոյժ օգտակար կրնայ ըլլալ թէ՛ Վարչութեան ընթացքին , և թէ՛ Ս. Պատրիարքին ու Վարչութեան մէջ եղած յարաբերութեան ճշդիւ պահպանութեանը . որք թէ և յստակ դժուած են Սահմանադրութեան մէջ , և բացորոշ կերպով բացատրուած իսկ են Սահմանադրութեան սկիզբը դրուած այն Յայտագրին մէջ , զոր Սահմանադրութեան խմբագիր և քննիչ եղող երկու Յանձնաժողովներ մատուցած են առ Կայսերական Բարեխնամ Կտակարարութիւնը . այսու ամենայնիւ Քաղաքական Ժողովս փորձառութեամբ վերահասու եղաւ թէ՛ ազգային Վարչութիւնը Ս. Պատրիարքէ աղեկացութենէն ազատ չէ . որով վարչական ընթացքն իր կանոնաւոր ուղղութենէն կը զրկուի , և զժողովութեանց կը սպասահի : Ասանկ վիճակի մէջ Ս. Պատրիարքը համոզելու կամ աւետուր սիրտը զիջեցանելու ճիշդեր պիտի թափուին , քան թէ խնդրելու բառակալ և բերել Ընդհանուր Ժողովոյէ , և ձեր թանկագին ժամերն սպասել . կամ Պատրիարքական խնդրով զբաղեցնել Ազգը , որ տակաւին միշտ փոթորակից եղած է : Այս եղանակ համարատուութեամբ Ս. Պատրիարքը՝ ալ համանրման Վարչութեան , իր և վարչութեան մէջ եղած Սահմանադրական յարաբերութեան պարտաւորութիւնը ճշդիւ կատարած կամ չկատարած ըլլալուն համար՝ Ընդհանուր Ժողովոյէ Վարչութեան կամ Սահմանադրական Քուէին կ'ենթարկուի . որով Պատրիարքախան բարձր աղեկացութիւնը կրնայ չափաւ որուիլ :

Քաղաքական Ժողովս՝ որ Սահմանադրական վարչութեան մէջ անժողով յարատուութեան ղեկիւն կատարելով , իր Սահմանադրական պարտաւորութիւնը ջանաց կատարել . և աշխատութեան օրինակ ապու համար զո՛նք տուաւ , և մինչև պաշտօնական ու անպաշտօն նախատանաց կամ համբերեց , և երբ յանդգնութիւնն իր վերջին աստիճանին հասած տեսաւ՝ իր հրատարակուող տալու պարտաւ որեցաւ . Քաղաք

քական ժողովս իր այս վիճակին մանրակրկիտ  
և անաչառ քննութեանը կարօտ՝ կ'առաջարկէ  
այս եղանակ համարառութիւն մը . շարունա-  
կելով այն բողոքը , որ թէ իր Հրաժարագրին

և թէ անոր ըստարութեան "տետրին միջո-  
ցաւ ներկայացուցած է արդէն Ազգային Ընդ-  
հանուր ժողովոյդ :

1½ փետրվար 187½

ԱՆԿԱՄՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ (1872—73 ԱՄԻ)

ԱԼԻՔՍԱՆ ԻՈՐԱՍԱՆՆԵԱՆ

ԲԱՐԹՈՂ Մ. ԳԻՐԻՔՅԻՊՅԵԱՆ

ԲԱՐՍԵՂ՝ ՀԱՄԱՅԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱԿԵՅԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԵՅԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՃԻՒՍՏԵԱՆ

ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Արեւայեք

ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՓԱԶԵԱՆՏ Արեւարդիք

ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ



ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

1872-1873 ԱՄԻ

ՄԱՍՆ Բ.

ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԵԿԵՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԵՆ

ԽԵՌՆ ԺՈՂՈՎՈՅ

Ա.

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Կրօնական եւ Գաղաքական Խառն Ժողովն իր առաջին նիստն բրաւ 1872 օգոստոս 3ին, եւ մինչեւ 1873 օգոստոս 3 Գաղաքական Ժողովոյ հրաժարման թուականը՝ մէկ տարւոյ պաշտօնավարութեան համարատուութիւնն ընել կը փութայ :

Խառն Ժողովոյ երկրորդ նիստին, 10 օգոստոս 1872, Սահմանադրութեան գործադրութեան խնդիրը երեւան ելաւ. եւ Ս. Պատրիարքը՝ ինչպէս Գաղաքական Ժողովոյ, նոյնպէս եւ Խառն Ժողովոյ մէջ միեւնոյն խնդիրը յարոյց, եւ ի հարկին Սահմանադրութեան շրջանակէն դուրս ելնելու ազատութիւն ունենալը պնդեց, Սահմանադրութիւնը վերաքրննութեան տակ ըլլալէն այս ազատութիւնն ունենալ ենթադրելով : Բայց երկու Ժողովներն ալ միարեան հաստատեցին թէ՛ Սահմանադրութիւնն ազատ թողած չէ Ս. Պատրիարքը միայնակ գործելու, այլ երկուց Ժողովոց հետ ի միասին պիտի գործէ. եւ երբ Ժողովները տեսնեն թէ Սահմանադրութեան մէկ կէտը խոչընդոտ մը կը շարունակէ գործադրութեան մէջ, այն ատեն օրինաւորութեամբ պիտի ղիմեն

ընդհանուր Ժողովին » . Ս. Պատրիարքը համակերպեցաւ Խառն Ժողովին այս յայտարարութեանը . որով Սահմանադրութեան գործադրութեան մասին Խառն Ժողովոյ եւ Ս. Պատրիարքին մէջ համաձայնութիւն գոյացաւ . (տես Բացատրութիւն Հրաժարագրի Գաղաքական Ժողովոյ, էրես 8) :

Խառն Ժողովն ընտրեց Կատաստանական խորհուրդը եւ Կտակաց հոգաբարձութիւնը ըստ Սահմանադրութեան . որք ձեռնարկեցին իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը կատարել . եւ այժմ պարտական են պատրաստել իրենց համարատուութեան տեղեկագրերը, յանուն Խառն Ժողովոյ օւղղելով առ Աղայային ընդհանուր Ժողովը :

Կատաստանական խորհրդոյ համարատուութիւնը թէ՛ եւ մինչեւ ցարդ ըստ օրինի կամ օրինակի այլոց Խորհրդոց կատարուած չէ, բայց Խառն Ժողովն նկատելով որ դատական տնօրէնութիւնը ամենէն աւելի պէտք ունին հրատարակութեան, եւ այս կերպով կարելի պիտի ըլլայ այս ճիւղը զօրացնել եւ զարգացնել, եւ ազգային օրինաւոր դատական

ատենանի կազմութիւնը ձեռք բերել, պատշաճ կը դաստի անոր անօրէնութեանց հրատարակութիւնը, ի բաց առեալ ամուսնական այն ստեակ դասերը, որոնց դազանի մնայը պատշաճ է :

Բ .

ՀՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԿՈՆՏՐԱԿՏԻ ՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԻՆՆԵՐԸ

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Սահմանարարական հրահանգ մը դաւառաց համար . զոր պատրաստած էր Խառն ժողովը Գիւսնան ըստ յանձնարարութեան Խառն ժողովը :

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Ռազմական խորհրդաց հրահանգը, զոր պատրաստած էր Քաղաքական ժողովը Գիւսնան ըստ յանձնարարութեան նորա :

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Վաւերացուց հրահանգը, զոր Վանօրէից խորհուրդը պատրաստած էր ըստ յանձնարարութեան Խառն ժողովը :

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Կորուստ Կանոնադրութիւնը, զոր պատրաստած էր Խառն ժողովը ըստ յանձնարարութեան Խառն ժողովը :

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Արտաքարտէս եւ Բնակարանային Վարչականաց ընդ որոշակաւ Կորուստ Կանոնադրութեան հրահանգը, զոր պատրաստած էր Քաղաքական ժողովը Գիւսնան ըստ յանձնարարութեան նորա :

Խառն ժողովը քննեց եւ վաւերացուց Վարչարարաց Բարեկարգութեան հրահանգը, զոր պատրաստած էր Ուսումնական խորհուրդն ըստ յանձնարարութեան Քաղաքական ժողովը :

Ասոնք հրատարակեալ են արդէն . ինչպէս նաեւ առանձինն արտատպելով իրրեւ Գ. մասն համարատուութեանս՝ Խառն ժողովը կը ներկայացնէ զանոնք Ազգային (Նիւզհանուր ժողովը) : Գատաստանական խորհրդից վերաբերեալ Հրահանգը թէ էն զիւսնին յանձնարարութիւն եղած էր պատրաստելու, բայց չլրացաւ հասնել քննութեան եւ վաւերացման, որ ի իստ պիտանի էր : Թէ Գատաստանական խորհրդից եւ թէ Փոխանորդարանի ընթացից ընդհանուր հանազամանացը նկատմամբ :

Գ .

ՍԱՀՄԱՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՎՈՒՍՈՒՍՅԱՆ ԿԱՅԻՆՆԵՐԸ

Սահմանարարական Հրահանգին համաձայն պատշաճ մէջ Սահմանարարութիւնը գործադրութիւն սկսելով, հետզհետէ նետեալ Առանորդական վիճակներն ընտրեցին իրենց Գաւառական ընդհանուր ժողովներն ու Գաւառական վարչութիւնները, զորս վաւերացուց Կնքորոնական վարչութեան Խառն ժողովը :

1. Պրուսա
2. Կարին
3. Թաւրիտաշ
4. Ասանա
5. Իջմիր
6. Արարիբեր
7. Խարբերդ
8. Արշակ
9. Շապին դարահիսար
10. Ազրբայձանուզլիս
11. Պոլսպիտ
12. Քէօթիսահ
13. Ամասիա
14. Չիլիմազ :

Հետեւեալ վիճակաց ժողովներն արդէն սահմանարարագէտ կազմուած են վաւերացեալ էին :

1. Նիկոսիոյի
2. Սեբաստիա
3. Կեսարիա
4. Ալի
5. Իզմիրի
6. Տրապիզոն :

Իսկ Վան, Բաբերդ, Պարսխալէր, Կարս Տիգրանակերտ, Բալու սիւսած են Սահմանարարութիւնը գործադրել :

- Մնացեալ վիճակաց մէջէն .
1. Ռուսուսի իր ժողովրդեան անուսականութիւնը յատմէ բերելով, միայն թաղական խորհուրդ մ'ընտրել կուզէր . բայց ժողով հարկ տեսաւ Ռուսուսի եւ չընտրեցին վիճակագիրը նախ ստանալ . որ դեռ չեղաւ :
  2. Ռուսուսի քաղաքական պատմական

րով անյարմար կը դասէր Սահմանադրութեան գործադրութիւնն իր մէջ :

3. Եփրատու անձոք գտնուեցաւ Սահմանադրութեան համաձայն իր ժողովները կազմելու . մանաւանդ Աղէքսանդրիոյ մէջ ծագած վէճին առթիւ յանձնարարութիւն եղաւ Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսին , որ Աղէքսանդրիոյ մէջ առանձին Թաղական խորհուրդ ընտրել տայ , և Աղէքսանդրիոյ ազգային սընտուկը չմիացնէ Գահիրէի սնտուկին հետ ըստ սկզբանց Սահմանադրութեան և Եփրատոսի փոխակ վարժարանները բանայ , և բացառութիւն տայ 4300 լիւրայի մը խնդրոյն վրայ , որոյ դէմ բողոք կը բառնային Աղէքսանդրացիք : Մեսրոպ եպիսկոպոսի բաւական ատեն լուծեցին ստիպելու , հարկ եղաւ Ա. Աղբարաբաղիը զրկել : Մեսրոպ եպիսկոպոսն այս մասին եկած պատասխանը գովազուցել չի դտնելով , պտտասխան գրուեցաւ , որ Սահմանադրական Հրահանգին համաձայն Նքիտոտոյ մէջ աղբային ժողովները կազմէ և Աղէքսանդրացեաց խնդիրն ալ ըստ Սահմանադրութեան կարգադրէ : Այս վերջին գրքը 'ի 45 մարտ 1873 ուղղեալ է , և մինչև 3 օրոտոտս 1873 անպատասխանի մնացած :

4. Գաղասիա առժամանակեայ միացեալ ըլլալով Եօզղասի հետ , առաջնորդ Արևատակէս եպիսկոպոսը կը գտնուէր յԵօզղաս . և Գաղասիոյ մէջ Սահմանադրութիւնը գործադրելու սկստունին յատկացած էր այցելու համբանեան Պողոս վարդապետ , որ կ'առաջարկէր առաջնորդանիտ ընել փոխանակ Գաղատիոյ գլխիօնդարանհար . բայց այս փոփոխութիւնն ընդունիլ անկարելի էր , զի ոչտք էր որ Ալիարհանջոյց տաստակը պտտրաստ ըլլար , և ընդհանուր վիճակաց համար տնօրէնութիւն մ'ըլլար : Յետոյ միացեալ վիճակներն ըստ որուման կրօնական ժողովոյ բաժանեալ հրատարակուելով , Արևատակէս եպիսկոպոս Գաղատիոյ առաջնորդութիւնն ընդունեց և ինչա 'ի Գաղատիա . բայց տակաւին չգիտցուիր թէ սկսա՞ւ սահմանադրուպէս ընտրել տայ Գաւառական ժողովները :

5. Ճանիկ }  
6. Քիչի } Թէև իրենց հովիւներն  
7. Արղնի } ունին , բայց լուռ մնացին  
8. Զնքուշ } ջին Սահմանադրութեան  
9. Քէմախ } գործադրութեան մասին :

10. Զարսնճազ թէև ընտրութիւնները կատարած և տեղեկագիրը դրկած էր , բայց թերի ըլլալուն համար չվաւերացաւ :

11. Գերջան Սահմանադրութիւնը չգործադրեց առաջնորդական Տեղապահին հրատարման և յաջորդին ընտրութեան յապաղման պտտմասաւ :

- 1. Երուսաղէմայ Բեթլէհէմի այրին խընդիրը :
- 2. Թէքիրտաղ դրկուելիք եկեղեցականը :
- 3. Քէօթճահիոյ Տէր Յովսէփի քահանայի համար հեռագիր :
- 4. Մալաթիոյ Առաքել վարդապետ մագլանէն :
- 5. Ֆանուշի վանահօր համար թաղրիր :
- 6. Ք. . . Ամուսնական խնդիր :
- 7. Վանայ առաջնորդական խնդիր :

Գ. ԿԵՍ 17 ԾԳՈՍՏՈՍ 1872

Ս. Պապրիբարք, Կրօն. 7, Բաղ. 6

- 1. Քէօթճահայի առաջնորդական խնդիր :
- 2. Մարզուանու առաջնորդական խնդիր :
- 3. Ք. Ամուսնական խնդիր :
- 4. Աղթամարայ Կաթողիկոսական խնդիր :
- 5. Եղեհիոյ Առաջնորդական Տեղապահին դէմ դանգատ :
- 6. Ենթայի Տօլապ տէրէ թաղեցւոց նոր եկեղեցւոյ շինութեան խնդիր :
- 7. Բարեբղի խնդրոյն վրայ Կարնոյ Առաջնորդին տեղեկագիրը :
- 8. Մուգաթայի տրոց վրայ Տնտեսական Խորհրդոյ առաջարկութիւնը ( Բաղ. քաղաք ) :

Դ. ԿԵՍ 24 ԾԳՈՍՏՈՍ 1872

Ս. Պապրիբարք, Կրօն. 7, Բաղ. 9

- 1. Վանայ առաջնորդական խնդիր :
- 2. Մարզուանու առաջնորդական խնդիր :
- 3. Պրուսայի առաջնորդական խնդիր :
- 4. Քէօթճահեռ դրկուելիք տեսուչը :
- 5. Մալաթիա դրկուելիք տեսուչը :
- 6. Առաջնորդացուաց ցուցակը :
- 7. Աղէքսանդրիոյ մէջ ծագած երկպառակութիւնը :
- 8. Բափուքէհեաթիին հրաժարականը :
- 9. Առաջնորդական խնդրոց համար Գաւառական Հրահանգին քննութեան յանձնաժողովի ընտրութիւն :

10. Ենթայի Տօլապ տէրէ թաղեցւոց խընդիրը :

- 11. Ագապեան վարժարանի խնդրոյն համար Յանձնաժողովի ընտրութիւն :
- 12. Երուսաղէմայ Պատրիարքէն Վանուց ընթացքին, վարժարանին և ելեւտից վիճակին վրայ տեղեկագիր ուղղել :
- 13. Դամասկոսի վանատան տեսչութեան խնդիրը :
- 14. Կտակաց Հոգաբարձութեան կազմութիւնը :
- 15. Պատրիարքարանի ելեւտից խնդիր (Բաղ. Ժող.) :
- 16. Թէքիրտաղեցոց ոմանց բողոքը արքունի դանձուն եղած 6 բռն պարտուց խնդրոյն վրայ :

Ե. ԿԵՍ 31 ԾԳՈՍՏՈՍ 1872

Ս. Պապրիբարք, Կրօն. 8, Բաղ. 9

- 1. Սըրբղի Առաջնորդ Պետրոս վարդապետի խնդիրը :
- 2. Պրուսայի առաջնորդական խնդիրը :

Զ. ԿԵՍ 7 ՍԵՊՏ. 1872

Ս. Պապրիբարք, Կրօն. 8 Բաղ. 7

- 1. Վաւերացումն առաջնորդական ընտրութեան Տրապիզոնի :
- 2. Մամբրէ վարդապետի Բաղիշոյ առաջնորդութեան խնդիրը :
- 3. Ք. Ամուսնական խնդիր :
- 4. Թէքիրտաղի Առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը :
- 5. Առաջնորդացուաց ցուցակը :
- 6. Կեսարիոյ մէջ նորակազմ ընկերութեան մը դպրոցի խնդիրը :
- 7. Գաւառաց քննիչ այցելուաց խնդիրը :
- 8. Ղուզուլմանցի ազգայնոց հարստահարութեան խնդիրը :

Է. ԿԵՍ 14 ՍԵՊՏ. 1872

Ս. Պապրիբարք, Կրօն. 5, Բաղ. 6

- 1. Վաւերացումն Սահմանադրական Հրահանգի գաւառաց համար :



2. Առաջնորդացուաց ցուցակին վաւերացումը :

3. Արտաշէրի Առաջնորդական տեղապահի ընտրութիւնն :

4. Թէլքիրտազի առաջնորդական ընտրութեան տեղեկագիր :

5. Պրուսայի տեսչաց ուղղորութիւնը :

6. Սեբաստիաց առաջնորդին հեռագիրը Երասար զեղացաց համար :

7. Եւզոկիոյ առաջնորդին հեռագիրը :

8. Գաղատիոյ Նաթանեան Պողոս վարդապետի հեռագիրը :

9. Կարնոյ Տ. Գրիգոր քահանայի հեռագիրը Պատրիարքեան Էջի. սպանման վրայ :

10. Ուսումնական խորհրդէն հրատարակուող տեղ ընտրութիւնն : (Բաւ. Ժաւ.)

11. Հանգուցեալ Եթովի կնոջ ժառանգորդաց դատը : (Բաւ. Ժաւ.)

Ը. ՆՈՒՏ 21 ՍԵՊՏ. 1872

Ս. Պապիւսք, Կրօն. 8, Բաղ. 7

1. Վանօրէից խորհրդոյ յայտագիրը 17 վանօրէից մէջ վարժարան բանալ տալու համար :

2. Եղզատու Կրօնական ժողովոյ հեռագիրը : Գաղատիոյ հետ միացեալ մնալու համար :

3. Բերայի Տօլապ տէրէի մէջ եկեղեցի և վարժարան շինել տալու խնդիր :

4. Մալաթիոյ Առաքել վարդապետը Պօլիս բերել տալու համար Թագրիր :

5. Ամասիայէն Եղեւսեան եպիսկոպոսի նամակը, Եւզոկիոյ վանքն երթալու խնդրանօր :

6. Պրուսա գացող տեսչներուն նամակը :

7. Ուսումնական խորհրդոյ կազմութիւնը : (Բաւ. Ժաւ.)

8. Հիւանդանոցի Վագրֆին խնդիրը : (Բաւ. Ժաւ.)

9. Պաւստանքին եկած հեռագրաց վրայ շրջաբերական : (Բաւ. Ժաւ.)

Թ. ՆՈՒՏ 28 ՍԵՊՏ. 1872

Ս. Պապիւսք, Կրօն. 7, Բաղ. 7

1. Արմաշէն Սեպի Նիկողոս եպիսկոպոսի նամակը Պօլիս գալու խնդրանօր :

2. Վաւերացուցն առաջնորդական ընտրութեան Թէլքիրտազի :

3. Աղջքանդրոյ ազգային մէջը :

4. Պէլլէիճի պէյլին հետ, եղած բանակցութիւնը, Թագրիր խնդրոց մասին ևլն :

5. Գաւառական Հրահանգին գործարութիւնը փութացնելու և վիճակագրութիւնն ինչ զրիկելու համար Բ. շրջաբերական :

Ժ. ՆՈՒՏ 12 ՀՈՒՏ. 1872

Ս. Պապիւսք, Կրօն. 7, Բաղ. 6

1. Կեսարիոյ նորակազմ ընկերութեան մը զարոցի խնդրոյն վրայ առ Բ. Գուռն սլատասխանագիր :

2. Եղեւսեան եպիսկոպոսի բողոքագիրը :

3. Կտակաց Հողաբարձութեան խնդիրը, կտակաց կանոնագրի պատրաստութեան համար :

4. Մամրէ վարդապետի Բաղշոյ առաջնորդութեան խնդրոյն վրայ Թագրիր :

5. Հիւանդանոցի Հողաբարձութեան խնդիրը պատասխանուող թիւը չափաւորելու և մտաւունքը բանալու համար : (Բաւ. Ժաւ.)

6. Ուսումնական խորհրդոյ հրատարակ մէկ անգամին տեղադրութիւնն : (Բաւ. Ժաւ.)

ԺԱ. ՆՈՒՏ 9 ՆՈՅՄԲԵՐ 1872

Ս. Պապիւսք, Կրօն. 6, Բաղ. 5

1. Բերայի եկեղեցւոյն մէջ կարդացուած կաթողիկոսական կոնդակը, Բերայի հրկիզեւոց ի նպատ հանգանակութեան մասին :

2. Պրուսայի առաջնորդական խնդիրը :

3. Պ. Ամուսնական խնդիր :

ԺԲ. ՆՈՒՏ 16 ՆՈՅՄԵՐ 1872

Ս. Պապիւսք, Կրօն. 9, Բաղ. 7

1. Բերայի եկեղեցւոյն մէջ կարդացուած կաթողիկոսական կոնդակը :

2. Առաջարկութիւն Ս. Պատրիարքի վարչական պատրիարքական խորհրդականի և տեղական մասնաժողովոյ հաստատութեան :

3. Պրուսայի խնդիր :

4. Վանօրէից խորհրդոյ առաջարկութիւնք, Արղշոյ, Գաղատիոյ և Մարդուանու վանուց նկատմամբ :

5. Կիլիկիոյ առաջնորդական վիճակաց ցուցակը :

6. Սահմանադրական Հրահանգին տըպրագրութեան աւարտիլը և յատուկ շրջաբերականաւ առ Առաջնորդս զրկուիլը :

7. Երուսաղէմի վանուց ժառանգաւորաց դպրոցին վիճակադիրը :

ԺԳ. ՆԻՍՏ 23 ՆՈՅՏՄԲԵՐ 1872

Ս. Պապրիարք, Կրժն. 8, Բաղ. 8

1. Առաջարկութիւնք Կիլիկիոյ Կաթուղիկոսին :

2. Բալուշի առաջնորդին հակառակ և ի նպաստ եղած հանրագիրներ :

3. Աղթամարայ կաթուղիկոսական Յանձնաժողովոյն պատրաստած տեղեկագրին ընթերցումը :

ԺԻ. ՆԻՍՏ 30 ՆՈՅՏՄԲԵՐ 1872

Ս. Պապրիարք, Կրժն. 9, Բաղ. 9

1. Բերայի գերեզմանատան խնդիր :

2. Իլիւրի առաջնորդական ընտրութիւն :

3. Բերայի Ամրոսիոս վարդապետին և Գալպէեան էֆ.ի մէջ եղած գծտութեան վրայ Բ. Դռնէն ծանուցագիր :

ԺԵ. ՆԻՍՏ 7 ԴԵԿՏ. 1872

Ս. Պապրիարք, Կրժն. 8, Բաղ. 7

1. Բերայի գերեզմանատան խնդիր :

2. Աղթամարայ կաթուղիկոսական խնդիր :

3. Թաղական խորհրդոց Հրահանգին ըընտրութեանը համար Խառն Յանձնաժողովոյ ընտրութիւնը :

ԺԶ. ՆԻՍՏ 14 ԴԵԿՏ. 1872

Կրժն. 9, Բաղ. 8

1. Պրուսայի խնդիր :

2. Բերայի գերեզմանատան խնդիր :

3. Վաւերացումն ընտրութեան վանահոյ Արմաշու :

4. Առ Վեհափառ Կաթուղիկոսն նամակ Բերայի հրկիւղեց համար :

5. Կիլիկիոյ կաթուղիկոսին իրաւասութեան սահմանը առաջնորդական խնդրոց մէջ :

ԺԷ. ՆԻՍՏ 21 ԴԵԿՏ. 1872

Ս. Պապրիարք, Կրժն. 8, Բաղ. 10

1. Պրուսայի խնդիր :

2. Բերայի գերեզմանատան խնդիր :

ԺԸ. ՆԻՍՏ 23 ԴԵԿՏ. 1872 ԱՐՏԱԲՈՑ ԿԱՐԳԻ

Ս. Պապրիարք, Կրժն. 6, Բաղ. 9

1. Բերայի գերեզմանատան և Պրուսայի խնդիրը :

2. Քըղիի ևն. խնդրոյն համար պատասխանագիրը :

3. Ահնայ Առաջնորդին հրաժարականը և նոր ընտրութեան հրահանգ :

4. Սամսիա զրկուելը եկեղեցականը :

ԺԹ. ՆԻՍՏ 30 ԴԵԿՏ. 1872

Ս. Պապրիարք, Կրժն. 7, Բաղ. 9

1. Քննութիւն և վաւերացումն Սահմանադրական Հրահանգի վանօրէից համար :

2. Յունաց Պատրիարքարանը այցելութեան ընդհատման խնդիրը :

3. Պրուսայի խնդիրը :

4. Կիլիկիոյ վիճակներէն 3 աշակերտ Արմաշու վարժարանը զնելու խնդիր :

Ի. ՆԻՍՏ 4 ՅՈՒՆՎԱՐ 1873

Կրժն. 5, Բաղ. 5

1. Բերայի գերեզմանատան համար ուղերձ շնորհակալութեան առ Վեհ. Սուրբան և Մայր Թաղուհին :

2. Պրուսայի խնդիր :

- 3. Առաստիոյ Առաջնորդական խնդիր :
- 4. Մամբրէ վարդապետի եպիսկոպոսութեան խնդիր :
- 5. Իշխիրի Գաւառական ժողովոյ և Վարչութեան ընտրութիւն :
- 6. Երզրատի ժողովորդեան խնդիրը Գաղատիոյ հետ միացման :
- 7. Քէօթահեա զրկուելիք եկեղեցականը :
- 8. Սլեբտի Տ. Յովհաննէս քահանայ :
- 9. Հրէից Խախտմազլխոյն շնորհաւորութեան նամակը :

ԻԱ. ՆԻՍՏ 9 ՅՈՒՆՎԱՐ 1873

Կրօն . 7 , Գաղ . 9

- 1. Պրուսայի խնդիր :
- 2. Եւգոհիոյ դասատուին բանտարկութիւնը :
- 3. Մալաթիոյ Առաքել վարդապետը :
- 4. Ք. Ամուսնական խնդիրը :
- 5. Օրացոյցի տպագրութեան խնդիրը :

ԻԲ. ՆԻՍՏ 11 ՅՈՒՆՎԱՐ 1873

Կրօն . 7 , Գաղ . 7

- 1. Այցելութեան Եպիսկոպոսաց առ Մեծ Եպարզոսն :
- 2. Քղիի և այլն խնդրոյն համար պատասխանագրին վերջին ընթերցում :
- 3. Քենութիւն և վաւերացումն Սահմարական հրահանգի թաղական խորհրդոց :
- 4. Բերայի գերեզմանատան խնդրոյն վերայ նամակ Բ. առ Վեհ . Կաթուղիկոսն :
- 5. Կիլիկիոյ Կաթուղիկոսին խոստմնազիրը :

ԻԳ. ՆԻՍՏ 18 ՅՈՒՆՎԱՐ 1873

Կրօն . 5 , Գաղ . 8

- 1. Ճէրի գեղի գերեզմանատունէն հանուած ճնջեցելոյն խնդիրը :
- 2. Պուզկարաց Կլզարբին շնորհաւորական նամակը :
- 3. Աղբքանդրիոյ ազդային վէճը :

4. Աղբքանդրիայէն եկող Կարապետ վարդապետի խնդիրը :

- 5. Մալաթիա զրկուելիք եկեղեցականը :
- 6. Սլեբտի Տ. Յովհաննէսի համար վերըստին թաղարի 'ի Լիւմ արտուելու մասին :
- 7. Տիգրանակերտի Առաջնորդին հրատարականք և ընտրութիւն առաջնորդական տղապահի :
- 8. Երեսիոյ Գաւիթ վարդապետին պաշտօնէ դադարումն և նոր տեղափոխի ընտրութիւն :
- 9. Ալիայ առաջնորդական ընտրութեան համար ցուցակ ընտրելուց :
- 10. Տրապիզոնի Առաջնորդին առ տեղական Կառավարութիւնն ըրած մէկ թագրերի օրինակը :

ԻԴ. ՆԻՍՏ 25 ՅՈՒՆՎԱՐ 1873

Ս . Պատրիարք , Կրօն . 5 , Գաղ . 6

- 1. Ամասիոյ Առաջնորդ Երեսեան Սըրբազանին բողոքը , վիճակին աթոռակաջ խնդրոյն համար :
- 2. Ամասիա զրկուելիք եկեղեցականը :
- 3. Վանօրէից խորհրդոյ առաջարկութիւնք :
- 4. Տիգրանակերտի առաջնորդական տղապահի նորընտրութիւն :
- 5. Իշխիրի ընտրութեանց դէմ բողոք :
- 6. Երզնկայի Առաջնորդին նամակը Մասիա լրագրոյ մէջ , 'ի նպատտ Շախ Հիւսէյինի :
- 7. Պրուսայի Բարթուղիմէոս եպիսկոպոսի նիւթական պիտոյից խնդիրը :

ԻԵ. ՆԻՍՏ 1 ՓԵՏՐՎԱՐ 1873

Ս . Պատրիարք , Կրօն . 7 , Գաղ . 8

- 1. Գաւառական այցելուաց խնդիրը :
- 2. Հարսանեաց բարեկարգութեան , Դըրախոմայի և Պալլըխի խնդիրները :
- 3. Կիլիկիոյ Կաթուղիկոսին իրաւասութեան սահմանն առաջնորդական խնդրոց մէջ :
- 4. Եւգոհիոյ Առաջնորդին և դասատուին համար Բ. Դռնէն եկած ծանուցագիր :
- 5. Թէքլիքտաղի Առաջնորդին խնդիրները :
- 6. Երուսաղէմայ Պատրիարքին պատաս-

խանադիրը Երրևանդէմէն ուզուած Երեսօխ-  
խանին և Կիլիկիոյ վիճակաց համար ուզուած  
վարդապետաց համար :

7. Դերջանի Տխմիթէոս վարդապետին  
հրածարականը :

8. Տեղրանեան Մկրտիչ եպիսկոպոսի  
խնդիրը՝ առաջնորդութեան պաշտօնի համար :

9. Խարբերդեաց ոմանց բողոքը Պետրոս  
վարդապետին դէմ :

ԻԶ. ՆՒՍ 7 ՓԵՏՐՎԱՐ 1873

Ս. Պապրիարք, Կրօն . 4, Բաղ . 5

1. Եւդոկիոյ ազգային խոտվութիւնը :
2. Սղերդի Յովհաննէս քահանայի խըն-  
դիրը :

ԻԷ. ՆՒՍ 22 ՓԵՏՐՎԱՐ 1873

Ս. Պապրիարք, Կրօն . 7, Բաղ . 6

1. Երուսաղէմայ Ս. Ծննդեան այրին  
խնդիրը :
2. Եւդոկիոյ խնդիրը :
3. Կոսկաց կանոնադիր և հրահանգ յա-  
րարերութեան առաջնորդաց ընդ տեղական  
կառավարութեան, Խառն և Յանձնաժողովոյ  
քննութեան յանձնեալ :
4. Վանօթից խորհրդոյ առաջարկութիւ-  
նը վասն վանահայրութեան Գաղատիոյ վա-  
նուց :
5. Մալաթիոյ Առաջնորդական տեղա-  
պահի ընտրութիւնը :
6. Կիլիկիոյ Կաթուղիկոսին տասն խըն-  
դիրները :
7. Վաւերացումն Իլդիրի Գաւառական  
ժողովոյ և վարչութեան :
8. Երզնկայի առաջնորդին հեռագիրը :
9. Ամասիայէն եկած հեռագիրներն ա-  
ռաջնորդական խնդրոյն վերաբերեալ :
10. Կիլիկիոյ Կաթուղիկոսին խոստմնա-  
դիրը :

ԻԸ. ՆՒՍ 1 ՄԱՐՏ 1873

Ս. Պապրիարք, Կրօն . 4, Բաղ . 9

1. Առաջարկութիւն Ս. Պատրիարք հօր,

տեղական և գաւառական գործերն իրարմ  
զատելով, ժողովն երկուքի բաժնիւ և շա-  
բաթն երկու նիստ ընելու համար :

2. Վաւերացում ընտրութեան Գաւառա-  
կան ժողովոց Արապկէրի :

3. Բողոք Խարբերդեաց ոմանց Պետրոս  
վարդապետին դէմ :

4. Եւդոկիոյ խնդիրը :

ԻԹ. ՆՒՍ 3 ՄԱՐՏ 1873 ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ

Ս. Պապրիարք, Կրօն . 3, Բաղ . 4

1. Ընթերցում և վաւերացում 13 նստե-  
րու ատենագրութեանց :

Լ. ՆՒՍ 8 ՄԱՐՏ 1873

Ս. Պապրիարք, Կրօն . 7, Բաղ . 10

1. Եղեսեան Սրբազանի խնդիրը Ամասիոյ  
մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը դի-  
րացնելու համար :

2. Կոնդակ Վեհ. Կաթուղիկոսին ուղղեալ  
առ Խառն ժողովն :

3. Արմաշու վանահայր Խորէն վարդապե-  
տի եպիսկոպոսութեան խնդիրը :

4. Ուսումնական խորհրդոյ խնդիրը վասն  
Վարժապետանոցի :

5. Սամաթիոյ յուզմանց քննիչ Մանաժե-  
ղովոյ Ա. տեղեկագիրը :

ԼԱ. ՆՒՍ 10 ՄԱՐՏ 1873 ԱՐՏԱՔՈՑ ԿԱՐԳԻ

Ս. Պապրիարք, Կրօն . 6, Բաղ . 6

1. Շարունակութիւն և վերջ ընթերցման  
և վաւերացման Գաղաքական և Խառն ժող-  
ովոց 21 ատենագրութեանց :

2. Բերայի ընտրողական ժողովոյ նախալր :

3. Պրուսայի խնդիրը :

ԼԲ. ՆՒՍ 15 ՄԱՐՏ 1873

Ս. Պապրիարք, Կրօն . 8, Բաղ . 7

1. Կոսկաց կանոնադիր և Հրահանգ յա-  
րարերութեան առաջնորդաց ընդ տեղական  
Կառավարութեան :

2. Գաւառներէն եկած վիճակագրական  
ցուցակները :

3. Խնդիր Համարատուութեան ի 1 մայիսի 1873:

4. Վաւերացումն ընտրութեան Առաջնորդին Իզմիրի:

5. Վաւերացումն Խարբերդի Գաւառական ժողովոց:

6. Վաւերացումն Երզնկայի Գաւառական ժողովոց:

7. Առանայի Գաղաքական ժողովոյ ընտրութիւնը եւ խնդիր առաջնորդական ընտրելեաց ցուցակին:

8. Տիգրանակերտի Յակոբ եպիսկոպոսի հրաժարականը Երեսիոյ տեղապահութենէն:

9. Երեսիոյ Գաւիթ վարդապետին համար հեռագիր:

10. Եղիպտոսի Մեսրոպ եպիսկոպոսին պատահանագիրը:

11. Օրացոյցի Մամաժողովոյ առաջարկութիւնը:

12. Կիլիկիոյ առաջնորդական վիճակաց խնդիրը:

13. Գաղատիոյ վանուց նորընտիր վանահօր հրաժարականը:

14. Բացատրութիւն վանն Պատրիարքական հեռագրին որ ՚ի Ս. Երուսաղէմ:

15. Պատրիարքական խորհրդականի եւ Տեղական մամաժողովոյ հաստատութեան համար Ս. Պատրիարք հօր առաջարկութիւնը:

16. Եւզոկիոյ խնդիրը:

17. Առաջնորդաց հրաժարեցուցման սկզբունքի խնդիր:

18. Սամաթիոյ յուզմանց քննիչ Մամաժողովոյ Բ. տեղեկագիրը:

19. Սամաթիոյ Թաղական խորհրդոյն հրաժարման խնդիրը. (Ք. Ժ.):

19. ՆՍՍ 23 ՄԱՐՏ 1873 ԱՐՏԱՐՈՅ ԿԱՐԳԻ

Ս. Պատրիարք, Կրօն. 6, Բաղ. 6

1. Իզմիրի առաջնորդական ընտրութիւնը:

17. ՆՍՍ 19 ԱՊՐԻԼ, 1873

Ս. Պատրիարք, Կրօն. 4, Բաղ. 6

1. Նիկոմիդիոյ Առաջնորդ Ներսէս եպիսկոպոսէն կտակի մը խնդիր:

2. Նիկոմիդիոյ Առաջնորդ Ներսէս եպիսկոպոսի քարոզութեան խնդիր:

3. Իզմիրի Առաջնորդական խնդիր:

4. Վաւերացումն Գաւառական ժողովոց Ալերիանուպոլսոյ:

5. Սաքայեան Ալիքսան էֆ.ի եւ իւր եղբօր ու քեռ պայմանագրին վաւերացումը:

6. Վարչութեան երկու ժողովոց կնիքներու, եւ Ս. Պատրիարք Հօր այցելութեանց խնդիրը:

7. Բերայի Ալքազարի խնդիրը. (Ք. Ժ.):

16. ՆՍՍ 26 ԱՊՐԻԼ, 1873

Ս. Պատրիարք, Կրօն. 7, Բաղ. 8

1. Դատական տեղեկագրեր Դատատանական խորհրդոյ:

2. Եօզղատի ժողովրդեան հանրագիրը, եւ ընտրութիւն Առաջնորդական Տեղապահի:

3. Կիլիկիոյ Կաթուղիկոսին իրաւատութեան սահմանն Առաջնորդական խնդրոց մէջ:

4. Ռշտունի հանգուցեալ և Յովհաննէս եպիսկոպոսի գոյից խնդիրը:

5. Գաւառական այցելուաց ամսականի խնդիրը:

6. Իզմիրի Առաջնորդական խնդիրը:

7. Մարզումնու Յակոբ վարդապետի նամակը:

8. Վանօրէից խորհրդոյ առաջարկութիւնը վանն վանհայրութեան Եւզոկիոյ Յովակիմ Աննա վանուց:

9. Ալաճաճեան Նշանի կտակին խնդիրը:

10. Քէօթհահայի մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը:

11. Խարբերդի Գուլէ վանուց վանահօր խնդիրը Խարբերդէն անկախ ըլլալու մասին:

12. Տիգրանակերտի հրաժարեալ Յակոբ եպիսկոպոս:

13. Երզնկայի Առաջնորդին մայրաքաղաքս դալը:

14. Վանայ մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը:

15. Բալուչի մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը:

16. Պալքէէսիրի մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը:

17. Խնդիր սկզբունքի հրաժարեցուցման առաջնորդաց:

18. Օրացոյցի խնդիրը :

19. Երուսաղէմայ Պատրիարքին զիտողութիւնը կիլիկիոյ մէջ պաշտօն վարելու համար խնդրուած վարդապետաց մասին :

20. Սամաթիոյ Թաղական ընտրութիւնը . (Բ. Ժ.) :

12. ԿՆՍՏ 3 ՄԱՅՍՍ 1873

Ս. Պապրիարք , Կրօն . 5 , Բաղ . 7

1. Բացատրութիւն վասն Պատրիարքական հեռագրին որ ի Ս. Երուսաղէմ :

2. Սամաթիոյ Եէնի մահալլէցուոց բողոքը երախայի մը համար :

3. Մուսուլի քահանային համար նպաստի խնդիր :

4. Բեքայի ընտրողական ժողովոյ անհամաձայնութիւնը :

13. ԿՆՍՏ 10 ՄԱՅՍՍ 1873

Ս. Պապրիարք , Կրօն . 7 , Բաղ . 7

1. Ամսայիոյ Սահմանադրութեան գործադրութեան տեսուչ Պետրոս վարդապետին խնդիրնէրը :

2. Բուսճուլի Սահմանադրութեան գործադրութեան տեսուչ Գէորգ վարդապետին խնդիրը :

3. Եշեանոյ Դաւիթ վարդապետին Պօլիս դալը :

4. Ընտրութիւն Առաջնորդական տեղապահի Կարնոյ :

5. Արապկերի Առաջնորդական ընտրութեան խնդիրը :

6. Վաւերացունմն Շապինգարահիսարի Գաւառական ժողովոյ :

7. Իզմիրի Առաջնորդական խնդիրը :

8. Վանայ մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը :

9. Բալուի մէջ Սահմանադրութեան գործադրութիւնը :

10. Դատաստանական խորհրդոյ բողոքադիրը :

11. Բեքայի Աւգազարի խնդիրը (Բ. Ժ.) :

14. ԿՆՍՏ 24 ՄԱՅՍՍ 1873

Ս. Պապրիարք , Կրօն . 6 , Բաղ . 7

1. Եշեանայէն եկող Դաւիթ վարդապետը :

2. Երզնկայէն եկող Գրիգորիս վարդապետին բացատրութեան զիրը :

3. Քենութիւն և վաւերացունմն Կոստանց կանոնագրի :

4. Սյլարաւանից մէջ եղած ամուսնական դատերու խնդիրը :

5. Բողոք և զիտողութիւնը Ս. Պատրիարքի՝ ապրիլի 19 ի նստի ատենագրութեան մէջ այցելութեանց ետ ձեւաւ մասին փախարհան էջի ի խօսքերուն վրայօր :

15. ԿՆՍՏ 31 ՄԱՅՍՍ 1873

Կրօն . 4 , Բաղ . 5

1. Հրահանդ յարաբերութեան Առաջնորդաց ընդ տեղական Կառավարութեան .

2. Ճանիկ էջի Արամեանի բողոքը Տ. Կրիստի հօր դէմ :

3. Պրուսայի խնդիրը :

16. ԿՆՍՏ 7 ՅՈՒՆ . 1873

Ս. Պապրիարք , Կրօն . 9 , Բաղ . 5

1. Քենութիւն և վաւերացունմն Հրահանդի յարաբերութեան Առաջնորդաց ընդ տեղական Կառավարութեան :

2. Ճանիկ էջի Արամեանի խնդիրը :

3. Գուզուլճանցուոց հարստահարութեան խնդիրը :

4. Վաւերացունմն Պայազիտի Գաւառական ժողովոյ :

5. Բալուլի Առաջնորդ Բազուանեան Պետրոս վարդապետի նամակը :

6. Գաղատիոյ Արիստակէս եպիսկոպոսին նամակը :

7. Վաւերացունմն Քէօթահայի Գաւառական ժողովոյ :

8. Երզնկայէն եկող Գրիգորիս վարդապետի բացատրութիւնը :

9. Գատը զԼՂԻ Թաղական խնդիրը (Բ. Ժ.) :

17. ԿՆՍՏ 11 ՅՈՒՆ . 1873

Ս. Պապրիարք , Կրօն . 7 , Բաղ . 7

1. Պրուսայի խնդիրը :

2. Դուզուելանցոց հարստահարութեանը համար ընդ արձակ տեղեկագրութեամբ Թագրիրը :

3. Պաւաւաց համար նոր շրջաբերական :

4. Ընդհանուր հարստահարութեանց տեղեկագրին մատուցման խնդիրը :

5. Հրահանդ Կելիկոյ Կաթուղիկոսին իրաւաբութեան սահմանին Աւաջնորդական խնդրոց մէջ :

6. Հիւանդանոցի վազըՖի խնդիրը (Ք. Ժ.) :

ԽԲ. ՆԻՍՏ 19 ՅՈՒՆ. 1873

Ս. Պապրիարք, Կրճ. 4, Քաղ. 5

1. Կ. Յ. ամուսնական դատին վերաբննիչ Մասնաժողովին Տեղեկագիրը և Դատաստանական խորհրդոյ Հրահանդին պատրաստութեան խնդիրը :

2. Տպագրելչ ճանիկ ԷՖ. Արամեանի բողոքը :

3. Պարոնիկեան Պ. Մելլընի դատին վերաբննութիւնը :

4. Երզնկայի Գրիգորիս վարդապետին բացատրութեան խնդիրը :

5. Հիւսարցի Անթառամ կնոջ կտակի խնդիրը :

6. Մալաթիոյ կրօնախոյս Առաքել վարդապետը :

7. Ընտրութիւն Վանահօր Ակնայ Ս. Փրկչի վանուց :

ԽԳ. ՆԻՍՏ 26 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պապրիարք, Կրճ. 7, Քաղ. 8

1. Ղազար վարդապետին խնդիրը :

2. Պրուսայի խնդիրը :

3. Ասորոց Պետրոս եպիսկոպոսին խընդիրը :

ԽԴ. ՆԻՍՏ 3 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պապրիարք, Կրճ. 6, Քաղ. 6

1. Ղազար վարդապետին խնդիրը :

2. Երզնկայի Ալեքթեան Գրիգորիս վարդապետին խնդիրը :

3. Բալուի Աւաջնորդին պաշտօնէ դադարուելը :

4. Իզմիրի վարդութեան խնդիրը :

5. Սասորոց բաժամման խնդիրը :

6. Երուսաղէմայ վանուց վիճակագիրը, և խնդիր պատրաստութեան յատակագծի աղագային ամենայն սեպակահնութեանց 'ի Ս. Տէղիս :

7. Կիսով չափ վերանորոգում Դատաստանական խորհրդոյ և Կոստիաց հողարարձութեան :

8. Միւս Տեսուչ խորհրդոց և Հողարարձութեանց վիճակաւ եղածներուն տեղ ընտրութիւն (Ք. Ժ.) :

ԽԵ. ՆԻՍՏ 10 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պապրիարք, Կրճ. 5, Քաղ. 5

1. Սամաթիոյ Թաղական խնդիրը :

2. Բողոք Բալուցոց ընդդէմ Սարգիս վարդապետի :

3. Պրուսայի խնդիրը :

ԽԶ. ՆԻՍՏ 17 ՅՈՒՆԻՍ 1873

Կրճ. 7, Քաղ. 6

1. Իզմիրէն նոր նամակ, առժամանակեայ Տեղապահ մը ուղերւո մասին :

2. Քէօթահէնայի Ստեփան վարդապետէն եկած հեռագիրը, և ժողովոյ կողմէն Տաճկեթէնի դիւանին տրուած մասնաւոր շրահանպները :

3. Քննութիւն և վաւերացումն Հրահանագի Բարեկարգութեան վարժարանաց, և աւաջարկութիւն Ռուսմանական խորհրդոյ վանորէնց մէջ հրազարծական ուսումը մտցնելու համար :

ԽԷ. ՆԻՍՏ 24 ՅՈՒՆԻՍ 1873

Ս. Պապրիարք, Կրճ. 5, Քաղ. 6

1. Իզմիրէն նոր նամակ, ընտրութիւն առժամանակեայ Տեղապահի :

2. Երուսաղէմայ Բէթլէհէմի այրին խնդիրը :

3. Պրուսայի խնդիրը :

4. Եւզուկիոյ խնդիրը :

5. Իւսկիւտոր Ս. Կարապետի Թաղա-  
կան խորհրդոյ խնդիրը (Ք. Ժ.) :

6. Վաւերացումն ընտրութեան Կրօնա-  
կան և Քաղաքական ժողովոց Շատլին գարա-  
հիարի :

7. Հիւանդանոցի Վազըֆի խնդիրը  
(Ք. Ժ.) :

8. Մշջ մէջ Սահմանադրութեան գոր-  
ծադրութեան խնդիրը :

9. Առաջնորդական վիճակաց ոմանց  
և մանաւանդ Կիլիկիոյ վիճակաց անհովիւ  
մնալը :

10. Սամաթիոյ ընտրողական ժողովոյն  
խնդիրը :

11. Ընտրութիւն վանահօր Ս. Խաչկայ  
վանուց Կարնոյ :


12. Վաւերացումն Հրահանգի Բարեկար-  
գութեան վարժարանաց ի Ս. Պատրիարքէ :

13. Վաւերացումն ընտրութեան Գաւա-  
ռական ժողովոյն Ամասիոյ :

ԽԸ. ՆՈՍ 31 ՅՈՒՎՍ 1873

Ս. Պատրիարք. Կրօն. Բաղ. 7

Խնդիր անհամաձայնութեան Ս. Պատր-  
իարքի և վարչութեան մէջ :



ԺԳ.

ՕՐԻՆԱԿԲ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆԱՐ  
ԱՌ ԳՈՒՌԱՌՈ

1.

Ազգային նորընտիր Քաղաքական ժողովն  
իւր երկրորդ նստին մէջ որոշեց որ մասնաւոր  
վիճակագրութիւն մը ըլլայ, զիտնալու հա-  
մար թէ իւրաքանչիւր Առաջնորդական վիճակ  
ո՞րչափ գիւղաքաղաք և գիւղ կը պարունակէ,  
և թէ նոյն գիւղաքաղաք և գիւղորէք ո՞րչափ  
եկեղեցի և վարժարան ունին, և թէ վար-  
ժարանաց մէջ ի՞նչ ուսմունք կ'աւանդուին,  
և այլն :

Աւստի ներկայ շրջաբերականաւ սրարտք  
կը դնենք նաև Ձեր վրայ, որ յիշեալ վիճա-  
կագրութիւնը պատրաստելով որչափ կարելի  
է՝ փութով մեզ ուղարկելու հոգ տանիք :

Ձեր այս գործը զիրացնելու համար  
մեք արդէն պահանջուած ամեն կէտերը արդ-  
եալ ցուցանելու վրայ նշանակած ենք, որոց  
ամեն մէկուն վրայ ԱՕական Թուանշան կայ,  
և նոյն ցուցանելուն (այստան) հատ ներկայ-  
եալ կը դրկենք. որպէսզի քանի հատ որ պէտք  
ըլլայ Ձեր վիճակին համար գործածէք, իւրա-  
քանչիւր թուանշանի առջև գիւղի մը անուն  
նշանակելով և անոր զիմացի սիւնակներուն  
մէջ նոյն գիւղին պարունակութիւնները սիւ-  
նակներուն վրայի հարցմանց համաձայն :

Հաւաստի եմք որ Ազգային վարչութեան  
Քաղաքական ժողովոյ այս ամենակարեւոր  
որոշումը առանց յապաղման և կատարեալ ու-  
շագրութեամբ ՚ի գործ դնելու փոյթ կը տա-  
նիք. և զրիւտած ցուցակներուն մէջ պէտք  
եղած տեղեկութիւնները նշանակելով և առ-  
բաղբերով կը վերադարձնէք մեզ Ձեր նամակալը

22 Յուլիս 1872

Մնանք ազօթարար  
Ի Պատրիարքարանի Հայոց (սոր. Ս. Պատր.)

Կ. Պօլիս

2.

Ընդ գրոյս ներփակեալ կ'ստանայք չը-  
րահանգ մը, որ Գաւառական Ընդհանուր Ժո-  
ղովոյ կազմութեան համար Կեդրոնական վար-  
չութեան Խառն ժողովոյն կողմէ այս անգամ  
պատրաստուելով՝ որոշուեցաւ բոլոր այն վի-  
ճակները զրկել, ուր Սահմանադրութեան հա-  
տատութենէն ՚ի վեր օրինաւոր դաւառական  
ժողովներ կազմուած չ'ըլլալով, իրենց ազգային  
գործոց ընթացքը Սահմանադրութեան գծած  
օրինաւոր ուղղութենէն զուրկ կը դառնի :  
Սոյն Հրահանգին մէջ խնամով հոգ տարուած  
է այն ամեն գիւրութիւնները մատուցանել  
Ձեզ, որովք կարող էք մէկ ամսուան մէջ կա-  
տարել վիճակիդ Գաւառական Ընդհանուր Ժո-  
ղովոյ ընտրութիւնը. այսու ամենայնիւ մեք  
բաւական ենք աւելի միջոց և ժամանակ տալու  
համար՝ Երջաբերականս Ձեզ հասած օրէն ըս-  
կուեալ երկու ամիս պայմանաժամ կուտանք  
Ձեզ, և կ'ստիպենք որ երկամսոյ միջոցի մէջ  
բոլոր ընտրական գործողութիւններն աւարտե-  
լով Գաւառական ժողովոյդ կազմութեան տե-  
ղեկագրոյն հետ՝ անոր բայման լուրը հաղոր-  
դէք մեզ և Հարկ կը համարուի յայտնել որ չը-  
րահանգին Յրդ. յօդուածոյն համեմատ պար-



աւար էք անմիջապէս ըստ թուոյ բնակչոց վիճակիդ՝ Գաւառական Ընդհանուր ժողովոյդ անդամոց թիւն որոշելով՝ տեղեկագիրք մեզ հարորդել և միանգամայն ընտրական գործողութիւննիդ շարունակել :

Աւելորդ է ըսել թէ գաւառաց մէջ Գաւառական Ընդհանուր ժողովոց կազմութիւնը մինչև ցարդ ետ մնացած ըլլալով՝ գաւառականներն ազգայինը իրենց գործոց համար ստիպուած են ուղղակի Կեդրոնական Վարչութեան դիմել, և զայն դառնցնել այնպիսի մասնական և անհոգական գործերով, որոց կարգողութիւնն ըստ Սահմանադրութեան տեղւոյն ընդհանուր ժողովոյն կամ անկէ ընտրուեալ Կրօնական և Քաղաքական ժողովոց կը պատկանի . հետևապէս Կեդրոնական Վարչութիւնը այսպիսի մասնական գործոց հետ զբաղելով ժամանակ չէ ունեցած ազգային հանրական և կենսական խնդիրներով զբաղիլ, ինչպէս իւր նուիրական պարտաւորութիւնը կը պահանջէ : Կերկայ Կեդրոնական Վարչութիւնն զգալով այս ծանր պարագայն, և ազգային կենսական ու հանրական խնդիրներն իւր խորին ուշադրութեան առարկայ ընելն իրեն պարտք համարելով, հատատութեամբ որոշած է գաւառաց մէջ ուր որ Սահմանադրութիւնը գործադրուած չէ, անմիջապէս գործադրել տալ, և գաւառական օրինաւոր Վարչութիւնները հաստատելով, կարող ըլլալ իւր ծանր բեռը թեթևեցնելու, թողլով գաւառաց մասնաւոր գործերն իւրաքանչիւր վիճակի օրինաւոր Վարչութեան :

Աւստի ներկայ Երջարերականաւ անհրաժեշտ պարտաւորութիւն կը դնեմք Ձեր վրայ, որպէս զի անյապաղ փութայք ներքինիեալ Հրահանգին համաձայն՝ վիճակիդ Գաւառական ժողովոյ ընտրութիւնը կատարել. և եթէ երբէք Հրահանգին վրայ բացատրութեան մը պէտքը տեսնէք, անմիջապէս գրելով պէտք եղածը րացատրութիւնը կրնաք ստանալ մեզմէ :

Պարտք կը համարիմք ծանուցանել թէ՛ ո՞ր անփոյթ գտնուի յայտ մասին, ծանր պատասխանատուութեան տակ պիտի մնայ Ազգ. Վարչութեան առջև : Եթէ Առաջնորդ մը որոշեալ զայմասնաժամին մէջ սոյն Հրահանգին գործադրութիւնը չի փութացնէ, Կեդրոնական Վարչութիւնն իրաւունք պիտի ունենայ նոյն Առաջնորդին որ և է խնդիրն

անլուելի թողուլ, քանի որ օրինաւորութիւնը չէ յարգած և չէ գործադրած իւր վիճակին մէջ . և այնպիսի Առաջնորդի մը վրայ եթէ արտուել կամ բողոք մը մատուցուի իւր ժողովրդեան կողմէ, Կեդրոնական Վարչութիւնն ըստ իւր կամաց պիտի վարուի այսպիսի պարագայի մը մէջ : Նոյնպէս եթէ վիճակի մը ժողովրդեան կողմէ անհոգութիւն և անտարբերութիւն տեսնուի Սահմանադրութեան գործադրութեան մասին, Կեդրոնական Վարչութիւնը նոյն վիճակին եթէ բոլոր ժողովրդեան կողմէ ալ ստորագրուած հանրագիր մը ստանայ որ և է խնդրոյ մը համար, անընդունելի և անպէտ պիտի համարի, մինչև որ օրինաւորապէս ընտրեալ Գաւառական ժողովն կամ անկէ ընտրեալ Գաւառական Վարչութեանն տեղեկագիր չհասնի :

Կեդրոնական Վարչութեան պարտքը Գաւառական Ընդհանուր ժողովոց կազմութիւնն է . և Գաւառական ժողովոց պարտն է իրենց գաւառին Կրօնական և Քաղաքական ժողովներն ընտրելէն զատ : Իրենց թեմերուն զիւրօրէից Քաղական խորհուրդներն ալ հետպէտէ ըստ Սահմանադրութեան ընտրել տալ :

Ի վերջոյ՝ պարտք կը համարիմք յիշեցնել նաև որ ասկից առաջ Յուլիս 22 թուականաւ և 6 թուահամարաւ զրկուած չլքաբերականին համեմատ խնդրուած վիճակագրական ցուցակն անյապաղ շինելով մեզ ուղարկելու փոյթ տանիք :

21 Օգոստոս 1872

Յ.

Ազգային Սահմանադրութիւնը գաւառաց մէջ գործադրելու համար նախորդ օգոստոսի 21 թուականաւ և 70 համարաւ չլքաբերականով յատուկ Հրահանգ մը զրկած էինք ինչպէս ուրիշ վիճակոց Նոյնպէս և Ձեզ : Նոյն Հրահանգին մէջ ըսած էինք թէ « իւրաքանչիւր գաւառ իր Ընդհանուր ժողովոյ թիւը կորոչէ և կը յայտնէ Կեդրոնական Վարչութեան, շարունակելով միանգամայն ընտրական գործողութիւնները » :

Տարակոյս չունինք թէ յիշեալ չլքաբերականը մինչև ցարդ հասած է Ձեր ձեռքը, որով պարտաւորութիւն դրած էինք Ձեր վր-

րայ երկու ամուսան միեւնոյ մէջ նոյն Հրահանգին գործադրութիւնը կատարել: Բայց ցաւ է մեզ ըսել թէ ամալիւն ընդհանուր ժողովոյ թիւոյն որոշումը չհաղորդուեցաւ մեզ որով կը կասկածինք թէ՛ թերեւ յիշեալ Հրահանգը դեռ գործադրութեան ալ առնուած չըլլայ:

Ուստի հարկ կը համարինք կրկնել ներկայիս մեր նախորդ շրջաբերականին այն պարբերութիւնը՝ թէ՛ Սահմանադրութեան գործադրութեան ցարգումը մեծ պատասխանատուութեան ներքեւ կը թողու զՁեզ: և կը հրաւիրեմք դարձեալ նոյն շրջաբերականուս առաջին Հրահանգին գործադրութեան ձեռնարկել և Քաւառական Ընդհանուր ժողովոյ կազմութիւնը փութացնել:

Սոյն առթիւ հարկ կը դատինք նաև յիշեցուցանել Ձեզ մասնաւոր վիճակագրութեան համար ասիէ առաջ յուլիս 22 թուականաւ և Յ համարաւ զրկուած շրջաբերականը և տպեալ ցուցակները, որոյ պատասխանը դեռ չկրցինք ստանալ: և կը խնդրենք կրկին որ նոյն վիճակագրութիւնն ալ եթէ ճամբու գրած չէք՝ փութացնէք:

Այս անգամ կը փութամք կեդրոնական վարչութեան կարևոր մէկ որոշումն ալ հաղորդել Ձեզ, որ է այս: Երբ որ և է խնդրոյ համար հեռագիրը պարնելու պէտք կը գայք, հեռագրելէ ետև անմիջապէս առաջիկայ թըղթատարով ալ նոյն խնդրոյ համար նամակ գրել պարտական էք: Նամակագրութիւնը պաշտօնական հաղորդակցութեանց էական մէկ պայմանն է, և անհամեմատ առաւելութիւն ունի հեռագրի ներքէն. քանզի պաշտօնական յարաբերութեան երաշխաւորութիւնն իր մէջ ունի, և ասակով զաւառաց ոմանց մէջ ընդհանրապէս գործադրուած անտեղի սովորութիւն մը կը վերնայ, որ իրենց խընդիրները հեռագրով կը հաղորդեն, և կ'երկրորդեն դարձեալ հեռագրով, առանց երբէք նամակագրութեան դիմելու: Ուստի Ձեր խընդիրներն այսուհետև ոչ թէ հեռագրով, այլ պաշտօնական նամակաւ հաղորդել պարտական էք. և եթէ ստիպողական ըլլայ և հեռագրով հաղորդէք, անոր իմաստը յառաջիկայ թղթատարով ալ իմացնել պարտական էք:

Ի վերջոյ հարկ կը դատինք նաև յուսել-

ցրենէ թէ անցեալ 1871 տարուոյ նոյեմբրի 18 թուականաւ և 1291 համարաւ շրջաբերական մը եւս զրկած էինք Գաւառ Հարաւ Յաննա ժողովին առաջարկութեան համեմատ Սահմանադրանոց մէջ Արձանագրութեան տուածը բանալու համար, ուր կարգաւ արձանագրութիւնը, և նոցա դէմ 'ի կ'իր առնուած գործողութիւնը և այլն. և ծանուցած էինք որ վեց ամիսն անգամ մը՝ այսինքն տարին երկու անգամ գարնան և աշնան անկները նոյն Արձանագրութեան օրինակն 'ի Պատրիարքարան ուղարկէք: Այս մասին պարտ ու պաշտանն 'ի գործ դրած էք թէ ոչ, տակաւին չլուծուցուցիք մեզ: Ուստի կրկին Ձեր առաջարկութիւնը հրաւիրելով՝ կը յիշեցնեմք որ նոյն շրջաբերականին իմաստից համաձայն պէտք եղածն 'ի գործ դնելու և անյապալ տեղեկագրելու փոյթ տանիք:

3 Հոկտեմբեր 1872

**4.**

Ընդ գրոյս կատանայք Սահմանադրութեան հանդէ Գաւառաց համար անունով տեսակ մը, որ վաւերացեալ է կեդրոնական վարչութեան կրօնական եւ Քաղաքական Խօսոն ժողովն, որ կը պարունակէ ամենայն հրահանգը, Սահմանադրութեան գործադրութիւնը գաւառաց մէջ զիւրացնելու համար:

Ինչպէս նոյն Հրահանգէն կը տեսնուի, գաւառից մէջ պիտի ըլլայ

1. Գաւառական Ընդհանուր ժողով.
  2. կրօնական եւ Քաղաքական ժողովներ.
  3. Ռատումական եւ Տնտեսական խորհուրդներ.
  4. Քաղական խորհուրդներ, իւրաքանչիւր թաղի, այսինքն գիւղի, քաղաքի մէջ, ուր որ եկեղեցի կայ, եւ նոյն եկեղեցին ալ իրեն սեփական ժողովուրդ ունի:
- Ասանց ժամանակ կորուսանելու, եթէ մինչեւ ցարդ Գաւառական Ընդհանուր ժողովը չէ ընտրուած, ընտրելու ձեռնարկէք. եւ եթէ կրօնական եւ Քաղաքական ժողովները, եւ Ռատումական ու Տնտեսական խորհուրդները չեն ընտրուած, ընտրել տայք:

Եթէ գաւառիդ մէջ Ուսումնական եւ Տնտեսական խորհուրդներն ընտրելու հարկ չի տեսնէք, պէտք է որ կանխաւ գրէք եւ ծանուցանէք Կեդրոնական վարչութեան:

Թաղերու կամ գիւղերու մէջ՝ ուր որ պէտք է, Թաղական խորհուրդներն ընտրելու հրահանգը պէտք է որ տայք:

Քանի մը տեղեկութիւններ տալ պատշաճ համարուցաւ ներկայ Հրահանգին վրայ, որ կը գրկուի առ Ձեզ:

Գաւառական Կրօնական եւ Քաղաքական ժողովները շարժու մէջ գտնէ մէկ անգամ նիստ պիտի ընեն, եւ օրինաւոր արձանագրութիւն պիտի ունենան իրենց գործոց եւ որոշմանց համար:

Նոյնպէս Ուսումնական եւ Տնտեսական խորհուրդները շարքի միանգամ նիստ ընելու պարտական են:

Պէտք է որ Առաջնորդարանիդ մէջ օրինաւոր գիւճանատուն ունենաք. այսուհետեւ եթէ նամակ կամ թուղթ զրկէք մեզի, որ ընդօրինակեալ չըլլայ եւ թուահամար չի կրէ, անվաւեր պիտի համարուին:

Առ Կեդրոնական վարչութիւն զրկուած ամենայն գրութիւն, եթէ գաւառիդ Կրօնական ժողովէն է, Կրօնական ժողովոյ Ատենապետն ու Ատենադպիրն Առաջնորդին հետ պիտի ստորագրեն. նոյնպէս եթէ Քաղաքական ժողովէն է, Քաղաքական ժողովոյ Ատենապետն ու Ատենադպիրն եւս պիտի ստորագրեն: Եթէ միճակիդ մէջ պաշտօնական զիր զրկել հարկ ըլլայ, միայն Առաջնորդը կստորագրէ, ծանուցանելով գրութեան մէջ թէ Կրօնական կամ Քաղաքական եւ կամ Խառն ժողովոյ որոշմամբ կը գրէ:

Նոյնպէս առ տեղական Կառավարութիւն զրկուած գրութիւնները որոշող ժողովին կողմէն ալ կիքեալ պիտի ըլլան:

Առ Կեդրոնական վարչութիւն զրկած զբրութիւններնիդ պէտք է որ պարզ եւ առանց աւելորդարձուցեան ըլլայ. եղելութիւնները ճշդիւ եւ ամենայն խնամով պատուին. զգուշանալու է ամեն կերպով, որ սխալ տեղեկութիւն չի հաղորդուի, վասն զի պաշտօնական ժողովներէ եկած գրութեանց ամեն մէկ կէտը ճշմարիտ ըլլալու են, եւ Կեդրոնական

վարչութիւնը անոց վրայ բոլորովին վստահ պիտի ըլլայ:

Գաւառական վարչութիւնները պարտական են նախ իրենք հոգ տանելու որ կարգադրեն գաւառին մէջ պատահած խնդիրները կամ գործերը, բանակցելով տեղական Կառավարութեան հետ, եթէ դարմանն անոր միջոցաւ պիտի ըլլայ. եւ երբ գծուարութիւն տեսնուի, այն ատեն դիմելու են Կեդրոնական վարչութեան:

Բայց ամեն ծանր արկածներու մէջ իրենք թէեւ մէկ կողմէ հոգատար պիտի ըլլան, բայց միւս կողմէ ալ պէտք է որ անմիջապէս ծանուցանեն Կեդրոնական վարչութեան:

Գաւառական վարչութեանց առաջին ու գլխաւոր հոգը եւ մտադրութիւնը պիտի ըլլայ աս երկու ազգային մեծ պիտոյից վրայ,

1. Ազգային ստացուածոց պահպանութեանը եւ բարգաւաճմանը վրայ:

2. Ազգային դաստիարակութեան ծաւալմանը համար վարժարաններ բանալու, եւ անոց յառաջադիմութեանը վրայ:

Թէեւ Ահմեթ-Պաշայէն Հրահանգին մէջ Թաղական խորհրդոց վրայ ալ գրուած է, բայց անի համատու է, եւ յատկապէս Թաղական համար ուրիշ հրահանգ մը արդէն պատրաստուած է, քիչ օրէն Կեդրոնական վարչութիւնէն վաւերանալով կը տպուի ու կը զբրկուի նաեւ առ Ձեզ:

Եթէ գաւառազրուխ քաղաքիդ մէջ մէկ եկեղեցի կայ եւ մէկ Թաղական խորհուրդ, անպատեհ է որ մի եւ նոյն անձը թէ՛ Թաղական խորհրդոյ անդամ ըլլայ եւ թէ՛ Քաղաքական ժողովոյ, կամ Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց անդամ:

Իսկ եթէ մէկէն աւելի թաղ կայ եւ Թաղական խորհուրդներ, այն ատեն եթէ Քաղաքական ժողովոյ եւ կամ Ուսումնական ու Տնտեսական խորհրդոց մէջ ալ մի եւ նոյն անձինքը գտնուին, այնչափ անպատեհ չի համարուիր:

Անպատեհ է նաեւ Գաւառական Ընդհանուր ժողովոյ ղեւանին անդամո՞ր Քաղաքական ժողովոյ անդամ լինելը. ինչպէս նաեւ Քաղաքական ժողովոյ անդամ մը չի կրնար ըլլալ Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց անդամ:

Ստնց նման ուրիշ բացատրութեան կարօտ կէտեր եթէ նշմարէք Սահմանադրութեան հանգիստ մէջ, կրնաք զրեւ եւ հարցնել ու տեղեկանալ :

Գաւառական Ընդհանուր ժողովը դուժարութեամբ որոշեալ ժամանակ ունի, կամ 'ի հարկին կրնայ գումարուիլ : Ընդհանուր ժողովը կամ եկեղեցւոյ կամ վարժարանի եւ կամ առաջնորդարանի մէջ (եթէ ընդարձակ է) կըրնայ գումարուիլ, եւ ատենը բաց ըլլալու է ժողովողեան համար : Այս կերպ հրապարակական գումարումները բազմադիմի օգուաներ ունին . բայց ժողովուրդը ամենայն հանդարտութեամբ եւ լուսթեամբ ունկնդիր պիտի ըլլայ, ոչ հաճութեան եւ ոչ տահաճութեան ցոյցեր ընելու իրաւունք չունի . եթէ ասանկ պատահունք մ'ըլլայ, Ընդհանուր ժողովոյ պիտանը իրաւունք ունի ժողովուրդը սրահէն դուրս հրահարելու եւ ունկնդակ նիստ ընելու : կամ ատենարդ գոցելու : Ուրիշ ստեան ն երբ Ընդհանուր ժողովը կարեւոր դատէ դոճիակ նիստ ընել, կանխաւ կը ծանուցանէ եւ ժողովատեղւոյն դրանը վրայ գրաւոր ազդ մը կանխաւ կախնել կուտայ :

Գաւառաց մէջ՝ ուր որ դիւրութիւն կայ, Ազգային ժողովները կրնան դիւերները դուժարիլ : բայց կանխաւ հրահարողի զրկելով բոլոր անդամոց ծանուցանել պէտք է դուժարման օրն ու ժամը եւ տեղը, եւ եթէ կարելի է՝ խնդրոց կարգը :

Այս կարեւոր տեղեկութիւնները տալէ յետոյ, Կեդրոնական վարչութեան հետ եւ մեր սրտին ցաւը յայտնել կը փութամք այն Առաջնորդաց, որոնք ցարդ պարտազանց զտնուած են ներկայ տարւոյս մէջ արդէն զըրկուած երեք շրջաբերական գումարեանց զորժողութեանը . առաջինը Յուլիս 22 թուականը եւ 6 թուականաբար կը կրէր, որով վիճակագրական տեղեկութիւն խնդրուեցաւ իւրաքանչիւր Առաջնորդներէ . երկրորդը Օգոստոս 21 թուականը եւ 70 թուականաբար կը կրէր, որով Սահմանագրութեան գործադրութիւնը փութացնել ծանուցուեցաւ, Ընդհանուր ժողովոյ կազմութեան հրահանդն ալ 'ի միասին զրկելով . երրորդը Հոկտեմբեր 3 թուականը եւ 169 թուականաբար կը կրէր, որով Սահմանագրութեան գործադրութիւնը փութացնել

կրկին ծանուցուեցաւ, եւ այն առթիւ 1871 տարւոյ Նոյեմբերի 18 թուականաւ եւ 1991 թուականաբար շրջաբերականին իմաստը կըրկնուած էր :

Այն Առաջնորդները եւ Գաւառական վարչութիւնները որ տալէ ետքն ալ պարտազանց դատուին, չի կարծեն թէ զրկուած հրահանգները հոս կը մտցուին եւ կը թաղուին, եւ իրենք ալ պատասխանատուութեանէ ազատ կը մնան . Կեդրոնական վարչութիւնը վերջական կերպիւր որոշած է խստութեամբ վարուիլ այն Հովուաց դէմ, որ թող իւր անհող կը դատուին իրենց տրուած հրահանգները գործադրելու մասին . ժանաւանդ աննեղելի պիտի ըլլայ Սահմանագրութիւնը գործադրելու մասին Առաջնորդաց անփութութիւնը, վասն զի այս երրորդ շրջաբերականն է որով Սահմանագրութիւնը գործադրուու համար ազգաբարութիւն կըլլայ իրենց :

Ուստի Կեդրոնական վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Խառն ժողովոյ կողմանէ կը ծանուցանեմք անոնց՝ որ տակաւին վերոյիշեալ շրջաբերականաց իմաստը չեն գործադրած, թէ Սահմանագրութիւնը փութով գործադրելու ձեռնարկին, վիճակագրական տեղեկութիւնները հազորդեն, եւ գաւառական այն մասնաւոր եւ ընդհանուր հարասարութիւնները, որոնք առանձին տուեալի մէջ արձանագրուելու համար 1871 տարւոյ Նոյեմբեր 18 թուականաւ շրջաբերականով ծանուցուած է, նոյն արձանագրութեան վաւերացեալ մէկ օրինակը զրկեն առ մեզ . իսկ անոնք որ ցարդ այս մասին անհող կեցած են, զոնէ այսուհետեւ սկսին նոյն արձանագրութեան, որուն օգուաններն ինքնին կրնան մակաբերուիլ :

Ներկայ շրջաբերական երբ ստանայր պէտք է որ անմիջապէս ծանուցանեք նախ ստացած ըլլալնիդ, եւ յետոյ ասոր պարունակութիւնը գործադրելու սկսեցնիդ :

Յայտնի կերեւի որ այսուհետեւ Գաւառական վարչութիւններէն կատարեալ փութանութիւն կ'ապաստուի, եւ եղած յանձնարարութեանց ճշիւր գործադրութիւն . Պատրիարքարանիս գումարեանները ձայն բարբառոյ յանապատի մնալու չեն . եւ կը յորդորեն զմեզ եւ զամենայն գործակիցս Ձեր վինել օժանդակ

մեզ յանդորրութիւն եւ 'ի յառաջագիմութիւն սիրելի Աղբիս մերոյ, որում նուիրուած են ասեմեայն ջանք եւ աշխատութիւնք մեր :

17 Նոյեմբեր 1872

5.

Ընդ գրոյս կ'ստանայք Թաղական խորհրդոց համար Սահմանադրական Հրահանգ անունով տետրեր, որոնցմէ մէկ մէկ օրինակ ջեր վիճակին մէջ դտնուած քաղաքաց և զիւրորէից եկեղեցեաց Թաղական խորհրդոց պիտի ղրկէք :

Ինչպէս պիտի տեսնէք, յիշեալ տետրը Թաղական խորհրդոց ընտրութեան, հրաժարման և այլ հանդամանաց վրայ պէտք եղած հրահանգը պարունակելէ զատ, գլխաւորաբար Թաղական խորհրդոց տնօրէնութեանը ներքև գտնուած ազգային անուակին և ազգային վարժարանաց վիճակին և ընթացքին վրայ հրահանգներ կը պարունակէ :

Աւելորդ է քսել թէ, մեր ազգային հընաւանդ սովորութեան համաձայն իւրաքանչիւր եկեղեցի՝ որ իրեն սեփական ժողովուրդ ունի և թաղ մը կը կազմէ, ինչ հասոյթ և կալուած ունի՝ իրն է, և իրմով հանդերձ Հայոց Ազգին և Բայց եկեղեցւոյ ժողովուրդ մ'որչափ պարտական է իր եկեղեցւոյ հասոյթները տնտեսել և կալուածները արգիւնաւորել, այնչափ ալ իշխանութիւնն չունի իր եկեղեցւոյ հասոյթն ու կալուածները ըստ քմաց իւրոց միճացնել որ և է կերպով, աննպատակ ծախքեր ընելով, և ազգի օգուտ չընտրել միջոցներու մտխելով : Ահա՛ ազգային Վարչութեան հսկողութիւնը այս պարագային մէջն է : Գաւառական վարչութիւնն անմիջապէս պիտի հսկէ իր վիճակին մէջ գտնուած քաղաքաց և զիւրորէից Թաղերուն վրայ . և Կեդր. վարչութիւնն ալ Գաւառական վարչութեան միջոցաւ պիտի հսկէ . որպէս զի Թաղական խորհուրդք մէկ կողմանէ իրենց Թաղին եկեղեցւոյն հասոյթին լաւ կերպով տնտեսեն և կալուածները արդիւնաւորեն և միւս կողմանէ ալ այդ արդիւնքը եկեղեցւոյ և Ազգին խսկական պիտոյոց համար գործածեն :

Եւ ինչ կրնայ ըլլալ եկեղեցւոյ և Ազգի խսկական պիտոյոց մէջ առաջին տեղը բռնողը :

Եթէ ոչ՝ ազգային վարժարանը : Բառին բուն նշանակութեամբը վարժարան մը ազգային ըլլալու համար՝ ազգայնութեան էական նշանները կրելու է, և ազգայնութեան սրահանութեանը օգտակար ուսումներն իր մէջ պարունակելու է, և թէ՛ մանկանց և թէ՛ աղջկանց յառաջ քան զամենայն՝ այդ ուսումները տալու է . որք են մեր ազգային եկեղեցւոյ վարդապետութիւնը, ազգային լեզու, ազգային պատմութիւն և եկեղեցական երգեցողութիւն և իւր ասոնց հետ կը ընդդուին մարդկութեան անհրաժեշտ եղող սա ուսումները թուադիտութիւն, երկրաչափութիւն հանգերձ գծագրութեամբ, և աշխարհագրութիւն : Մարդկութիւնն որչափ զարգանայ, այնչափ իր նախնական անհրաժեշտ ուսումներն ալ ի հարկէ կը բաղմանան . և առ այժմ Կեդրոնական վարչութիւնը Ազգին և մանաւանդ գաւառաց արգի վիճակին իր աչաց անջն ունենալով՝ այս ուսումները միայն պարտաւորիչ ըրաւ . զիտնալով նաև թէ՛ կան տեղեր՝ մանաւանդ հեռուոր գաւառներու զիւրք, ուր թերևս թուադիտութիւնն իսկ չկրնան ուսուցանել, ո՞ր կը մնայ երկրաչափութիւնը հանգերձ գծագրութեամբ : Այս խորհրդով նախնական ուսումները երկու կարգի վերածուած են Հրահանգին մէջ, քրիստոնէական վարդապետութիւն, ազգային գրաբառ լեզու, ազգային պատմութիւն և եկեղեցական երգեցողութիւն Ա. կարգին մէջ են . որոնք ազգային անուը կրող վարժարանի մը մէջ պարտաւորիչ պիտի ըլլան . իսկ թուադիտութիւնն, ու երկրաչափութիւնը հանդերձ գծագրութեամբ և աշխարհագրութիւնը հանդերձ կարգին մէջ են . որպէս զի ասոնց եթէ ոչ ամենը, զէթ մէկը կամ երկուք կարելի ըլլան Ա. կարգի ուսմանց հետ առհասարակ ամէն վարժարանաց մէջ աւանդելի ըլլալու զիւրութիւնն ունենալ . և այս ամէն ուսմանց մէկ վարժարանու բաւական ըլլայ :

Ահա Ազգին այս օրուան վիճակին նկատմամբ վարժարանաց վրայ ազգային Վարչութեան հսկողութիւնը այս մասին է . Գաւառական վարչութիւնն անմիջապէս պիտի հրահսկէ իր վիճակին մէջ գտնուած քաղաքաց և զիւրորէից ազգային վարժարանաց վրայ . և Կեդրոնական վարչութիւնն ալ Գաւառական

վարչութեան միջոցաւ պիտի հսկէ . որպէս զի ազգային վարժարաններն իրենց ազգային ըլլալու յատկութիւնը պահեն և զարգացնեն , և Ազգին իրապէս օգտակար ըլլան , նախահասն ուսմանը անհրաժեշտ աւանդելի ընելով մանկանց և աղջկանց , բարոյային և ազգային ու ընտանեկան կրթութիւն տալով անոնց , և այլ կարևոր ուսմանց պարագելու ատեննին իսկ՝ այդ նախնական ուսմանց դասախօսութիւնն անընդհատ պահելով :

Վարժարանաց յատուկ Հոգաբարձութիւններ կարգելու տնօրէնութիւնն ալ՝ որ յիշեալ Հրահանգին մէջ տրամադրուած է , իր օգուտներն ունի . նախ որ պատասխանատու մարմին մը կըլլայ , և Բ. որ թաղային վէճերէ գերծ կըլլայ , որոնց սովորաբար ենթակայ են Թաղ . խորհուրդը , հետևաբար Թաղ . խորհրդոց յուզմանց հետ վարժարաններն ալ մտայնջ պիտի կ'ստանան . Գ . որ Ուսումնական խորհրդոյ հետ ալ յարաբերութիւն կունենայ , և ասանկով վարժարանաց Հոգաբարձութիւնը Թաղական և Ուսումնական խորհրդոց միանգամայն պատասխանատու ըլլալով , միմիայն մէկ մարմնոյ մը ազդեցութեան ներքև ըլլալէ կազատին : Վերջապէս գաւառական վարժարանաց Հոգաբարձութիւնը գաւառական Ուսումնական խորհրդոյ հետ , գաւառական Ուսումնական խորհուրդը կեդրոնական Ուսումնական խորհրդոյ հետ յարաբերութիւն ունենալով , և հետզհետէ այս յարաբերութիւնը մշակելով , ազգային վարժարանաց բարեկարգութեանը և յառաջադիմութեանը մեծապէս նպաստաւոր կ'ըլլան Աստուծոյ :

Ի վերջոյ կը ծանուցանեմք , ինչպէս յիշեալ Հրահանգին Աւրին մէջ ալ ծանուցուած է թէ՛ Թաղ . Խորհուրդը և վարժարանաց Հոգաբարձութիւնը Հրահանգին պարունակութեանը ուղարկութիւն ընելով , գործադրութեան մէջ ունեցած փորձառութիւննին իրենց դիտողութեամբ հանդերձ եթէ բարեհաճին կեդր . Վարչութեան հաղորդել , ըստ այնմ պիտի վերաբնուի ներկայ Հրահանգը , և զարձեալ պիտի հրատարակուի : Կը յուսանք որ գաւառաց պատուարժան Թաղ . Խորհուրդը իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը կատարելով գործակից կըլլան մեզ ազգային բարեկարգութեան և յառաջադիմութեան , ու

րում նուիրուած են ամենայն ջանք և աշխատութիւնք մեր :

6 Փետրվար 1873

Յ . Գ . Այս առթիւ կը յիշեցնենք Ձեզ , որ դաւառաց Սահմանադրական Հրահանգին գաւառական Տնտեսական խորհրդոյ պաշտօննին Բ . յօդուածին համաձայն գաւառից մէջ գտնուած ազգային հաստատութեանց կառուածագրերուն օրինակը պատրաստել տալով փութաբար շրջել առ կեդր . Վարչութիւնն պէտք եղած ծանօթութիւններն 'ի միասին հաղորդելով :

6.

Ասկէ յառաջ հինգ շրջաբերական գրութիւններ շրջուած են առ ամենայն Ուսմ . նորդական վիճակս , 1872 յուլիս 22 , օգոստոս 21 , հոկտեմբեր 3 , նոյեմբեր 17 , և 1873 փետրուար 6 թուականներով ,

Այն շրջաբերականներով զվստորաբար խնդրուած էին

Ա . Սահմանադրութեան գործադրութիւնը . Բ . Վիճակագրական տեղեկագրութիւն .

Գ . Պատահած հարստահարութեանց արձանագրութեան պատճէնը :

Ա . Սահմանադրութիւնը 'գործադրելու մասին Գաւառական վարչութեանց և Թաղական խորհրդոց համար առանձին Սահմանադրական հրահանգներ տպագրուելով , նոյն շրջաբերականաց հետ շրջուած են առ ամենայն Ուսմ . նորդական վիճակս :

Յաւօք սրտի կը ծանուցանեմք որ Առաջնորդական վիճակներէն ոմանք տակաւին անփոյթ կեցած են Սահմանադրութեան գործադրութեան մասին . և եթէ այսուհետև ալ փնջնոյն անփոյթ ընթացքը շարունակեն , կեդրոնական Վարչութիւնը պիտի պարտաւորնոյն գաւառին ազգային պաշտօնէից գեթ խստութեամբ վարուի , և իւր կողմէն պարտու պատշաճը տնօրինել 'ի գործադրութիւն Սահմանադրութեան :

Իսկ անոնք որ գործադրած են Սահմանադրութիւնը , և Գաւառական Ընդհանուր ժողովը և կրօնական ու ֆաղաբական ժողովները կազմած և կեդրոնական Վարչութեան

վաւերացնել տուած, պարտական են իրենց սահմանադրական ընթացքին և վիճակին վերայ տեղեկագիր տալ ՚ի հաստնել ներկայ չըջարերականիս, և ծանուցանել թէ .

1. Կրօնական և Քաղաքական ժողովները շարաթը միանգամ սովորական նիստերնին կը շարունակեն, որինաւոր արձանագրութիւն ունին, և ընդհանրապէս ինչ խոցիրներով կըրալին :

2. Ուսումնական և Տնտեսական խորհուրդներն իրենց շարաթական նիստերը կը շարունակեն, և ինչ գործերով կըրալին :

Ուսումնական խորհուրդը սկսած է գաւառից քաղաքաց և դիւրորէից վարժարանաց վրայ հակել, անոնց հոգաբարձութեանց հետ ըստ օրինի յարաբերութիւն ունենալ, և միւս կողմէն յարաբերութիւն ունենալ Կեդրոնական Վարչութեան Ուսումնական խորհուրդը հետ :

Նոյնպէս Տնտեսական խորհուրդը 1873 փետրուար 6 չըջարերականին համեմատ գաւառից ազգային հաստատութեանց կալուածագրերուն օրինակը պատրաստել տալ սկսած է, որպէս զի ժամ յառաջ փութաց դրիւն առ Կեդրոնական Վարչութեան Տնտեսական խորհուրդն :

3. Գաւառից Քաղաքական ժողովը իւրաքանչիւր թաղի կամ գիւղի մէջ սահմանադրապէս թաղական խորհուրդները ընտրել տուած է . և նոյն թաղական խորհուրդները վաւերացնելով, հրաւիրած է դասներ թաղական խորհուրդ հրահանգին համաձայն իրենց թաղին կամ գիւղին եկեղեցոյ, վարժարանի և այլ հաստատութեանց պայծառութեանը փոյթ ունենալու, եկեղեցեաց և վարժարանաց հասոյթները լաւ կերպով տնտեսելու և կաւուածները արդիւնաւորելու, յատուկ Հոգաբարձութիւններ կազմելու, և նախնական անհրաժեշտ ուսմունքը՝ որ թաղական խորհուրդոց հրահանգին մէջ նշանակուած են, հաւասարապէս աւանդելու թէ մանչ և թէ աղջիկ տղայոց :

4. Գաւառական Ընդհանուր ժողովը մինչ ցարդ քանի անգամ նիստ քրած է, և թէ երկտարեկան համարառութեան համար երբ նիստ ընելու պիտի հրաւիրուի . վասն զի Կրօնական և Քաղաքական ժողովներն ընտրուելին երկու տարի յետոյ համարառու-

թիւն պիտի ընեն Գաւառական Ընդհանուր ժողովին, որ դարեանամուտին կամ յարմար եղած ժամանակին պիտի բացուի ըստ Գաւառացի Սահմանադրական հրահանգին (տես երես 15 յօդ . 3) :

Կրօնական և Քաղաքական ժողովոց ընտրութեան և վաւերացման թուականը պէտք է յարմարցնել Գաւառական Ընդհանուր ժողով բանալու ձեռք ընտրած յարմար թուականին . հետևաբար Կրօնական և Քաղաքական ժողովոց պաշտօնավարութիւնը քանի մ'ամիս պակաս կամ աւելի պատահի, փոյթ չէ : Արդ պէտք է որ Գաւառական Ընդհանուր ժողովը համարառութեան համար բանալու օրը կանխաւ որոշէ և ծանուցանէր մեզ :

5. Գաւառական Ընդհանուր ժողովոյ <sup>1</sup>/<sub>3</sub> մասը երկու տարին անգամ մը պիտի նորոգուի ըստ Սահմանադրութեան (տես Գաւառացի Հրահանգին երես 15, յօդ . 2) . նոյնպէս դիւանի նորոգութիւնը պիտի կատարուի ամէն տարեգլխի . ինչպէս նաև բոլոր ժողովոց և խորհուրդոց գիւտանները պիտի նորոգուին, և վերընտրելի են : Արդ գաւառից Ընդհանուր ժողովը ընտրութեան և վաւերացման թուականին համեմատ այս երկտարեկան մասնակի նորոգութիւնը պէտք է որ կատարէք, եթէ երկու տարին լրացած է, առաջին անգամին ընդհանուր վիճակ ձգելով ըստ օրինակի Կեդրոնական Երևութանական Ընդհանուր ժողովոյ :

Սոյն մասնակի նորոգութիւնն ալ պէտք է որ համարառութեան համար որոշուել երկտարեկան նախի բացման թուականին պատահի :

6. Վերջապէս, ինչպէս որ Սահմանադրական Հրահանգաց սկիզբը հրատարակեալ աւերուել մէջ ծանուցուած է նոյն Հրահանգները փորձառութեամբ վերաքննելու պէտքը, եթէ դիտողութիւններ ունիք նոյն Հրահանգաց վրայ գործադրութեան փորձառութեամբ բարեհաձիք ծանուցանել մեզ :

Բ. Խնդրուած վիճակադրական տեղեկագիրները տակաւին ամբողջացած չեն . մինչև ցարդ չի վրկող Ուսմանօրդական վիճակները կը հրաւիրուին այլևս զանցառութիւն չընել : Իսկ զրկողներուն կը ծանուցուի, որ ասկեալ ցուցակներէն դուրս ետքէն որոշուած հետևեալ

տեղեկութիւններն ալ բարեհաճին հաղորդել մեզ :

4. Քանի տուն Հայ կայ իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի մէջ, եւ որչափ արու եւ որչափ էգ, թէ մեծ եւ թէ փոքր :

2. Առաջնորդական քաղաքը կեդրոն համարելով՝ գիւղօրէից անկէ եւ մէկմէկէ հեռաւորութիւնն որչափ է եւ քանի՞ ժամ, գէպ ՚ի հիւսիս կամ հարաւ՝ եւ այնն, եթէ կարելի է աշխարհագրական Խ-ը՝ ոչ մը վրայ տաք այս տեղեկութիւնը, եւ եթէ ոչ՝ ցուցակով տաք :

3. Քանի քաղաք կամ գիւղ ունիք, որոնց քաղաքական կառավարութիւնը ձեր առաջնորդանիստ քաղաքին կառավարութեանը չի վերաբերիր. եւ անոնց անուններն ինչ են եւ որ առաջնորդի վիճակին քաղաքական կառավարութեան ներքեւ կը գտնուին :

4. Վիճակիդ մէջ որ քաղաք կամ գիւղ պանդուխտ ունին օտար երկրի մէջ, թիւն ինչ է. եւ օտար երկրի մէջ ի՞նչով կ'ըրազին, եւ ընդհանրապէս որչափ տարի դուրս կը մընան :

5. Վիճակիդ մէջ բնաւ Հայ չունեցող քանի՞ գիւղ կան, անուններով նշանակէք, եւ անոնց բնակիչներն ինչ ազգ են, եւ նիւթական եւ բարոյական վիճակին ինչ է :

6. Բնդհանրապէս Ձեր վիճակին Հայ ժողովուրդը իրենց զուակը քանի՞ տարեկան կ'ամուսնացնեն թէ մանչ եւ թէ աղջիկ, համեմատաբար միջին հասակով : 25 տարեկանէն վեր որչափ ամուրի արու եւ էգ կը գտնուին՝ մերձաւոր թուով մը յայտնել. եւ թէ տարին որչափ կը ծնին եւ որչափ կը վառճանին : Ե՛ք՝ ծնելոց եւ թէ՛ վախճանելոց օրինաւոր տուժար կը բռնուի. եթէ չլիցայ, հաստատելու հոգ տանիք :

Այս տեղեկութիւնները կարելի եղածին չափ շուտ հաղորդելից, եւ եթէ բնաւ տեղեկազիր զրկած չէք, ասիկ տոջի ցուցակին վրայ այս նոր տեղեկութիւններն ալ նշանակելով զրկելից յատկապէս կը խնդրուի :

7. 1871 տարուայ նոյեմբեր 18 թուականաւ 1291 համարաւ զրկուած շրջաբերականին համեմատ, վիճակիդ մէջ պատահած հարստահարութիւնը եւ անոնց զարմանք խնդրելու համար ՚ի կիր առնուած միջոցներ կի՛նէ կան :

յատուկ տուժարի մէջ արձանագրած պիտի ըլլաք, նոյն տուժարին մէկ վաւերացեալ պատճէնը բարեհաճիք զրկել առ կեդրոնական վարչութիւնն :

Ահա ասիկ տոջի շրջաբերականաց գլխաւոր պարունակութեանց վրայ այս անգամ ալ խօսելով, եւ կարեւոր տեղեկութիւններ սպասելով Ձեզմէ, կը յաւելումք ուրիշ կարեւոր խնդրոյ մը վրայ ալ Ձեր ուշադրութիւնը նշանակելու, ըստ որոյ մանկեղծութեան Վարչութեան :

Բարեխնամ կառավարութիւնը հողի եւ այլ անշարժ ստացուածքի վրայ օրէնքներ դրած է, եւ իւրաքանչիւր որ պարտական է իւր հողը եւ այլ ստացուածքն իր վրայ Խ-ի ընել տալ, ըստ օրինի : Ե՛ր դաւառացի ազգայնիներէն կան որ Խ-ի համար վճարուելիք տուրքն խօտարիւրով զանցառութիւն կ'ընեն այ մասին, եւ կամ իրենց հողը բուն քանակով թեամբ Խ-ի ընել չեն տար : Պէտք է որ պատուիրէք ժողովրդեան որ փութայ ըստ օրինի Խ-ի ընել տալ, եւ իր հողին եւ ստացուածքին տէր ըլլալ. առանց որոյ տէր չէ, եւ դատի կամ վեճի տո՞՞ր իրենց զարաւոր իրաւունքն կը զրկուին : Կը խնդրուի որ մեծ ուշադրութիւն եւ հոգ տանիք այս մասին, եւ յորդորէք ժողովուրդը՝ որ Խ-ի ընել տալու անհոգ չի գտնուին : Հոգ տանելու էք որ ոչ միայն այս կերպով իւրաքանչիւր որ իր ստացուածքն օրինաւոր ալիւ. այլ եւ իր ստացուածքը զանազան պատճառներով ձեռքէ չհանէ. զի այլ է հողատէր երկրագործ մը թէ՛ եւ յետին աղքատ ըլլայ : Եւ այլ է առանց հողի երկրագործ մը, որ ծառայ կամ ստրուկ է : Այս պատճառաւ կրկին կը յորդորեմք զՁեզ, որ ամենայն փոյթ տանիք Ձեր վիճակին ժողովրդոց ջարդողէ, եւ ՚ի ձեռքն եկելիցանկան եւ աշխարհական ձեռնառանձանց ծանուցանել տալ, որ իւրաքանչիւր որ Խ-ի ընել տալով իւր հողին եւ ամենայն ստացուածոց տէր ըլլայ : Այս մասին ձեզմէ կատարեալ փութանութիւն եւ պատասխանութիւն կը պահանջուի, եւ որ եւ է զանցառութիւն աններելի է :

Յուսով եմք որ ձեր տալիք ուրիշ տեղեկութեանց հետ Խ-ի խնդրոյն վրայ ալ մտալիք եւ գոհացուցիչ տեղեկութիւն կուտաք, եւ




հետըհետէ հողատար ըլլալով, մի ըստ միտջէ մեզ կը ծանուցանէք :

Խնդրելով Աստուծոյ որ աջակից դռնուի մեր ամենուս ջանից եւ աշխատանաց, եւ ինքն արդիւնաւորեսցէ :

7 Յունիս 1873

Յ. Գ. Ընդ գրոյս պիտի ստանաք Հրահանգ

յարաքերութեան Աստուծոյց եւ Գաւառական Ապար- լութեանց ընդ տեղական Կառավարութեան անուանով տպեալ տետր մը . որոյ մէջ մանրամասն գծուած է թէ Առաջնորդք եւ Գաւառական Վարչու- թիւնք տեղական Կառավարութեան հետ յարա- բերութիւններն ինչ կերպով կատարելու են . հող տանիք զայն ընթեանուլ եւ իմաստին օւ- շաղրութիւն ընել միշտ :




ՍՏՈՐԱԳՐԵԱՒ, Յ 8 ՄԱՐՏ 1874

ԱՆԴՈՒՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

- ԹԱԴԷՆՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ Արեւնայեաց
- ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ
- ԳԱՐԵԳԻՆ Վ. ԹԱԹԱՐԵԱՆՑ
- ՄԱՏԹԷՆՈՅ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ Արեւադայեաց
- ՀՄԱՅԵԱԿ Վ. ԱՅՈԶՄԱԼԵԱՆ
- ԳԵՈՐԳ Բ. ԱՐՄԻՆԻՆԻ
- ՅԱՐՈՒԹԻՒՆ Ք. ՍԵՐՈՎՅԵԱՆ
- ՍԱՀԱԿ Ք. ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ
- ԽՈՐԷՆ Ք. ՓԷՀԼԻՎԱՆԵԱՆ
- ԽԱԶԱՏՈՒՐ Ք. ՏԵՐ ԳԱՐԻԷԼԵԱՆ

ԱՆԴՈՒՄՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ

- ԱԼԻՔՍԱՆ ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ
- ԱՐԹՈՂ Մ. ՔԻՒՐՔՃԻՊԱՇԵԱՆ
- ԱՐՍԵՂ ՀԱԼԱՃԵԱՆ
- ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
- ԿԱՐԱՊԵՏ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ՃԻԼԱՃԵԱՆ
- ՍԵՆԵՔԵՐԻՄ Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ Արեւադայեաց
- ՍՏԵՓԱՆ Պ. ՊՕՂՈՍ ՓԱՊՋԵԱՆՑ Արեւադայեաց
- ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ



The following is a list of the names of the persons who have been elected to the office of the President of the University of Toronto for the year 1827. The names are given in the order in which they were elected.

The following is a list of the names of the persons who have been elected to the office of the President of the University of Toronto for the year 1828. The names are given in the order in which they were elected.

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

UNIVERSITY OF TORONTO

The following is a list of the names of the persons who have been elected to the office of the President of the University of Toronto for the year 1829. The names are given in the order in which they were elected.

The following is a list of the names of the persons who have been elected to the office of the President of the University of Toronto for the year 1830. The names are given in the order in which they were elected.



ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1872-1873

ՄԱՆ Գ.

ՀՐԱՆՄԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԵՑՐԻՔ

1.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Գ Ա Ի Ա Ռ Ա Ց Հ Ա Մ Ա Ր

Յառաջաբան

Թէ ի՞նչպէս կը կազմուին Գաւառական Քննչանութիւնը, Գաւառական վարչութեան կրօնական եւ Քաղաքական ժողովները, եւ ի՞նչ է անոնց պաշտօնը. բնչպէս կ'ընտրուի Առաջնորդը եւ ի՞նչ է անոր պաշտօնն ու պարտիքը, եւ այլն. սոյն տրամադրութիւնները կը պարունակին Ազգային Սահմանադրութեան մէջ. Բայց ըստ որում Սահմանադրութիւնը կեդրոնական վարչութեան մասը զձած է, եւ Գաւառական վարչութեան կամար տըրահարած է իննել յար եւ նաև կեդրոնական վարչութեան. ուստի կեդրոնական վարչութեան պարտական եւ Քաղաքական Քան ժողովը պատշաճ դատեց, Սահմանադրութեան հետեւելով, եւ կեդրոնական վարչութեան վերաբերեալ մասերը ՚ի բաց թողով, գաւառաց համար սոյն Սահմանադրական Հրահանգը պատրաստել. որպէս զի Սահմանադրութեան դորձադրութիւնը դիւրանայ գաւառացի ազգայնոց:

Սոյն Սահմանադրական Հրահանգին այն մասերը, որ Սահմանադրութեան տրամադրու-

թեանց հետեւութիւնն են, կեդրոնական վարչութեան Իսառն ժողովը փորձառութեամբ պիտի վերաքննէ, երբ հարկը պահանջէ, եւ երբ այս փորձառութեան արդեանց գաւառական վարչութիւնը եւս մտադիր լինելով առաջարկեն դայն կեդրոնական վարչութեան, եւ վերաքննեալ մասերը դարձեալ պիտի հրատարակէ: Բայց մինչև որ կեդրոնական վարչութիւնը սոյն Հրահանգին ամբողջին, կամ յուսելեալ եւ կամ յայտարարեալ մասանց նորոգ հրատարակութիւն չընէ, սոյն Հրահանգը աւերող պիտի գործադրուի, հրատարակութեան թուականէս սկսեալ. եւ իւրաքանչիւր Առաջնորդ եւ գաւառական վարչութիւն պարտաւոր են ըստ այնմ վարուելու:

14 Սեպտեմբեր 1872

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կ. Պոլիս

ՆԱԽԱԳԱՀ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻՔ Կ. ՊՈԼՍՈՑ

Մ Կ Ր Տ Ի Զ Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Ի Ր Ի Մ Ե Ա Ն

Դիւան կրօնական ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ԹԱԴԷՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Դիւան Քաղաքական ժողովոյ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶՅԱՆՏ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Ա .

Ընտրութիւն Գաւառական Ընդհանուր ժողովոյ

4. Ամեն Առաջնորդական վիճակ իւր Գաւառական Ընդհանուր ժողովը պիտի ունենայ, Սահմանադրութեան համեմատ :

2. Գաւառական Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը 21 էն մինչև 70 կրնայ ըլլալ, այսինքն 21, 28, 33, 42, 49, 56, 63, 70 :

3. Իւրաքանչիւր Առաջնորդական վիճակ իւր Ընդհանուր ժողովոյ անդամոց թիւը իւր բնակչոց թւոյն համեմատ ինք կ'որոշէ, և կ'հզրոճահան վարչութիւնն ալ կը հաստատէ :

4. Գաւառական Ընդհանուր ժողովոյ անդամոց 1/7ը եկեղեցական դասէն, 2/7ը թեմերէն, և 4/7ը առաջնորդանիստ քաղաքէն և կէս (1) աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղերէն կ'ընտրուին :

Եթէ թիւը 21 է, 3ը եկեղեցական պիտի ըլլայ, 6ը թեմական և 12ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 28 է, 4ը եկեղեցական, 8ը թեմական, 16ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 33 է, 5ը եկեղեցական, 10ը թեմական, 20ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 42 է, 6ը եկեղեցական, 12ը թեմական, 24ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եթէ թիւը 49 է, 7ը եկեղեցական, 14ը թեմական, 28ը առաջնորդանիստ քաղաքէն :

Եւ այլն :

5. Առաջնորդական վիճակին մէջ զբաւուրող այն ամեն աղբայինք՝ որ կառավարութեան տուրք կը վճարեն և 23 տարիքն լրացուցած են, ընդհարը ըլլողը իրաւունք ունին :

6. Ընտրելի են այն ամեն աղբայինք՝ որ 30 տարիքն լրացուցած են, առաջնորդանիստ քաղաքին մէջ կամ անկէ կէս աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղ մը կը բնակին, որ ժողովի օրերը զիւրութիւն ունին ներկայ գտնուելու, կարող գրել գիտեն, և նոյն գումարին աղղային գործոց հմուտ անձինք են :

7. Այն անձինքը՝ որոց յիմար ըլլալը ծանուցուած է, և կամ Ազգին ու կառավարութեան գործոց մէջ քրէական յանցանք

գործած և դատաստարտութիւն կրած են, որ ընտրելի կրնան ըլլալ և ոչ ընտրող :

8. Առաջնորդ կամ առաջնորդական ֆոխանորդը և կամ առաջնորդական Տնտեսաւորը նախ և յաւաջ Գործադիր յանձնաժողովը կը կազմէ (1), որ ընտրութեան գործն ղրութիւնները կատարել ապ, և հիկէ անոն վրայ . այս Յանձնաժողովը 3 էն մինչև 7 ան ձիքէ կրնայ թաղիանալ : Առաջնորդ կամ ֆոխանորդը կ'անուանէ այս Յանձնաժողովը անդամները՝ կորհրդակցութեամբ առաջնորդանիստ քաղաքին մէջ գտնուող աղղային ժողովին, որուն հետ որ Առաջնորդը կը տընորինէ վիճակին գործերը :

Ընտրութիւն Եկեղեցական անբանոց

9. Եկեղեցական անբան կրնան ըլլալ նոյն վիճակին մէջ գտնուող եպիսկոպոս, վարդապետ և քահանայոց վանահայրները և վանական վարդապետք, որոնք եկեղեցական պալատն վարելէ ըստ օրինի դադարեալ չեն :

10. Առաջնորդը կամ ֆոխանորդը քաղաքին և մինչև կէս աւուր միջոց հեռաւորութիւն ունեցող տեղերուն մէջ գտնուող եկեղեցականները իր թով ժողովի կը հրախիտ, որ քուէարկութեամբ եկեղեցական անդամոց ընտրութիւնը կատարեն :

Այն ժողովին ներկայ գտնուել չընող եկեղեցականք իրենց քուէն նամալու կրնան զբիւլ առ Առաջնորդը կամ ֆոխանորդը :

Վիճակին մէջ գտնուող վանահայրք ալ իրենց միաբան վարդապետներովը հանդերձ իրաւունք ունին քուէարկութեան մասնակցելու, թէև հեռի ըլլան առաջնորդանիստ քաղաքէն :

Ընտրութիւն Այլաբնակ անբանոց

11. Եթէ առաջնորդանիստ քաղաքին մէջ մեկ եկեղեցի կայ, և նոյն քաղաքին մօտ կէս աւուր միջոցով դիւզ կամ քաղաք չկայ (1) նոյն

(1) Եթէ գաւառի մը մէջ ըստ օրինի կազմակառուցողական ժողով կայ, և Ընդհանուր ժողովոյ բոլոր անդամը կամ տնայն հրամարեալ են, ու անոնց տեղ նորոշ ընտրութիւն պիտի ըլլայ, ան ամեն ընտրական գործողութեանց հսկելու պալատները Գաղաքական ժողովին է, կամ անկէ ընտրեալ Գործադիր յանձնաժողովի մը :

(1) կէս աւուր միջոցը՝ ձիւղ երեք ժամու ճամկայ կը հաշուուի :

բաղաբէն ընտրելի Գաւառական ընդհանուր ժողովոյ անդամները՝ նոյն եկեղեցւոյ ժողովորդեան կողմէն կ'ընտրուին :

Եթէ նոյն քաղաքին մէջ մէկէն աւելի եկեղեցի կայ, բայց ժողովուրդը միայն մէկ եկեղեցւոյ սեպհական է, և միւսները սեպհական ժողովուրդ չունին . դարձեալ նոյն եկեղեցւոյ ժողովուրդն է ընտրողը :

Իսկ եթէ առաջնորդանիստ քաղաքին մէջ մէկէն աւելի եկեղեցի կայ, և խորաքանչիւր եկեղեցի իրեն սեպհական ժողովուրդ ունի . պէտք է որ առաջնորդանիստ քաղաքին ընտրելիք խաշուելին նոյն եկեղեցւոյ վրայ, աւանդ իւրաքանչիւրին ժողովրդեան թուոյն համեմատ :

Եւ եթէ առաջնորդանիստ քաղաքը կէս աւուր միջոց հետաւորութիւն ունեցող դիւզ կամ քաղաք ունի իր մօտ, ան ասուն ընտրելիք՝ քաղաքին և նոյն դիւզերուն ընտրուած թուոյն համեմատ՝ պիտի բաշխուին քաղաքին և դիւզերուն եկեղեցւոյ վրայ :

Եկեղեցի չունեցող գիւղ մը իրեն ամենէն աւելի մօտ դիւզին կամ քաղաքին եկեղեցիին հետ ընտրուածք միջոցեալ կը համարուի, և անոր հետ պիտի մասնակցի ընտրութեան :

12. Խորաքանչիւր եկեղեցւոյ աւագութիւնը կամ ուրիշ եկեղեցւոյն մը նոյն եկեղեցւոյ թաղական կամ եկեղեցւոյն պաշտօնեաներուն հետ Բնարողական ժողով կը կազմէ, նոյն եկեղեցւոյ ժողովրդին 3-4 արժանաւոր անձինք հետ առնելով . և անոնց հետ խորհրդակցութեամբ կիրակի օր մը ստաւօտեան ժամերգութեան ատեն կը ծանուցանէ նոյն եկեղեցւոյ ժողովրդեան, որ յաջորդ կիրակի օրը Գաւառական ընդհանուր ժողովոյ անդամաց ընտրութիւնը պիտի ըլլայ . և անոնք օր ընտրող են, կարող են մասնակցիլ ընտրութեան, կամ ա՛յլ ընտրելիք իրենց քուէն, և կամ իրաւունք չունենալով ընտրութեան և ընտրելութեան հանգամանքներն այլ պիտի բայցարիլ :

(Եթէ դիւզութիւն ունին, պէտք է Բնարողաց և Բնարողեաց ցանկեր պատրաստել, և եկեղեցւոյ բակը կանխել . կամ թէ սա կերպով ծանուցում մը կրկնել թէ՛, քայտորդ կիրակի ստաւօտեան ժամերգութիւնէն ետքը քուէտրուելով, պիտի ըլլայ Գաւառական Բնարո-

ւուր ժողովոյ անդամաց ընտրութեան համար, և ստի սուրբ Եկեղեցւոյ ժողովրդէն անոնք որ ընտրութեան իրաւունք ունին, այսինքն 23 տարեկանէն վեր են և Տէրութեան տօնքը և կուտան, կը հրաւիրուին զաւ կիրակի՛ յետ աւարտեան եկեղեցւոյ ներկայ գտնուիլ և իրենց քուէն անձամբ տալ . և ներկայ դրօշմաւոր չըլլողը նամակաւ կրնայ զրիկել իր քուէն) :

13. Յաջորդ կիրակի առաւօտ սուրբ Եկեղեցւոյ ժամերգութեան ատեն դարձեալ աւագութիւնը կամ ուրիշ եկեղեցւոյն մը՝ նոյն օրը յետ աւարտման ժամերգութեան քուէտրուելով ըլլալիքը կը ծանուցանէ :

Յետ աւարտման ժամերգութեան՝ աւագութիւնը կամ անոր տեղ ուրիշ եկեղեցւոյն մը Բնարողական ժողովը կազմելով, տուի մը կամ անտուկ մը կը դնեն մէջ տեղ . նախ նոյն անտուկին սլարապ ըլլալը կը բնեն . յետոյ կ'սկսին քուէ բերողներն քուէներն ընդունիլ կարգաւ :

Ո՛ր որ անձամբ քուէ կուտայ, իր անունը կ'ստորագրէ որոշեալ թիւի մը վրայ, որուն ճակատը նշանակուած պիտի ըլլայ ինչ բանի համար քուէտրուելուն ըլլալը . իսկ անոնք որ զիր չգիտեն՝ իրենց համութեամբ անունին արձանագրել կուտան անդերեցին կամ ուրիշ մէկուն, որ Բնարողական ժողովոյ մէջն է, կամ անոր համութեամբ չոն նշուած :

Երբ նամակաւ քուէ դայ, Բնարողական ժողովը կը բանայ նամակը, և կը բնեն զըրկոյն ստորագրութիւնը կամ կնիքը թէ՛ բուն տիրոջն է, յետոյ անոր քուէն կատարուածը անտուկը կը նետէ :

Քուէ բերուած կամ գրիւած միջոցին Բնարողական ժողովոյ պարուն է՝ քննել թէ՛, քուէ բերողը կամ գրիւողը բնարող ըլլալու իրաւունքն ունի՞, այսինքն 23 տարեկանէն վեր է և Տէրութեան տօնքը կուտայ . կամ թէ ծանուցեալ յիստորի և արդարին կամ կտաւարութեան գործոց մէջ բրկական յանցանք դատապարտեալ մէկը չըլլայ :

14. Քուէներն ընդունելին ետքը, որոշուած ժամուն կ'սկսին քուէ համարը :

Նախ անտուկին մէջ որբայ քուէ ըլլալը կը համբեն . յետոյ անորգրեալ և արձանագրեալ անունները և նամակները կը համբեն :

այս երկուքը իրարու հաւասար պիտի դան : որ կասկածելի չըլլայ քուէարկութիւնը :

Քուէհամարի գործողութիւնը կ'սկսի . աւագերէցը կամ ուրիւ մը մէկիկ մէկիկ քուէները մտուկէն կը հանէ և կը կարգայ . զրադիր մ'ալ կարդացուած անուները կը գրէ . և մէկ անուն մը քանի անգամ որ կարդացուի , այնչափ անգամ խաչ (+) նշան մը կամ թըռուանըան կը դնէ այն անուան առջև :

Քուէթղթին մէջ եթէ ուզուած թիւէն աւելի անուն գրուած ըլլայ , աւելին չ'կարդացուիր . մինչև օրոշեալ թիւը կարդալու և ընդունելու է . անիէ անդին գրուածներն աւընդունելի են :

Քուէթղթին մէջ եթէ ուզուածին չափ անուն գրուած չըլլայ , ընդունելի է , գրուածները պիտի կարդացուին :

Քուէարկութեան և քուէհամարի գործողութիւնները հրատարակու կ'ըլլան , և ժողովուրդէն ուզողը կրնայ ներկայ գտնուիլ :

45. Քուէհամարի գործողութեանէն յետոյ ամենէն շատ քուէ ստացող անձանց աւուները կը գրուին կարգաւ , և քուէարկուած թիւոյն կէսէն աւելին ստացողը ընտրեալ կը համարուի . օրինակի համար եթէ 400 քուէարկու ըլլայ , 31, 32, 33, և այլն քուէ ստացող և աւելի թիւ ստացողները ամենքն ալ ընտրեալ են . իսկ 30, 49, 48, և այլն թիւ ստացողը և հետևարար ասիէ վար թիւ ստացողները ընտրեալ չեն :

Երկրորդ անգամ քուէարկութեան պիտի հրաւիրուի ժողովուրդը ճիշդ անշինին նման , 8 օր առաջ ծանուցանելով և 8 օրէն յետոյ քուէարկութիւն ընելով : (այս 3 աւուր միջոցը կրնայ նուազիւ 1, 2 կամ 3 օրի , եթէ այսչափ կարճ միջոցի մէջ կարելի ըլլայ քուէարկու ժողովորդեան ծանուցանել երկրորդ անգամ ըլլալիք քուէարկութիւնը) . բայց այս անգամ քուէ ստուղները որոշեալ անուանց վրայ պիտի տան : Օրինակի համար քանի ընտրելի տա մնացած են , նոյն թիւոյն կրկնապատիւը կարգաւ պիտի անուանին ընտրեալներէն անմիջապէս ետքը եկող առաւել քուէ ստացող անուններէն , և այս ցանկին վրայ քուէ պիտի տրուի :

Եթէ եկեղեցւոյ մը ժողովուրդը միակամ

այս երկրորդ քուէարկութիւնը չուզէ , և բնուա մէջերնին ալ բողոքող ըլլայ , համեմատարար առաւել քուէ առնողներէն կ'ընտրեն մնացեալ անդամները :

Ընտրական գործողութիւնները աւարտելէն յետոյ , ներկայ գտնուող ընտրական ժողովը տեղեկագիրը կը շինէ . որուն մէջ պիտի ծանուցանէ 8 օր առաջ քուէարկութեան ծանուցում ըլլալը , 8 օր ետքը ժամ այս ինչի քուէներն ընդունիլը , քանի հատ անձամբ լսուիլը և քանի հատ նամակաւ , և ժամը այս ինչ ինչ քուէհամարն ըլլալը , և քուէից արդիւնքն ինչ ըլլալը . և այն տեղեկագիրը ըստորագրելով կը զրկէ առ Առաջնորդն կամ փոխանորդն :

46. Այսպէս պիտի ընտրեն նաև թեմերը իրենց ինկած գաւառական ժողովոյ անդամները , Մխայիթ էրր մէկ , երկու կամ երեք և այլն գիւղ միասին մէկ անձ ընտրելու հրաւիրուին , ամէնը մէկտեղ կուգան մէկ գիւղին մէջ ընտրութիւն ընելու , թէ որ մտեն իրարու . իսկ թէ որ հետու են իրարմ , ամենքը զատ զատ քուէարկութիւն և քուէհամար կ'ընեն , և արդիւնքը յետոյ իրենց մէջ կը միացնեն և տեղեկագրով կը զրկեն առ Առաջնորդն կամ փոխանորդն :

47. Երբ առաջնորդը տեսնէ որ ընտրութիւնները մեծ մասամբ կատարուած են , և մնացեալներն ալ հետզհետէ կատարուելու վերայ են , հրաւէր կ'ընէ Գաւառական ժողովոյ ընտրեալ անդամոց , և ընտրելոց մեծադոյն մասին ներկայութեան ատեանը կը բանայ . նախ Գործադիր յանձնաժողովոյ կողմէն պատրաստեալ ընտրութեան տեղեկագիրները կը կարդացուին , և անոնց օրինաւորութիւնը հաստատուելէն ետքը , ըստ օրինի Գաւառական ժողովը իր դիւանը կը կազմէ : մէկ ստեմնապետէ և մէկ ատեմնադպրէ , և ի հարկին աստեց ալ մէկ կամ երկու փոխանորդներ տալով :

48. Այս ամեն գործողութիւնները Գաւառական ժողովոյ դիւանն ի գիր անենով կը զրկէ առ կեդրոնական վարչութիւնն , որ օրինաւորութիւնը ստուգելէն ետքը կը վաւերացնէ . և Սրբազան Պատրիարքն ալ յատուկ



Գ. Ազգին ձևօրը հաւարուը որոշուած արքունի տուրքը արդարութեամբ բաշխել և հաւաքել :

Գ. Իր տեսչութեան տակ զանուոց Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօրուտ սուս-ջարկութիւնները ուշադրութեամբ քննել և անոնց կարևորութիւնը յայտնուելն ետքը՝ հաստատել կամ գործադրութեան արդէլքները բառնալու ջանք ընել :

7. Քաղաքական ժողովը ինք կը տնօրինէ թէ Տեղական կառավարութեան և թէ կեդրոնական վարչութեան և թէ իր ստաջնորդական վիճակին մէջ գտնուած Թաղական Խորհրդոց հետ յարաբերութեան վերաբերեալ և ուրիշ իրեն կեամ գործերը : Առումնական և Տնտեսական և Թաղական գործերն զատ, որոնք սեպհական Խորհրդոյն կը յանձնէ, և մինչև որ Խորհրդոյն կարծիքը չառնու, չկըրնար գործադրութեան ձեռնարկել :

Իւ թէ չլէտ կրնայ իրաւացի պատճառներով հերքել մէկ Խորհրդոյ ըրած որոշումը, բայց ինքնին ուրիշ տնօրնութիւն չկրնար ընել նոյն նիւթին վերջ, և կը պարտաւորի դառնալ նոյն Խորհրդոյն յանձնել գործը :

8. Քաղաքական ժողովը չկրնար նաև լիտիւ կամ լուծել թէ՛ իր ընտրած տեսուչ Խորհուրդներէն և թէ՛ Թաղական Խորհուրդներէն մէկը, քանի որ չտեսնէ զայն Սահմանադրութեան հիմնական սկզբանց հասկտակ ընթացքի մէջ : Բայց երբ տեսնէ անոնց մէկը այսպիսի ընթացքի մէջ, ստաջին անգամին բացատրութիւն կուղէ նոյն Խորհրդէն, երկրորդ անգամին՝ անոր գրով ազգարարութիւններ ընելով ի կանոնադատութիւն կը հըրաւիրէ : Իսկ երրորդին՝ քան կը լուծէ, և էթէ Առումնական կամ Տնտեսական Խորհուրդներէն մէկն է, ինք նորը կ'ընտրէ, և էթէ Թաղական Խորհուրդներէն մէկն է, ստաժանակեայ Թաղական Խորհուրդ մը կը կարգէ և նոր ընտրութեան հրահանգը ի միասին կը դրէ : Միայն թէ այս մասին ունեցած պատճառները պիտի բացատրէ Գաստական ընդհանուր ժողովոյ ներկայացնելու երկամեայ տեղեկագրին մէջ :

9. Քաղաքական ժողովը դադարէլ քուէ-արկութեամբ և քուէից բացարձակ տնտեսութեամբ կ'ընտրէ Ազգին կողմանէ առաջնոր-

դանկատ քաղաքին կառավարութեան ժողովոց անդամակից ըլլալու անձինքը, պէտք եղած թուոյն համեմատ. և Առաջնորդին կամ անոր բացակայութեանը Փոխանորդին միջոցաւ Տեղական կառավարութեան կը ներկայացնէ, և մէկ օրինակին ալ՝ Արտրոնական վարչութեան կը դրէ :

Թեմերուն մէջ՝ ուր որ պէտք կայ, այն ընտրութիւնը Թաղական Խորհուրդը կ'ընեն :

10. Գաստական Խառն ժողովին կը պատկանի ընտանեկան յարաբերութեանց վերաբերեալ զատերը քննել և վճել, և աչգայնոց մէջ ձագած վէճերը խաղաղել :

11. Գաստական կրօնական ժողովը կրօնական խնդրոց համար կեդրոնական վարչութեան կրօնական ժողովին հետ, և Գաստական Քաղաքական ժողովն ալ քաղաքական խնդրոց համար կեդրոնական վարչութեան Գաղաքական ժողովին հետ, նոյնպէս խառն խնդրոց համար կեդրոնական վարչութեան Խառն ժողովոց հետ յարաբերութիւն ունին, և ի հարկին կեդրոնական վարչութեան կը դիմեն :

12. Գաստական վարչութիւնը իր գաստին աղբային հանրական և անհատական խնդրոց համար տեղական կառավարութեան հետ յարաբերութիւն ունի. բայց Բ. Գրած դիմելու հարկին մէջ՝ կեդրոնական վարչութեան կը դիմէ :

Աթէ՛ առաջնորդական վճիպի մը մէջ գտնուի քաղաք կամ գիւղ, որ քաղաքականապէս ուրիշ ստաջնորդական վիճակին տեղական կառավարութեան ներքև ըլլան, երկու Գաստական վարչութիւնք այս մասին իրարու հետ յարաբերութիւն կ'ունենան :

13. Գաստական վարչութիւնը յարաբերութեանց համար օրինակ տրոջ պիտի անտառն պիտի ունենայ, և Տեղական կառավարութեան ըով ալ Քատու չէ՛հասնի :

14. կրօնական և Քաղաքական ժողովոց սյաշտօնը 2 տարի կը տեւէ, և վերընտրելի չեն : Բայց եթէ կրօնական ժողովոց համար բաւական թուով եկեղեցական չ'գտնուի, նախորդ եկեղեցական հայրերը վերընտրելի կըրնան ըլլալ :

15. Գաստական վարչութեան կրօնական



և քաղաքական ժողովներն՝ իրենց երկամեայ համարատուութեան տեղեկագիրքը հանդերձ դաւառական՝ Ուսումնական և Տնտեսական խորհրդոց տեղեկագրերով ։ Երբ ներկայացնեն դաւառական Ընդհանուր ժողովոյ անոնց վաւերացեալ մէկ օրինակն ալ արժաւ դրկին առ կեդրոնական վարչութիւնն ։

Գ.

Տուառական վարչութեան

Առումնական և Տնտեսական խորհուրդները

1. Գաւառական Քաղաքական ժողովը կ'ընտրէ Ուսումնական խորհուրդը Յին մինչև Յ ուսումնական և ուսումնասէր անձերէ ։ և այս ընտրութիւնը կը ծանուցանէ կեդր. վարչութեան Ուսումնական խորհրդոյ ։ արդէս զի կարենայ անոր հետ յարաբերութիւն ունենալ իր պաշտօնին վերաբերեալ խնդրոց վրայ ։

2. Գաւառական Ուսումնական խորհրդոց ցոյ պաշտօնն է ։

Յ. Գաստիարակութիւնը ընդհանրացնել դաւառին ամեն կարգի ազդեցնոց մէջ ։

Բ. Մանկանց և ազգկանց հաւատար ուսուցանել իրենց կրօնը ։ լեզուն և պատմութիւնը և այլ կարևոր ուսումներ ։

Գ. Գաւառին վարժարանաց բարեկարգութեանը հսկել ։ ըստ հրահանգի ։ կեդրոնական վարչութեան ։

Դ. Արժաբան հունձնոց դիւղերուն մէջ վարժարան բանալ առ ։

Ե. Գաստիարակութեան ընդհանրանալուն համար կազմուած աղօթուած ընկերութիւնները քաջալերել և անոնց ձեռնուած ըլլալ ։

Զ. Գաւառին մէջ դուռուսղ դաստիարակաց կացութիւնը բարելու և ազգայնաց անդորրելու խնամ տանել ։

Ը. Գաւառին թէմերուն մէջ նոյնտեղութեան յամրակց կառավարակներ հասցնելու ջանք և փոյթ ունենալ ։

3. Գաւառական Ուսումնական խորհուրդը հսկէ այն վանօրէից ուսումնական ընթացիկն և վճարակ վրայ ։ որոնց մասնաւոր մասնակարարութիւնը միտքանութեան և ընդհանուր տեսչութիւնը կեդրոնական վարչութեան Անօրէից խորհրդոյն կը վերաբերի ։ Բայց երբէք չիկրնար միջամտել ։ այլ նիկէ դիւտողութիւն ունենաց ։ կուրդէ առ Գաւառա-

կան Քաղաքական ժողովը և անոր միջոցաւ կեդրոնական վարչութեան Անօրէից խորհուրդն ։ որ պատշաճը կը անօրինէ ։

4. Գաւառական Ուսումնական խորհուրդը որոշեալ ժամանակի մէջ և ի հարկին չհամար կը պահանջէ դուռուսղն մէջ դամուած Բարակական խորհուրդներէն ։ իրենց վարժարանաց վիճակին և ընթացիկն վրայ ։ և իր տեղեկագրովը կը հաղորդէ Գաւառական Քաղաքական ժողովին ։

5. Քաղաքական ժողովը կ'ընտրէ Տնտեսական խորհուրդը Յին մինչև Յ անտեսողէտ և հաշուազէտ անձերէ ։ և այս ընտրութիւնը կը ծանուցանէ կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ ։ որդէս զի կարենայ անոր հետ յարաբերութիւն ունենալ իր պաշտօնին վերաբերեալ խնդրոց վրայ ։

6. Գաւառական Տնտեսական խորհրդոց պատօնն է ։

Ո. Գաւառին մէջ դպրուած աղջային բոլոր հաստատութեանց և անոնց կալուածներուն մասնակարարութեան ընդհանուր տեսչութիւնն ընել ։ անոնց պայծառութեանն և սպառնալիկեանը անխնայ հսկել և հոգ տանել ։

Բ. Սյն ազգային հաստատութեանց և կալուածոց կալուածադերուան օրինակը կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ հաղորդել ։

Գ. Գաւառին մէջ ազգային կալուածոց դնուան և վաճառուան իր հաւանութեանը որոշել ։ և Գաւառական Քաղաքական ժողովոյ համաձայնեանը և Աստիարակ կերպ հաստատել տալ ։

Սալմանադրութիւն իր-իւր իր-իւնն ըսուած բանը Հայոց ազգին համար միջոցաւ ըլլալով ։ նոյն պատճառով դաւառին մէջ Գաւառական Տնտեսական խորհուրդը կը վարէ ։

Ազգային սեպհականութեան վերաբերեալ ամենայն դնուան և վաճառուան և դրամական փոխառութիւնն ըստ օրինի կանխաւ օրին ծանուցողէ կեդրոնական վարչութեան Տնտեսական խորհրդոյ ։

Գաւառական Տնտեսական խորհուրդը և Քաղաքական ժողովը ստիպողական պարագայի մէջ որ և է դնուան կրնայ ընել ։ յետոյ կեդրոնական Տնտեսական խորհրդոյ ծանու-

ցանկու պարտաւորութեամբ . բայց որ և է վաճառում և փոխառութիւն չկրնար ընել , առանց կանխաւ ժամացանելու կեդրոնական Տնտեսական խորհրդոյ և առանց անոր հաւանութիւնն առնելու :

Գ. Հսկել զաւառին մէջ ազգային որ և է շինութեանց կամ վերանորոգութեանց . որոնց չկրնար ձեռնարկուիլ առանց դիտութեան Գաւառական Տնտեսական խորհրդոյ , և հաճութեան Գաւառական Քաղաքական ժողովոյ :

Ե. Գաւառադրուլս բաղաբին մէջ գտնուած Հիւանդանոցին տեսութիւնն ընել , կամ /ր կողմէն յատուկ Հոգաբարձութեան մը յանձնել :

Զ. Կտակաց տնօրէնութիւն ընել , կամ /ր կողմէն յատուկ Հոգաբարձութեան մը յանձնել . և այս մասին ճշիւ գործադրութեան հսկել ըստ Հրահանգի կեդրոնական վարչութեան :

Է. Գաւառական անտուկին ելումուտըր տնտեսել , որոշեալ ծախքերն ընել և եկամուտները հաւաքել : Առանց Գաւառական Քաղաքական ժողովոյ որոշման նոր ծախք չընել .

Գաւառական անտուկին մուտքն են՝ Գաւառին ընդհանուր տուրքը . Առաջնօրդական հասցիք , պողի , նշանուք , հրամանի . և առանց մասնաւոր տեղ մը որոշելու՝ զաւառին անուանը եղած կտակ կամ նուէր , Էլքն են , Առաջնօրդական թոշակ , կեդրոնական սընտուկին յատկացեալ տարեկան տուրքը (մուշտխ) , Կրեանատան ծախք և կարօտեալ թագերու նպաստ և դանաղան ուրիշ պատահական ծախք :

7. Գաւառական Տնտեսական խորհուրդը կը հսկէ այն վանօրէց սեպհականութեանց և կալուածոց և այլ նիւթական վիճակին վերայ , որոնց մասնաւոր մատակարարութիւնը միաբանութեան և ընդհանուր տնայութիւնը կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհրդոյն կը վերաբերի . բայց երբէք չի կրնար միջամտել , այլ եթէ դիտողութիւն ունենայ , կ'ուստի առ Գաւառական Քաղաքական ժողով , և անոր միջոցաւ առ կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհուրդն , որ պատշաճը կը տօնորնէ :

Գաւառին մէջ գտնուած այն վանքերը՝ որ յատուկ միաբանութիւն չունին և չեն

կրնար ունենալ , ասոնց ուղղակի Գաւառական Տնտեսական խորհրդոյ իրաւասութեան ներքեւ են . և անոր կողմէ կարգեալ և Գաւառական Քաղաքական ժողովէն հաստատեալ տնայի մը միջոցաւ կը մատակարարուին և հասցիք այն գիւղօրէից եկեղեցւոյ և վարժարանի ծախսոց կը յատկանայ , որոնց ժողովրդեան պողի արքիւնքը յիշեալ վանքը կը վայելէ : Այս տեսակ վանօրէից տնօրէնութեանց վերաբերեալ խորհուրդները կեդրոնական վարչութեան Վանօրէից խորհրդոյն հաւանութեամբ ի գործ կը դրուին :

8. Տնտեսական խորհուրդը որոշեալ ժամանակի մէջ և ի հարկին , համար կը պահանջէ զաւառին մէջ գտնուած թաղական խորհուրդներէն , իրենց տնտեսական և ելումուտից գործոց վրայ . և իր տեղեկագրովը կը հաղորդէ Գաւառական Քաղաքական ժողովին :

9. Ուսումնական և Տնտեսական խորհրդոց պաշտօնը 2 տարի կը տևէ , և ամեն երկու տարին անդամ մը կ'ուսուակէս կը նորոգուին , և վերընտրելի են :

10. Այն զաւառներուն մէջ՝ որոնք բենակազմ սակաւամթիւ և դրիւք փոքր են , Գաւառական Քաղաքական ժողովը՝ եթէ կրնայ , ինք կը վարէ Ուսումնական և Տնտեսական խորհրդոց պաշտօնը , բայց կեդրոնական վարչութեան հաւանութիւնը կանխաւ առնելով :

Ե .

Գաւառական վարչութեան Թաղական խորհուրդները

1. Թաղական խորհուրդը կը կազմուի այն թաղին կամ գիւղին մէջ , ուր եկեղեցի կայ , և նոյն եկեղեցիին ալ իրեն սեպհական ժողովուրդ ունի :

2. Իւրաքանչիւր Թաղական խորհուրդ իր թաղին ժողովրդեան կողմէ կ'ընտրուի զաղտնի բուկարիութեամբ , ըստ հրահանգի ընտրութեան Գաւառական ընդհանուր ժողովոյ :

3. Թաղական խորհուրդներն ըստ տեղւոյն 3 էն մինչև 7 անդամներէ կը բաղկանան , և իրենց պաշտօնն է ,

Ա. իրենց թաղին ժողովրդեան ազգային գործոց մատակարարութիւնը :

Բ. Եկեղեցւոյ պայծառութեանը խնամախնայ :

Գ. Մանկանց և աղջկանց դաստիարակ-

կոթեանը համար վարժարան ունենալ և անոց յառաջադիմութեանը ջանք ընել :

Գ. Թաղին աղքատաց խնամ տանիլ :

Կ. Թաղեցոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնն ընել :

Դ. Թաղական խորհուրդն իր իշխանութեան ներքեւ գտնուած վարժարանաց վրայ Հողարարձութիւն կը կարգէ 3 էն մինչև 5 ուսումնական և ուսումնասէր անձերէ : սոյն Հողարարձութիւնը վարժարանաց տեսչութիւնը կը վարէ : ծախքը հողարժէք եկեղեցոց սնտուկէն յատկացած ամսականաբար և ժողովորդէն ըրած դպրոցական հանգանակութեամբ :

Սոյնպէս աղջկանց վարժարանը Տիկիններէ կազմուել խնամակալութեան մը կրնայ յանձնել : յար և նման Հողարարձութեան :

Թաղական խորհուրդը ընտրեալ Հողարարձութիւնը և խնամակալութիւնը կը ծանուցանէ Գաւառական Ուսումնական խորհրդոյ : որպէս զի անոր հետ դպրոցական խնդրոց վրայ յարաբերութիւն ունենան :

Ե. Թաղական խորհրդոյ անօրէնութեան տակ է եկեղեցոց սնտուկը. որոյ սուրբն են Թաղին ժողովրդեան կողմէն տրուած թաղական տուրքը : եկեղեցոյ և դպրոցի կալուածոց եկամտները : եկեղեցոյ հատմիջները : կտակաւ կամ օրիշ կերպիւ եղած նուէրները և այլն : Եւթն են եկեղեցոց և վարժարանի ծախքը : գաւառական սնտուկէն յատկացեալ տուրքը : ու աղքատաց տրուելիք օգնութիւնները :

Յ. Նորընտիր Թաղական խորհուրդ մը մինչև որ Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովէն չի վաւերանայ և Առաջնորդին կոնդակով չի հաստատուել : սրաշտօնի չի ձեռնարկեր : այսպէս նաև երբ հրաժարի : Իւր հրաժարականը պիտի մատուցանէ Քաղաքական ժողովոյ : հաշիւն ալ Տնտեսական խորհրդոյ ներկայացնելով :

Դ. Եթէ Թաղական խորհուրդ մը սահմանաւ ժամանակէն յառաջ հրաժարի : Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովը աւժամանակեայ խորհուրդ մը կը կարգէ տնօրէնութիւն : և նոր ընտրութեան հրահանգն ալ ի միասին կը զրկէ :

Թաղական խորհուրդ մը երբ հրաժարի

կամ լուծուի : վարժարանաց Հողարարձութիւնը կամ խնամակալութիւնը կը շարունակեն իրենց պաշտօնը : առժամանակեայ և կամ նուրնտիր սնտուկան խորհրդէն ստանալով եկեղեցոց սնտուկէն յատկացեալ ամսականը :

Իսկ եթէ Հողարարձութիւնը կամ խնամակալութիւնը հրաժարին կամ լուծուին : Գաւառական վարչութեան Քաղաքական ժողովոյ պարտքն է անմիջապէս առժամանակեայ Հողարարձութիւն մը կամ խնամակալութիւն մը կազմել : եթէ Թաղական խորհուրդը չուզէ կամ չի կրնայ նորն ընտրել անմիջապէս :

Տ. Թաղական խորհրդոց : ինչպէս նաև Հողարարձութեանց և խնամակալութեանց պաշտօնը 4 տարի կը տևէ : և վերընտրելի են :

Զ.

Առաջնորդ

1. Առաջնորդի ընտրութեան ատեն կեդրոնական վարչութիւնն Աղէին մէջ գտնուած բոլոր անդաշտն և առաջնորդական արժանիք ունեցող եկեղեցականաց ընդհանուր ցուցակը կը հարգողէ գաւառին :

Գաւառական կրօնական և Քաղաքական ժողովները յիշեալ ցուցակին մէջէն իրենց դաւառին համար ամենէն աւելի յարմարաւոր երեք անձինքը կը զատեն : և այս ընտրելեաց ցանկը կը ներկայացնեն Գաւառական ընդհանուր ժողովոյ :

Ժողովը կ'ընտրէ զԱռաջնորդը զաղտնիք քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ քուէից :

Գաւառական կրօնական և Քաղաքական ժողովոց պատրաստած ընտրելեաց ցանկէն դուրս անձի վրայ ալ քուէ կը տրուի : բայց պէտք է որ այն անձին անունը նշանաբան ըլլայ կեդրոնական վարչութեան ընդհանուր ցուցակին մէջ :

Ղեկորութիւնը կատարուելէ ետև տեղեկագիրը կը շինուի : զոր Գաւառական ընդհանուր ժողովոյ անդամք կ'ստորագրեն : և տեղւոյն խառն ժողովոյ միջոցաւ Արքայան Պատարիարքին կ'ուղարկուի :

Կեդրոնական վարչութեան խառն ժողովը սոյն ընտրութեան օրինաւորութիւնը ընենելէ և ստուգելէ ետև Պատրիարքական կոնդակաւ

կը հաստատէ զԱռաջնորդը, և թ. Գրան իմաց տարով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի :

Մինչև որ կեդրոնական վարչութեան կողմանէ Առաջնորդին ընտրութեան օրինաւորութիւնը չհաստատուի և չվաւերանայ, Առաջնորդն եթէ քաղաքին մէջ ալ գտնուի, պաշտօնին չի կրնար ձեռնարկել :

2. Առաջնորդը Գաւառական ժողովոց նախագահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, և տեղական կառավարութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է :

Իր պարտաւորութիւնն է գաւառին մէջ Ազգային Սահմանադրութեան և կեդրոնական վարչութեանն սահմանեալ օրինաց և հրահանգաց անթերի գործադրութեանը հսկել :

3. Առաջնորդն իրեն եկած գործերը ո՛ր ժողովը և խորհրդոյ կը վերաբերին՝ նէ, այն ժողովոյն և խորհրդոյն կը յանձնէ քննութեան և որոշման համար : Կրօնական և Քաղաքական ժողովոց մէջ որոշուած գործոց վրայ Առաջնորդին առ տեղական կառավարութիւնն մատուցած թագրիւնները և կամ ուրիշ պաշտօնական գրութիւնները, և թէ առ ազգային կեդրոնական վարչութիւն ուղղեալ գրութիւնները վաւերական չեն կրնար ըլլալ, և թէ որոշուած ժողովոյն կողմէ ալ կնքեալ կամ ստորագրեալ չ'ըլլան :

Իսկ երբ ստիպողական գործ մը պատահի, որոյ տնօրէնութեանը համար կարելի չըլլայ մինչև ժողովոյն գումարման օրը սպասել, և կամ արտաքոյ կարգի ժողով գումարել, Առաջնորդը կընայ այդտե եղածը ինքնին տնօրինել, իր վրայ առնելով պատասխանատուութիւնը : Բայց պարտաւորեալ է եզրէութիւնը արձանագրել տալ կանոնաւոր կերպով, և ո՛ր ժողովոյն կը վերաբերի նէ, անոր յաջորդ Նիստին ներկայացնել վաւերացման համար :

4. Առաջնորդն իր բացակայութեան ատեն, իր ազգային ժողովոց մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը դեռ չըստորագրած, կարող է անոնց վրայ՝ իր քիտողութիւններն յայտնելով խնդրել կրկին քննութեան յանձնել : Իսկ այս վերաքննութեանն ետքը՝ պարտաւորեալ է նոյն թղթերը ստորադրել, եթէ տրուած որոշումը Սահմանագր-

ութեան արամադրութեանցը անհամաձայն չգտնէ :

5. Առաջնորդը կրնայ գաւառին մէջ գտնուող և Սահմանադրութեան սկզբանցը համեմատ չվարուող եկեղեցական մը, վարժապետ մը, Եկեղեցւոյ, Վանքի, Գպրոցի, կամ Հիւանդանոցի գործակալ մը, պաշտօնին հանելու առաջարկութիւն ընել ձեռնհաս ստորվոյն կամ խորհրդոյն :

6. Առաջնորդը գաւառական սնտուկին իրեն յատկացեալ ամսական կ'ունենայ, և ինք կը տեսնէ Առաջնորդարանին ներքին ծախքը :

7. Առաջնորդը իրեն յատուկ փոխանորդ մը կ'ունենայ, զոր Խառն ժողովը կ'ընտրէ և Առաջնորդը կը հաստատէ :

8. Առաջնորդը ըստ օրինաց Տէրութեան, արքունի ժողովոյ անդամ է . հոն գաւառին վերաբերեալ որ և է ազգային հանրական և անհատական խնդրոց վրայ իր կարծիքը յայտնել և հանրադրի վրայ իր ստորագրութիւնը դնել յառաջ՝ Գաւառական վարչութեան հանձնութիւնը պիտի առնու . Ի՛ր բաց առեալ այն ստիպական խնդիրները, որոց վերաբերեալ տնօրէնութիւնը արդէն Գաւառական վարչութեան կողմէն նշանակուած կ'ըլլան :

Եթէ արդէն չի նշանակեալ խնդրոց մը համար՝ պատասխանատուութիւնը վրան տանելով, կարծիքը և ստորագրութիւնը տայ, Գաւառական վարչութեան յառաջիկայ նիստին պիտի իմացնէ :

Ճիշդ այսպէս պիտի վարուին նաև այժմայ անդամները, որ արքունի ժողովոց մէջ կը նստին ի դիմաց ազգին :

Եթէ Առաջնորդը իր վիճակէն բացակայ ըլլայ, Առաջնորդական փոխանորդը կամ տեղապահը կը բաղմի ուրբունի ժողովոյ մէջ :

Թիւերուն մէջ տեղական կառավարութեան ժողովոյ անդամ է այն եկեղեցականը, որ տեղոյն թաղական Խորհրդէն ընտրեալ և գաւառական Քաղաքական ժողովէն վաւերացեալ է այս պաշտօնին համար, զոր կը վարէ յար և նման Առաջնորդին :

9. Առաջնորդը իրաւունք չունի ինքնին լուծել և փոխել Գաւառին կրօնական և Քաղաքական ժողովները և անոնց վերաբերեալ խորհուրդները : Բայց երբ տեսնէ թէ տանցմէ մէկը Սահմանադրութեան սկզբանցը հա-

կառավարելու ընթացքի մեջ է : առաջին անգամին բացատրութիւն կուղի: այն ժողովն կամ խորհուրդէն . երկրորդին իմաց կուտայ անոր ապօրինաւոր ընթացքը . իսկ երրորդին՝ Գաւառական ընդհանուր ժողովոյն կը դիմէ, եթէ ամբաստանութիւն կրօնական կամ Քաղաքական ժողովն է . և կամ Քաղաքական ժողովոյն կը դիմէ՝ եթէ Ոսումնական և Տնտեսական և Թաղական խորհուրդներէն մէկն է . և պատճառները ցուցնելով՝ ամբաստանեալ ժողովոյն կամ խորհրդոյն լուծուի կ'առաջարկէ :

Եթէ Առաջնորդը իր գաւառական ընդհանուր ժողովին դէմ մը գտնուած ունենայ, կը դիմէ առ Կեդրոնական վարչութեան Խաւարն ժողովն :

Ե .

Ամբաստանութիւն Առաջնորդի շրջ

1. Առաջնորդը կ'ամբաստանուի Գաւառական ընդհանուր ժողովն կամ նոյն գաւառին կրօնական և քաղաքական ժողովներէն կամ ասոնցմէ մէկէն : Ամբաստանող կամ բողոքող ժողովը Կեդրոնական վարչութեան կը նորոգէ իր ամբաստանութիւնը կամ բողոքը .

2. Կեդրոնական վարչութիւնը նախ բացատրութիւն կը պահանջէ առաջնորդէն . և երբ իրաւաստութեան միջոցները պակսին, ամբաստանութեան նիւթին և այլ պարագայից նկատմամբ, եթէ արժան գտնէ, առ ժամանակեայ կը հետաքննէ Առաջնորդը նոյն տեղէն . և Գաւառական վարչութիւնը առաջնորդական տեղապահ մը կը նշանակէ և Կեդրոնական վարչութիւնը զայն կը վաւերացնէ : Առաջնորդական թշուակին կէտը կը ղըրկուի Առաջնորդին և միւս կէտը Տեղապահին կը յատկանայ :

Իսկ երբ Կեդրոնական վարչութիւնը նկատէ որ ամբաստանութիւնը ծանր է, և ամբաստանողը կամ ամբաստանեալն ալ քննութիւն ընելու լրայ կը պնդէ, Գաւառական ընդհանուր ժողովը գումարելու և քննութիւն ընելու հրահանգը կուտայ, և ի հարկին իր կողմէն ալ տեսուչ կը ղրկէ :

3. Եթէ Առաջնորդն ընդհանուր ժողովի գումարէ, թէ Գաւառական ընդհանուր ժողովը ղիւանը, և եթէ կրօնական կամ քաղաքական ժողովը ղիւաններէն մէկն կամ եր-

կուքն ի միասին, և եթէ Կեդրոնական վարչութեանն նշանակեալ Տեսուչը ըստ օրինի կրօնական հրաւիրել Գաւառական ընդհանուր ժողովը : Եթէ Գաւառական ընդհանուր ժողովը գումարէ անհար ըլլայ, Կեդրոնական վարչութիւնն իր կողմանէ քննիչներ կը կարգէ, և անոնց միջոցաւ ամբաստանութիւնը կը քննէ, և ըստ այնմ արդարութիւնը կը վճռէ :

4. Գաւառական ընդհանուր ժողովն ներկայացեալ ամբաստանութիւնը քննելու համար՝ ժողովն իր մէջէն կ'ընտրէ 3 եկեղեցական և 3 աշխարհական խառն Յանձնաժողով մը, (որ իր մէջ բողոքող անձանցմէ մարդ պիտի չունենայ), և երբ ամբաստանութիւնը հաստատուի, ու Առաջնորդին հրաժարումն անհրաժեշտ գտաւուի, այս եղելութեանց բովանդակ տեղեկագիրը Գաւառական ընդհանուր ժողովոյ անդամոց մեծագոյն մասէն ստորագրեալ, կը ղրկուի առ Կեդրոնական վարչութիւնն :

Սոյն տեղեկագրին մէկ օրինակն ալ նոյնպէս Գաւառական ընդհանուր ժողովոյ մեծագոյն մասէն ստորագրեալ կը մատուցուի Առաջնորդին, և մատուցումն թուականէն մինչև մէկ կամ ըստ հետաւորութեան տեղւոյն երկու ամիս՝ Առաջնորդն իրաւունք ունի բողոքելու կամ իր ղիտողութիւնները ներկայացնելու Կեդրոնական վարչութեան :

Եթէ Առաջնորդը չի բողոքէ, և որոշեալ պայմանաժամն անցնի, ինքնին իր պաշտօնէն դադարեալ է :

Իսկ եթէ բողոքէ կամ ղիտողութիւն ներկայացնէ Կեդրոնական վարչութեան, այն ատեն մինչև Կեդրոնական վարչութեանն առնելիք որոշման օրը՝ առաջնորդական պաշտօնը վարելէ դադարեալ է, բայց իւր անունը Ս. Պատարաղի մէջ յիշուելէ դադարած չէ : Այս միջոցին առաջնորդական փոխանորդը կը վարէ առաջնորդական պաշտօնը :

5. Կեդրոնական վարչութեան Խառն ժողովը տեղեկագիրը լսելէն և Առաջնորդին բողոքը կամ ղիտողութիւններն առնելէն վերջը, անմիջապէս քննիչներ կը ղրկէ ի նոյն գաւառ, անոր մերձակայ վիճակաւորներէն, կամ այլուստ՝ եկեղեցական և աշխարհական դասէն, որ պաշտօն կ'ունենան նոյն գաւառին ընդհանուր ժողովոյ և Առաջնորդին ներկայութեան

նր ամբաստանութեան կէտերը յարաքննելու :  
Եթէ ամբաստանեալ առաջնորդ մը եպիս-  
կոսոս է , դնացող եկեղեցական քննիչին մէկն  
եպիսկոպոս ըլլալու է :

Նոյնպէս դնացող եկեղեցական քննիչը  
նոյն վիճակին առաջնորդութեան ընտրելի չի  
կրնար ըլլալ այն անդամին համար :

Քննչաց ծախքը դաւառական անտուկին  
կը վերաբերի :

Քննիչները վերաքննութեան արդիւնքը  
կը տեղեկադրեն առ Կեղրոնական վարչու-  
թիւնն :

Կեղրոնական վարչութեան Խառն ժողովը  
նոյն տեղեկագրին վրայ իր վիճիւր կուտայ , որ  
եթէ առաջնորդին անկամքը կը վերաբերի , կը  
հաղորդէ առ քննիչ պաշտօնեայս եւ առ դա-  
գարեալ առաջնորդն :

6. Գաղարեալ Առաջնորդն անմիջապէս  
իր վիճակէն կ'ելլայ , Կեղրոնական վարչու-  
թեան նշանակած տեղն երթալու :

Եթէ դաղարեալ Առաջնորդը վերաքննու-  
թիւն պահանջէ ի Կ. Պօլիս , ուղղակի պար-  
տաւոր է Կ. Պօլիս գալ , եւ վերաքննութեան  
օրինանոց մաստերն ներկայացնել :

Եթէ միջոց անցնի , եւ ապա դաղարեալ  
Առաջնորդ մը բողոքէ , անընդունելի պիտի  
ըլլայ : Այս միջոցը առ առաւելն չորս ամիս է :

Եթէ դաղարեալ Առաջնորդ մը բողոքա-  
նայ եւ վեր ի վայր յուզէ վիճակը , այսպիսին  
արքունի հրամանաւ կը հանուի իր տեղէն , եւ  
որոշեալ տեղ մը կը զրկուի :

Երբ Առաջնորդ մը դաղարի իր պաշտօ-  
նէն կամ հրաժարի եւ կամ վախճանի , Գաւա-  
ռական վարչութեան Խառն ժողովն անմիջա-  
պէս եպիսկոպոս կամ վարդապետ եւ կամ քա-  
հանայ տեղապահ մը կը կարգէ , եւ յետոյ անոր  
միջոցաւ կը հրաւիրէ Գաւառական Ընդհանուր  
ժողովը նոր առաջնորդ մ'ընտրելու , այս մա-  
սին Կեղրոնական վարչութեանէն ստած հրա-  
հանդին համեմատ :

Մինչև եւ նոր Առաջնորդի մ'ընտրութիւնը՝  
եթէ Գաւառական վարչութիւնը առաջնորդա-  
կան տեղապահ մը անմիջապէս չի նշանակէ ,  
Կեղրոնական վարչութիւնը զայն կը կարգէ :

7. Երբ Առաջնորդի մը վրայ եղած ամ-  
բաստանութիւնները ծանր ըլլան , եւ չի կրնալ  
արդարանալ . եթէ յանցանքը եկեղեցոյ ղէմ

է , առաջնորդական պաշտօնէն դաղարելէն  
դատ՝ եկեղեցոյ օրինաց համեմատաւ կը պար-  
տուի :

Իսկ եթէ Ազգային Սահմանադրութեան եւ  
Կեղրոնական վարչութեանէն սահմանեալ օրինաց  
եւ հրահանգաց ղէմ է , իր յանցանացը համ-  
մատ արդէն վարած պաշտօնէն դաղարելէն  
դատ՝ որոշեալ ժամանակ մ'ալ ազգային որ եւ  
է պաշտօն վարելէ կը զրկուի :

Եւ եթէ ժողովուրդ հովուելու եւ անոր  
օգտին ու յառաջադիմութեան նպաստելու ան-  
բաւական լինելն հաստատուած ըլլայ , առաջ-  
նորդական պաշտօն վարելէ բողոքովն զրկու-  
լու վճիռ կ'ընդունի :

8. Եթէ ի դաւառին կամ ի Պօլիս եղած  
վերաքննութիւնը Գաւառական Ընդհանուր ժո-  
ղովոյ աննպաստ ըլլայ , եւ Առաջնորդին ու ա-  
նոր մէջ համաձայնութիւնն անկարելի , այն  
ատեն Կեղրոնական վարչութիւնը կը լուծէ  
Գաւառական Ընդհանուր ժողովը եւ անմիջա-  
պէս վերակազմիլ կուտայ :

Եթէ վերակազմեալ Գաւառական Ընդհա-  
նուր ժողովը դարձեալ իր առաջնորդը չուզե-  
լուն վրայ պնդէ , այն ատեն Կեղրոնական  
վարչութիւնը առժամանակ մը վիճակէն կը հե-  
ռացնէ Առաջնորդը : Առաջնորդական Թոշակին  
կէջը Առաջնորդին կը զրկուի :

Ը :

Միջամտութիւն Կեղրոնական վարչութեան

1. Երբ Առաջնորդ մը կամ Գաւառական  
վարչութիւն մը Սահմանադրութեան եւ Կեղ-  
րոնական վարչութեանէն սահմանեալ օրինաց եւ  
հրահանգաց հակառակ ընթացքի մէջ զանուխ-  
եւ իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը չի  
կատարեն , Կեղրոնական վարչութիւնն իրա-  
ւունք ունի ազդարարութիւն ընել անոնց եւ  
քացարարութիւն պահանջել :

Կեղրոնական վարչութիւնն ի հարկին  
մերձակայ առաջնորդներէն կամ վանականնե-  
րէն կամ այլուստ՝ եկեղեցական եւ աշխարհ-  
կան տեսչէ կը զրկէ հոն :

2. Եթէ Առաջնորդը կամ Գաւառական  
վարչութիւնը յամաւին իրենց ընթացքին մէջ՝  
տեսչին միջոցաւ Գաւառական Ընդհանուր ժո-  
ղովը կը հրաւիրուի , եւ Կեղրոնական վար-  
չութիւնը կը դազրեցնէ զանոնք իրենց պաշ-

ածնէն ըստ տեղեկադրի՝ Գաւառական Ընդհանուր ժողովին :

3. Այսպիսի պարագայի մէջ, եթէ Գաւառական Ընդհանուր ժողովն ալ համաձայն չտեսնի Առաջնորդին կամ Գաւառական վարչութեան, Կեդրոնական վարչութիւնը զայն ալ կըլուծէ, եւ իր կողմէն շրջուած Տեսչին միջոցաւ առժամանակեայ վարչութիւն մը կը կազմէ, առաջնորդական տեղապահ մ'ալ կարգելով ջնոր ընտրութիւն Գաւառական Ընդհանուր ժողովոյ :

Կեդրոնական վարչութիւնն այսպէս պիտի վարուի, երբ թէ այսպիսի եւ թէ ուրիշ պարագայի մէջ գաւառական Ընդհանուր ժողով զուժարեւ տայն անհնար ըլլայ իրեն, կամ թէ ժողովը ցրուած եւ կամ ընաւ չկողմ ըլլայ :

4. Եթէ Առաջնորդը կամ Գաւառական վարչութիւնը եւ կամ Գաւառական Ընդհանուր ժողովը՝ որ Կեդրոնական վարչութեան միջոցաւ պաշտօնէ դադարած կամ լուծուած են, Սահմանադրութեան հիմնական սկզբանց, Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութեան եւ օրինաց, Ազգային իրաւանց եւ արտօնութեանց հակառակ վարուած ըլլան. եւ ազգային սեփականութեանց ու մատակարարութեան մէջ նենդութեամբ բռնուած, կամ ազգային յառաջադիմութեան արդեւք եղած են գիտմամբ եւ գիտութեամբ, վերջապէս Ազգի եւ Եկեղեցւոյ դէմ զիտմամբ ինասակար գտնուած ըլլան, վերընտրելի չեն իրենց պաշտօնան համար. ի բաց առեալ ժողովոց այն մասը որ փոքրամիւս է, եւ բողոքարկու մեծադոյն մասին դէմ :

5. Իսկ երբ վերընտրելի չըլլալու չարի ծանր վիճակ մը չունենան, եւ ընտրուելէն յետոյ զարձեւալ ըստ առաջնոցն շարունակին այն ընթացքին, որոյ համար առաջին անգամ պաշտօնէ դադրեցան կամ լուծուեցան, Կեդրոնական վարչութիւնը իր Ա. Բ. Գ. աղաբարութիւններն ընելէ ետքը, կը լուծէ զանոնք իրենց պաշտօնէն վերընտրելի չըլլալու պայմանաւ :

2.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Հ Ր Ա. Հ Ա. Ն Գ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ՀԱՄԱՐ

Ա. Զ. Դ

Թաղական խորհրդոց համար պատրաստեալ Հրահանգին այն մասերը, որ Սահմանադրութեան արտադրութեանց հետեւելով, Թաղական խորհրդոց ընթացից կանոնաւորութեանը եւ անոնց պաշտօնան ու պարտաւորութեանց ճշգրտութեանը համար, Կեդր. վարչութեան կրօն. եւ Գաղ. Խան ժողովոյ կողմէն՝ Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց կարծիքն ալ առնելով սահմանուած են, փորձառութեամբ պիտի վերաքննուին՝ երբ հարկը պահանջէ, եւ երբ Թաղ. խորհուրդք իսկ իրենց փորձառութեան արդիւնքը առաջարկեն առ Կեդր. վարչութիւն. եւ վերաքննեալ մտտերը դարձեալ պիտի հրատարակուին, Բայց մինչեւ որ Կեդրոնական վարչութիւնը սոյն Հրահանգին ամբողջին կամ յատկեալ եւ կամ յատկաւեալ մասանց նորոգ հրատարակութիւն չընէ, սոյն Հրահանգը ամբողջ պիտի գործադրուի. եւ թէ Պօլսոյ եւ թէ գաւառաց Թաղական խորհուրդք պարտաւոր են ըստ այսմ վարուելու :

11 Յունիս 1873

Ի Պատրիարքարանի Հայոց Ի Կ. Պօլլիս

ՆԱԽԱԳԱՀ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐԻՔ Կ՛. ՊՈԼՍՈՑ

Մ Կ Ր Տ Ի Զ Ա Ր Գ Ե Պ Ի Ս Կ Կ Ղ Ո Ս

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Դիւան Կրօնային Ժողովոյ

ԱՏԵՆԱԴՈՒՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ԹԱԴԷՐՈՍ ԵԳՆՍՈՂՈՍ


Դիւան Գաղապան Ժողովոյ

ԱՏԵՆԱԴՈՒՐ ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. Գ. Գ. ՓԱՓԱԶԵԱՆՏ

ՍԵՆԵՔԵՐԻՄ

Ծ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Ա .

Ընտրութիւն

1. Թաղական խորհուրդ (1) կը կազմուի այն թաղին կամ գիւղին մէջ, ուր Եկեղեցի կայ, և այն Եկեղեցին ալ իրեն սեփական ժողովուրդ ունի :

2. Իւրաքանչիւր թաղական խորհուրդ իր թաղին ժողովուրդեան կողմէն կը ընտրուի :

Ամէն ազգային անհատ՝ որ 25 տարին լրացուցած է, և ընտրողութեան լրաուունքէն դատաստանապէս զրկուած չէ, (Տես Սահմ. յօդ. 67) իրաւունք ունի մասնակից ըլլալ ընտրութեան թաղական խորհրդոյ :

3. Ընտրական գործողութիւնները կատարելու համար եկեղեցւոյ Քարոզիչը կամ Աւագերէցը իր նախագահութեանը տակ Ընտրողական ժողով մը կը կազմէ, (Տես Սահմ. յօդ. 71) :

4. Ընտրողական ժողովը կը բաղկանայ հրաժարեալ կամ առժամանակեայ թաղական խորհրդէն, և 3 էն մինչև 6 թաղին պատուաւոր անձերէն :

5. Եթէ հրաժարեալ կամ առժամանակեայ թաղական խորհուրդը չուզէ մասնակցիլ ընտրական գործողութեան, նախագահը կ'ընտրէ 6 պատուաւոր թաղեցիներ, և առնչմով կազմեալ Ընտրողական ժողովը կը վարէ իր պաշտօնը :

Այսպէս կ'ըլլայ, երբ թաղական խորհուրդ մը վերընտրելի չըլլալու պայմանաւ լուծուի Վարչութեան ձեռքը. նոյն լուծեալ թաղական խորհուրդը կը գրկուի Ընտրողական ժողովոյ անդամակցութենէ :

6. Քուէարկութիւն և քուէհամար կը կատարուին ըստ ընտրական օրինաց, (Տես Սահմ. 72 էն 80 յօդուածք) :

7. Ընտրական գործողութիւնը աւարտելուն պէս, Ընտրողական ժողովն իր տեղեկագիրը կը պատրաստէ և ստորագրելով կը դրկէ առ Աղգ. Վարչութիւնն :

8. Եթէ թաղը Կ. Պօլսոյ մէջ է՝ Կեդր. Վարչութեան Քաղ. ժողովը նոյն տեղեկագիր-

(1) Թաղ խորհուրդը Կ. Պօլսոյ և շրջակայից մէջ ըստ տեղւոյն 3 էն մինչև 12 անդամներէ կ'ընան բաղկանալ, իսկ գաւառացի մէջ 3 էն մինչև 7 անդամներէ :

ըը քննելէն, և ընտրական գործողութեան օրինաւորութիւնը ստուգելէն ետքը՝ կը վաւարացնէ, և Պատրիարքական կոնդակաւ կը հաստատուի թաղական խորհուրդը :

Իսկ եթէ թաղը կամ քաղաքը կամ գիւղը դաւաւոր մէջ է, Գաւառական Վարչութեան Քաղ. ժողովը կը վաւարացնէ, և Առաջնորդական կոնդակաւ կը հաստատուի թաղական խորհուրդը :

9. Հաստատութեան կոնդակն ընդունելով եկեղեցւոյ Քարոզիչը կամ Աւագերէցը, կը հրաւիրէ ընտրեալները յեկեղեցի, և ծանուցանելով՝ կը շնորհաւորէ անոնց ընտրութիւնը :

10. Թաղական խորհրդոյ օլաշանը 4 տարի կը տևէ, և հինգերորդ տարւոյն սկիզբը կը նորոգուին և վերընտրելի են :

11. Թաղական խորհրդոյ անդամ մը եթէ շարժման նիստի երեք անգամ իրարու վրայ բացակայ ըլլայ՝ առանց հիւանդութեան կամ ճանապարհորդութեան պատճառի, ազդարարութիւն կ'ընդունի թաղ. խորհրդէն. և եթէ յաջորդ նիստին դարձեալ բացակայ մնայ երկրորդ աղբարարութեամբ իրեն կը ծանուցուի որ եթէ միւս նիստին դարձեալ բացակայ մնայ, ինքնին հրաժարեալ պիտի համարուի :

12. Երբ սահմանեալ ժամանակէ յառաջ թաղական խորհրդականութենէ հրաժարողաց թիւը երեքի (1) հասնի, թաղական խորհուրդը պարտաւոր է ծանուցանել Աղգային Վարչութեան, որ յետ քննելոյ պատճառը՝ եթէ կայ՝ անոնց տեղ նորոգ ընտրութեան հրահանգք կուտայ :

13. Եթէ թաղական խորհուրդ մը սահմանեալ ժամանակէն յառաջ հրաժարի,՝ պարտական է իր հաշիւներն ալ ի միասին իր համարառու Վարչութեան ներկայացնել, որ անմիջապէս նոր ընտրութեան հրահանգք կուտայ :

Կ. Պօլսոյ Թաղ. խորհուրդը համարա-

(1) Թէ և 3 հրաժարելոց տեղ նորոգ ընտրութիւն կըլլայ. բայց 5 անգամէ բազկացեալ խորհրդէ մը երբ 2ը հրաժարին, նոյնպէս 3 ուլ բաղկացեալ խորհրդէ մը երբ 1ը հրաժարի, մնացեալ տեղամբ հրաժարելոց տեղ նոր ընտրութիւն ընելու համար պարտական են ծանուցանել Վարչութեան :



տու են կեդր. Վարչութեան, և գաւառաց թաղական խորհուրդք իւրաքանչիւրն իւր Գաւառական Վարչութեան :

14. Եթէ Թաղական խորհուրդ մը հայեանքը չի տուած հրատարի իր պաշտօնէն, Ազգային Վարչութիւնը առժամանակեայ Թաղական խորհուրդ մը կը կարգէ, մինչև որ նախորդին հաշիւները աւնուին, և ապա նոր ընտրութեան հրահանգը կուտայ :

Այսպէս՝ եթէ նոր ընտրութեան դէժտրդեք ենէն, կամ թաղը յուզուի և դժուարին ըլլայ ընտրական գործողութիւններն սկզբի կամ շարունակել, Ազգային Վարչութիւնն անմիջապէս առժամանակեայ խորհուրդ մը կը կարգէ, մինչև արգելքները բարձուին. կամ թաղը հանդարտելով ընտրական գործողութիւններն սկսիլ և շարունակել հնարաւոր ըլլայ :

15. Երբ Թաղական խորհրդոյ մը մեծազոյն մասը հրատարի. մինչև հրատարման թըուականն եղած հաշիւն ալ ի միասին պարտական է ներկայացնել Վարչութեան. ապա թէ ոչ առժամանակեայ խորհուրդ կը կարգուի, և փոքրազոյն մասն ալ նոյն առժամանակեայ խորհուրդին անդամ են : Իսկ եթէ փոքրազոյն մասը ամբաստանութեան ներքև է, դարձեալ առժամանակեայ Թաղական խորհրդոյ անդամ են, մինչև քննութեան աւարտումը. այսպէս յաւարտ քննութեան ամբաստանութեան և հաշուոց՝ հրատարակելոց տեղ նորոգ ընտրութիւն կըլլայ :

Թաղական խորհրդոյ մը վրայ ետքէն ընտրութիւն եթէ ըլլայ, մնացելոց ընտրութեան թուականէն սկսեալ 4 տարւոյ տևողութիւն դիտի ունենայ, և ոչ թէ նոր ընտրելոց թըուականէն :

Բ.

Պաշտօն Թացական խորհրդոյ

16. Թաղական խորհրդոյ պաշտօնն է . Ա. Իր թաղին ժողովրդեան աղբային քործոց մնասակարարութիւնը .

- Բ. Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը .
- Գ. Վարժարանաց հոգաբարձութիւնը .
- Դ. Աղքատաց խնամակալութիւնը .
- Ե. Թաղեցւոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը .

17. Թաղ. խորհուրդը սոյն պաշտօնները

բաց ի վարժարանաց Հոգաբարձութեանէն, ինք անձամբ՝ կամ իր մէջէն և կամ դրսէն և կամ խառն ընտրեալ հոգաբարձուաց միջոցաւ կը վարէ :

18. Թաղ. խորհուրդ մը եթէ իր պաշտօնին և պարտաւորութեան համար ներքին կանոնադրի պէտք ունենայ, կը սպտորատէ Սահմանադրութեան և ներկայ Հրահանգի տրամադրութեանց համաձայն, և իր համարառու վարչութեան վաւերացնել տալէ յետոյ կը գործադրէ :

19. Իսկ վարժարանաց համար ի հարկէ առանձին Հոգաբարձութիւն կը կազմէ, իր մէջէն կամ դրսէն և կամ խառն ընտրելով 3 էն մինչև 5 ուսումնական և ուսումնասէր անձինք : Աղջկանց վարժարանի խնամակալութիւնն ալ՝ եթէ կարելի է՝ ձեռնհաս տիկիներու կը յանձնէ, ապա թէ ոչ՝ Հոգաբարձութեան տեսչութեան ներքև կը թողու :

Թաղ. խորհուրդը ընտրեալ Հոգաբարձութիւնն և խնամակալութիւնը կը ծանուցանի տեղւոյն Ուսումնական խորհրդոյ, որպէս զի անոր հետ զարգացական խնդրոց վրայ յարաբերութիւն ունենան :

20. Թաղ. խորհրդոյ անօրէնութեան ներքև է եկեղեցւոյ անտուրը, որոյ մուտքն են թաղին ժողովրդեան կողմէն տրուած Թաղական տուրը, եկեղեցւոյ և վարժարանի կալուածոց եկամուտները, եկեղեցւոյ հասոյթները, կտակաւ կամ ուրիշ կերպիւ եղած նուէրները, և ըն :

Ելքն են՝ եկեղեցւոյ և վարժարանի սահմանեալ ծախքը, Ազգային Վարչութեան (կեդրոնական կամ Գաւառական) սնտուկին յատկացեալ տուրը, ու աղքատաց տրուելիք օգնութիւնները, և ըն :

21. Երբ՝ եկեղեցւոյ մը նիւթական գիճակը անբաւական ըլլայ, եթէ գաւառի մէջ է՝ Գաւառական Վարչութեան, և եթէ Կ. Պոլսոյ մէջ է՝ կեդր. Վարչութեան օգարտքն է ըստ կարելոյն անոր նպաստել :

Այսպէս երբ եկեղեցւոյ մը սեպական ժողովուրդը նուազած ըլլայ՝ կամ անբաւական համարուի, եթէ գաւառի մէջ է՝ Գաւառական Վարչութեան և եթէ Կ. Պոլսոյ մէջ է՝ կեդր. Վարչութեան անմիջական տեսչութեանը ներքև կ'ըլլայ նոյն եկեղեցին :

22. Թաղական խորհուրդը պէտք է որ ըստ կարելոյն օրինաւոր Գիւանատուն ունենայ իր յարաբերութեանց համար : Պէտք է նաև որ թաղին մէջ եղած ծննդոց , ամուսնութեանց և վախճանմանց արձանագրութիւններն ընէ կանոնաւոր կերպով մասնաւոր տուն մարի մէջ :

23. Ամեն Թաղական խորհուրդը պարտական է ,

Ա. Եկեղեցւոյ և վարժարանի հասուցից և կալուածոց (1) սպասպանութեանը և բարգաւաճմանը հոգ տանիլ :

Բ. Թաղին մանուկներն և աղջկիները ազգային դաստիարակութեամբ կրթելու փոյթ ունենալ , և թոյլ ու անհող ծնողները յորդորել և պարտաւորել զանոնք՝ զաւակներն վարժարան զրկելու , և կարօտեալները ձրի դաստիարակել տալու :

24. Թաղ . խորհուրդը սլարտական է եկեղեցւոյ և վարժարանի կալուածոց և ամենայն հաստատութեանց կալուածադրերուն օրինակը զրկել տեղւոյն Տնտ . խորհրդոյ . և անոնց վիճակը ներկայացնել երկու տարին անգամ մը :

25. Որ և է կալուածի համար , որ վարձու կը տրուի , Թաղ . խորհուրդը պարտական է ըստ օրինի դաշնադիր (քոնթրակթ) ունենալ վարձակալին հետ , մէկ տարուան և առ առաւելն երկու տարուան համար : Երկու տարիէն աւելի միջոցով եթէ վարձու տալ հարկ ըլլայ , տեղւոյն Տնտ . խորհրդոյ հաւանութեանը պիտի գլխի : Նոյնպէս Տնտ . խորհրդոյ պիտի գլխի եթէ վարձակալին հետ նորոգութեան կամ շինութեան՝ և այլ տեսակ սովորականէ դուրս դաշնադիր մը ընելու պէտքը տեսնուի :

26. Թաղ . խորհուրդը որ և է ղնուցին և գաճառունն չի կրնար ընել , մինչև որ՝ կանխօտ տեղւոյն Տնտեսական խորհրդոյ հաւանութիւնը չառնու :

(1) Ազգային կալուածները , ինչպէս նաև եկեղեցի և վարժարան և այլ շէնքեր՝ հրդեհի դէմ ապահովելու հոգ պիտի տանին Թաղական խորհուրդը , մասնաւոր ուր որ անպահովութեան առններ (սիկուրթա) հաստատուած բլաշով , դիւրութիւն կայ :

Ստիպողական պարագայի մը մէջ կրնայ շահաւոր բան մը ղնել և անմիջապէս ծանուցանել Տնտ . խորհրդոյ , բայց որ և է շարժական և անշարժ ստացուածք չի կրնար վաճառել , առանց Տնտես . խորհրդոյ հաւանութիւնը առնելու կանխաւ :

Իսկ եթէ թաղի մը մէջ ղնուած եկեղեցի և այլ ազգային հաստատութիւն իրեն սեպհական վագրճ ունի , Թաղ . խորհուրդը վագրճի օրինաց համեմատ առուծախը կը կտարայ , և տեղեկագրով մը կը ներկայացնէ Վարչութեան , և Պատրիարքական կամ Առաջնորդական կնքով կը վաւերանայ սենթը :

27. Թաղ . խորհուրդը դրամական փոխառութիւն և փոխառութիւն չի կրնար ընել , մինչև որ Տնտ . խորհրդոյ հաւանութիւնը չառնու : Եթէ ընդհակառակն վարուի , իր անդամոց անձնական պարտքը պիտի համարուի :

28. Որ և է փոխառութեան և այլ դրոշմ ցած պարտոց համար տրուած պարտագիր (սենէտ) Թաղական խորհրդոյ կնիքը և անդամոց ամէնուն կամ մեծադոյն մասին ստորագրութիւնը պիտի կրէ :

29. Թաղ . խորհուրդը կորուչ եկեղեցւոյ և վարժարանի կալուածոց վերաբերեալ նորոգութիւնները և շինութիւնները , բայց կանխաւ հաճութիւն առնելով Տնտ . խորհուրդէն , ի բաց առեալ այն մասը մունը նորոգութիւնները կամ շինութիւնները , որոնք ոչ փոխառութեան պէտք ունին , և ոչ ալ եկեղեցւոյ սնտուկին ընթացիկ վիճակին խոչընդոտ կըլնան ըլլալ :

30. Թաղ . խորհուրդն իր մէջէն կ'ընտրէ Գանձապետը և իր մէջէն կամ դրսէն՝ Հումարակալ , և Առեւտապետի մը ու Առեւտադպրի ընտրութեան հետ՝ կը ծանուցանէ Ազգային Վարչութեան :

Գանձապետը կ'ընէ որոշեալ ծախքերը ըստ հաշուեկշռի (պլանմէ) , որ ամէն տարեգրուի Թաղ . խորհուրդը պիտի պատրաստէ յաջորդ տարուան համար , և տեղւոյն Տնտեսական խորհրդոյ պիտի ներկայացնէ ի վաւերացումն : Նոյնպէս արտաքոյ կարգի ծախքերը կ'ընէ Գանձապետը ըստ որոյման Թաղ . խորհրդոյ : Ամէն տարեգրուի Թաղ . խորհուրդը անցեալ տարւոյ հաշուեցոյցը անպատճառ պի-

տի ներկայացնել Տնտեսական (տորչորդոյ) :

31. Իւրաքանչիւր Թաղ. (տորչորդոյ) նորագ ընտրութեան ատեն Տնտ. (տորչորդոյ) պէտք եղածին չափ վտերայեալ տունարներ պիտի սայ : օրինակի համար արձանագրութեան, սնտուկի, օրհնուի, մայրհաւուի, շարժական և անշարժ ստացուածոց արձանագրութեան, կտակաց ևն : որչափ տեարակի որ պէտք կայ նոյն Թաղին համար :

32. Գանձապետը ստրտական է սնտուկը մտած և ելած ամենայն դրամական դործորութիւն օրին արձանագրել սնտուկին տուտարին մէջ : ամանի որ էրք Տնտ. (տորչորդոյ) սնտուկին տուտարն ուղի կամ տեսնել, և ինչ և մտից դուտարները ճշդիւ պիտի երեան, և սնտուկի տեսարին համեմատ սնտուկին վիճակը պիտի տեսնուի. բացը Գանձապետին անձնական ստարքը պիտի համարուի. և սնտուկին տեսարին դուքս եղած եկամտից և ծախուց արձանագրութիւն անվտեր է :

Գ.

Պաշտօն Նորարարութեան վարժարանաց

33. Աղգային դաստիարակութեան և նախնական ուսմանց գլխաւոր և անհրաժեշտ աւանդելիքն են հետեւեալները .

(Ա. Կարգ) Ա. Քրիստոնէական վարդապետութիւն ըստ դաստիարակական Հայաստանեայց ուղղափառ Եկեղեցւոյ . և Սրբազան պատմութիւն հին և նոր կտակարանաց :

Բ. Աղգային զրօրտա լիզը, ցեղաբանութիւն Մ. Աւետարանի :

Գ. Աղգային պատմութիւն՝ հանդերձ Հայաստանի արխարհագրութեամբ :

Դ. Եկեղեցական երգեցողութիւն : (Ե. Կարգ) Ե. Տարերը Թուադիտութեան և Երկրաչափութեան հանդերձ Գծարութեամբ :

Զ. Տարերը Աշխարհագրական ուսմանց :

34. Իւրաքանչիւր վարժարան այս ուսմանց գոնէ Ա. կարգին նախնական դիտելիքը պիտի աւանդէ. և արակերտը որոշեալ բնութիւնն անցնելէ և վրայադիւրի ստանալէ յետոյ, Կանցնի թի՛չ այս ուսմանց ընդարձակ մասը և թէ՛ այլ կարեւոր ուսումներն անելու ըստ Հրահանգի Ուսումնական Թորչորդոյ Կեդրոնական Վարչութեան :

Հետեւաբար նախնական ուսմանց ընթացքն աւարտող արակերտաց դարձեալ անհրաժեշտ պիտի աւանդուին՝ միջոց յաւարտ դրութեան ընթացից հետեւեալները :

Ա. Քրիստոնէական վարդապետութիւն և Կրօնագիտութիւն, հանդերձ պատմութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ :

Բ. Աղգային զրարաւ լիզը, նախնեայ մատենագրութիւն :

Գ. Աղգային Պատմութիւն՝ հանդերձ աղգացին հնախոսութեամբ :

Դ. Եկեղեցական երգեցողութիւն՝ հանդերձ մարտադրութեամբ՝ յարմարաւորներու, Եկեղեցական ժամերգութեանց կարգաւորութեանն ալ յատուկ խնամ ատենելով :

35. Իւրաքանչիւր վարժարանի մէջ ամէն օր որդեալ ժամանակ ընդհանուր դասախօսութիւն պիտի բլլայ բարոյականի՝ և ազգային և ընտանեկան կրթութեան վրայ :

36. Այն վարժարանները, որ մասնաւորաց կամ ընկերութեանց ձեռօքը կը մատակարարուին, և Աղգային վարչութեան պաշտօնաւորութեան ներքեւ են, Աղգային վարժարանաց պէս ստրտական են ընթանալ :

37. Հոգարարութեանց գլխաւոր ստրտքն է հոգ տանիլ նախնական գիտելեայ աւանդութեանը և անոնց դաստիարակ և դասադրող ընտրութեանը . Քրիստոնէականի և Կրօնադիտութեան, և Սուրբ Գրոց և Եկեղեցւոյ Պատմութեան դասատուներն ընդունելով ըստ հրահանգի Կրօնական ժողովոյ, և այլ ուսմանց դասատուներն ընդունելով ըստ հրահանգի Ուսումնական Թորչորդոյ :

38. Կրտասուտ և այլ գպրոցական պաշտօնեայ Հոգարարութեան պատասխանատու են միայն և Հոգարարութիւնն ալ ստրտաւանցը յուզողութիւն հրախիբելու և անուղղայններն իրենց պաշտօնէն արձակելու իրաւունքն ունի . բայց դասատուը ալ իրաւունք ունի դիտաւորութիւն կամ բողոք ներկայացնել Ուսումնական Թորչորդոյ :

39. Իւրաքանչիւր Հոգարարութիւն զինքն ընտրող Թաղ. (տորչորդոյ) և իր տեղւոյն Ուսումնական Թորչորդոյ պատասխանատու է . և սպարտական է վարժարանի տեսչութիւնը վարել ըստ Հրահանգի Ուսումնական Թորչորդոյ :

դոյ: Իսկ եթէ ներքին ընթացքի համար յատուկ կանոնագրի պէտք ունենայ՝ կը պատրաստէ, և թէ Քաղաքական և թէ Ոստանական խորհրդոց վաւերացնել տալէն յետոյ կը գործադրէ:

40. Թաղ. խորհուրդը պարտական է ամեն ամսու գլուխ առանց յապաղման Հոգաբարձութեան վճարել որոշեալ ամսական գումարը նկեղեցւոյ անտուկէն: Սոյն ամսական գումարը վարժարանին պիտոյիցը և եկեղեցւոյ անտուկին կարողութեան համեմատութեամբ կանխաւ կ'որոշուի Թաղ. խորհրդոյ և Հոգաբարձութեան մէջ՝ տեղւոյն Ուս. և Տնտ. խորհրդոց խորհրդակցութեամբ:

41. Հոգաբարձութիւնը վարժարանաց նիւթական պիտոյքը կը հոգայ թէ եկեղեցւոյ անտուկէն որոշեալ ամսականաւը, և թէ տըղայոց ծնողներէն առած թղակովը կամ ժողովրդէն ըրած դպրոցական հանգանակութեամբ:

42. Թաղական խորհուրդն եթէ ժամանակէն յառաջ հրաժարի կամ լուծուի, Հոգաբարձութիւնը կը շարունակէ իր պաշտօնը՝ յաջորդէն ընդունելով յատկացեալ ամսական գումարը: Եթէ Հոգաբարձութեան մէջ Թաղ. խորհրդոյ անդամ գտնուի, իր Հոգաբարձութեան պաշտօնը կարող է շարունակել:

43. Իսկ եթէ Հոգաբարձութիւնը ժամանակէն յառաջ հրաժարի կամ լուծուի, Թաղ. խորհուրդը ըստ հրահանգի Ոստանական խորհրդոյ նոր ընտրութիւնը կ'ընէ:

Եթէ Թաղ. խորհուրդը չուզէ կամ չի կրնայ այս ընտրութիւնը մտաւորացնել, Աղքային Վարչութեան Ուս. խորհրդոյ պարտքն է անմիջապէս առժամանակեայ Հոգաբարձութիւն մը կարգել, և վարժարաններն անխընամ չի թողուլ:

44. Հոգաբարձութեանց պաշտօնը 4 տարի կը տևէ, և վերընտրելի են, եթէ Թաղական խորհուրդն արժան դատի:

45. Աղջկանց վարժարանի Խնամակալութիւնը ալ յար և նման Հոգաբարձութեան պաշտօն ունին. և աղջկանց վարժարանաց մէջ նկեղեցական երգեցողութիւնը պարտաւորիչ չէ. անոր տեղ Աղջկեղործութիւնն է անհրաժեշտ աւանդելի:

Դ.

Ամբաստանութիւն

46. Թաղական խորհուրդը կ'ամբաստանուի կամ իր անդամներէն, և կամ իրմէ ընտրեալ Հոգաբարձութիւններէն:

47. Ամբաստանութեան կամ բողոքոյ գիր կուղղուի առ Քաղ. Ժողով, որ կը յանձնէ պատկանեալ Խորհրդոյ՝ լսել անոնց:

48. Վարչութեան խորհուրդը նախ բացատրութիւն կը պահանջէ ամբաստանեալ Թաղ. խորհուրդէն. և երբ գոհացուցիչ չի գտնէ՝ քննիչ կը զրկէ նոյն թաղը, և քննութեան արդիւնքը կը հաղորդէ Քաղաքական ժողովոյ: Քաղ. ժողովը ըստ տեղեկագրի և ըստ ծանրութեան թերութեանցն կը դատէ զՊաղական խորհուրդը, կամ 'ի կանոնապահութիւն և 'ի կարգ հրաւիրելով զնա. կամ եթէ ծանր է ամբաստանութիւնը և ապացուցեալ, կը լուծէ: Թաղական խորհուրդը, վերընտրելի չըլլալու պայմանաւ:

Սոյնպէս 'ի կանոնապահութիւն և 'ի կարգ հրաւիրեալ Թաղ. խորհուրդ մը եթէ միւսանդամ ևս ամբաստանուի և հաստատուի, կը լուծուի՝ բայց վերընտրելի ըլլալու պայմանաւ. երբ դարձեալ ընտրուի և ամբաստանուի ու ամբաստանութիւնը հաստատուի, այն անդամին համար վերընտրելի չըլլալու պայմանաւ և կը լուծուի:

49. Երբ քննութիւնը ամբաստանող կամ բողոքող կողմին անկաստ ըլլայ. եթէ ամբաստանութիւնը ծանր է, և կամ երկու անգամ ամբաստանող գտնուելով՝ չեն յաջողած հաստատելու, թէ՛ Թաղ. խորհրդոյ և թէ՛ Հոգաբարձութեան անդամ ըլլան, կը լուծուին պաշտօնէ:

50. Վարժարանաց Հոգաբարձութիւնն և Խնամակալութիւնն ալ կ'ամբաստանուին կամ իր անդամներէն, կամ Թաղ. խորհրդէն և կամ դասատուներէն:

Երբ ամբաստանութիւնը իր անդամներէն՝ կամ դասատուներէն է, Ոստանական կամ Թաղական խորհուրդը բացատրութիւն կը պահանջէ. և 'ի հարկին Թաղական խորհրդոյ միջոցաւ քննութիւն կ'ըլլայ ըստ յանձնարարութեան Ոստանական խորհրդոյ: Երբ Թաղական խորհուրդն է ամբաստանողը, Ոստան

նական խորհուրդն իր կողմէն քննիչ կը զրկէ . կամ 'ի հարկին իր ատենը կը հրաւիրէ թէ ամբաստանող խորհուրդը և թէ ամբաստանեալ Հոգաբարձութիւնը :

Ամբաստանութիւն մը երբ հաստատուի , Ռուսմական խորհուրդը կը տեղեկագրէ առ Քաղաքական Ժողովն 'ի տնօրէնութիւն :

51. Ինչ որ է ամբաստանեալ Թաղական խորհրդոյ համար , նոյնն է նաև Հոգաբարձութեան և Խնամակալութեան համար :

52. Թաղական խորհրդոյ և Հոգաբարձութեան զէմ թաղին ընտրողները միայն Ազգային Վարչութեան կը բողոքեն , որ պատկանեալ խորհրդոյ կը յանձնէ պէտք եղած բացատրութիւնը պահանջել և 'ի հարկին քննութիւնն ընել և տեղեկագրել Վարչութեան :

Այս օրինակոր ընթացքէն զատ եթէ ուրիշ միջոցի գիտնեն ընտրողը , իրենց բողոքող ըլլալու իրաւունքէն զրկուած պիտի համարուին . և ըստ ծանրութեան յանցանաց պիտի դատուին , թէ հրապարակաւ նշաւախուելով և թէ յաջորդ ընտրութեան իրաւունքէն զրկուելով :

Ե .

Միջոտութիւն ազգային վարչութեան

53. Ազգային Վարչութեան (Կեդրոնական և Գաւառական) տեսուչ խորհուրդներն ի հարկին իրաւունք ունին միջամտել , և իրենց համարատու Թաղական խորհրդոց և Հոգաբարձութեանց գործառնութիւններ քննել :


54. Երբ Ազգային Վարչութիւնը տեղեկանայ որ Թաղական խորհուրդ մը կամ Հոգաբարձութիւն մը Ազգային Սահմանադրութեան և Կեդրոնական Վարչութեանէն սահմանեալ օրինաց և հրահանգաց հակառակ ընթացքի մէջ են , և իրենց պաշտօնն ու պարտութիւնները չեն կատարեր , իրաւունք ունի ազգաբարձութիւն ընել և բացատրութիւն պահանջել : Ի հարկին տեսուչ ևս կը զրկէ նոյն թաղը :

55. Եթէ յամառին իրենց ընթացքին մէջ , Վարչութիւնը տեսչին միջոցաւ , կամ զանոնք հրաւիրելով իր ատենը՝ քննութիւն կ'ընէ . եթէ յանցապարտ ելնեն , 'ի կանոնապահութիւն և 'ի կարգ կը հրաւիրէ :

Եթէ դարձեալ յամառին , կը լուծէ զանոնք :

56. Եթէ Թաղական խորհուրդ մը կամ Հոգաբարձութիւն մը Հայաստանեաց Կեդրեցւոյ վարդապետութեան և օրինաց , և Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբանց հակառակ վարուած են . Ազգային մատակարարութեան և սեփականութեանց մէջ նենգութեամբ բռնուած , և Ազգային յառաջադիմութեան դիտմամբ փաստակար ցտնուած են , և Ազգային դատախարակութիւնն ու նախնական անհրաժեշտ գիտելիքները կամաւ զանց ըրած են , վերընտրելի չեն իրենց պաշտաման համար . 'ի բաց առեալ փոքրագոյն մասը , և թէ անհամամիտ և բողոքարկու է մեծագոյն մասին զէմ :

Իսկ երբ վերընտրելի չըլլալու չափ ծանր յանցանք մը չուենալով լուծուին , և նորոգ ընտրուելէն յետոյ միևնոյն ընթացքը շարունակեն , Ա . Բ . Գ . ազգաբարձութիւն ընդունելէն յետոյ կը լուծուին՝ այն անդամին համար վերընտրելի չըլլալու պայմանաւ :



3 .

ՍՈՋՄԱՆԱԳՐԱԿԱՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ  
ԱԶԳ . ՎԱՆՕՐԷԻՑ ՀԱՄԱՐ

Յառաջաբան

Ազգային Սահմանադրութիւնը կը տրամադրէ որ իւրաքանչիւր վանք իրեն համար յատուկ կանոնագիր ունենայ . և այդ կանոնագրոց հիմնական տրամադրութիւնը գծած է (յօդ . 48) :

Բայց ըստ որում այն հիմնական տրամադրութեանց համեմատ իւրաքանչիւր վանքի մասնաւոր մատակարարութիւնը իր Միաբանութեան կը վերաբերի , և ամենուն վրայ ընդհանուր տեսչութիւնը Կեդրոնական Վարչութեան . և ըստ որում իւրաքանչիւր Միաբանութիւն պէտք է որ գիտնայ թէ ինչ է իր մասնաւոր մատակարարութեան սահմանը .

և ինչ է կեդր. վարչութեան ընդհանուր ակա-  
 շութիւնը. և թէ ինչ են Միաբանութեանց  
 և կեդր. վարչութեան յարաբերութիւնը  
 մէկմէկու հետ. կեդր. վարչութեան կրօնա-  
 կրօն և Քաղաքական Խառն ժողովոյ յանձնա-  
 րարութեանը վանօրէից խորհուրդը պատ-  
 րաստեց ներկայ Սահմանադրական Հրահանգը  
 ազգային վանօրէից համար, զոր Խառն ժո-  
 ղովը բնւորով վաւերացուց ՚ի ինքս Կէ. և ու-  
 բոյնց ապաքրութեամբ ՚ի լոյս ընծայել:

Հետեւաբար խորհանջիւր վանահօր և  
 Միաբանութեան կը մնայ այսուհետեւ ըստ  
 այսմ վարութիւլ. և իրենց ներքին կանոնադիրը՝  
 սոյն Հրահանգին համեմատ և իրենց գրից և  
 այլ մասնաւոր հանգամանաց պատշաճութեամբ  
 ըր պատրաստել, և կեդր. վարչութեան ներ-  
 կայացնել: Բայց մինչև այդ մասնաւոր կանո-  
 նադրին հաստատութիւնը ՚ խորհանջիւր  
 վանք պարտական է սոյն Հրահանգին համե-  
 մատ վարուելու:

30. Գեղամահեր 1872

Ի Պատրիարքարանի Հայոց  
Ի Կ. Պոլիս

ՆԱԽԱԳԱՀ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐԳՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏՐՈՒԹՅՈՒՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Մ Կ Ի Տ Ի Զ Ա Ր Բ Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

Դիւան Կրօնական Ժողովոյ

ԱՏԵՆԱԳՊԻՇ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ ԹԱԴԵՍ ԼԵՊՍԿԱՊՈՍ

Դիւան Քաղաքական Ժողովոյ

ԱՏԵՆԱԳՊԻՇ

ԱՏԵՆԱՊԵՏ

Մ. Գ. Գ. ՓԱՓԱՋԵԱՆՅՆ ՍԵՆԵՐԵՐԻՄ

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ա.

Միաբանութեան քերթուոր մեջը

1. Խորհանջիւր վանուց Միաբանութեան մէջ գանուող կալիսկապուս, վարդապետ, սարկաւազ և կիսասարկաւազ, անդամ են նոյն Միաբանութեան ընդհանուր ժողովոյ: Երբև Միաբան հասասար իրաւամբ:

2. Եթէ վանք մը բաւական թուով

Միաբան չունի, գործաւոր Միաբանները (սոյնց թիւը 3 կամ 2 մինչև 4 ալ ըլլայ) ընդհանուր ժողովոյ և Տնօրէն խորհրդոյ պատասնները կը վարեն վանահօր նախադասութեամբ, մինչև ըստ պատշաճի նոր Միաբանից յաւելուի:

3. Եւ եթէ վանք մը բնու Միաբան չունի, բայց կարող է հետզհետեւ ունենալ, երբ իր եկամուտը մասնաւոր հոգածութեամբ հեղաշեւեթ բարգաւաճի: Կեդրոնական վարչութիւնը նոյն վանուց պետոյցը չափ արժաւանաւոր Միաբաններ կ'որոշէ յարմար եկեղեցա-կաններէ: Կամ վանքիս մէկ վանահօր կը յանձնէ, եթէ այնպիս պատշաճ դատ. և անոյ ձեւք բարգաւաճանել կը հոգայ:

4. Իսկ այն վանքերը որ Միաբան պահելու չափ կարողութիւն և յարմարութիւն չունին և զեն կրնանք ունենալ, ուղղակի Քուստանկան վարչութեան տեսչութեան ներքու են, որք կը անօրինեմ արժանք հասնու-թեամբ Կեդրոնական վարչութեան:

5. Միաբանութեան ընդհանուր ժողովոյ պաշտանն է.

Ա. Ընտրել իւր վանահայրը:

Բ. Ընտրել Տեղապահ մը, երբ վանահանի կամ հրումարի վանահայրը:

Գ. Ընտրել Տնօրէն խորհրդոյ անդամները, և ստորագրել ոյ հանրաբով կեդր. վարչութեան ներկայացնել ՚ի վաւերացումն:

Դ. Բննել երբ վանահօր և Տնօրէն խորհրդոյ մէջ անհամաձայնութիւն ծագի:

Ե. վանուց ներքին և արտաքին կարուս-ծոց և ամենայն ստացուածոց և հասութից հաշիւն առնել ամեն տարի, որոշուլ մասնակցի մէջ, և հաշուեցոյցը ստորագրելով գրկել կեդր. վարչութեան:

Զ. Հակել վանուց նիւթահան, բարոյս-կան և ուսումնական քննադպրէն վրայ, և ամեն տարի տեղեկագրել կեդր. վարչութեան:

Է. Միաբան ըլլալու ընտայտչաւն ար-ժանիքը քննել, և ըստ այնմ ընդունելի դանի ՚ի շարս Միաբանութեան:

Ը. Ընտրել այնպիսի խնդիրները, զորս վանահայրը և Տնօրէն խորհուրդը իրեն կը ներկայացնեն, զանոնք իրենց ձեռնհասութե-նէն վեր համարելով:

6. Միաբանութիւնը իր ձեռնհասութե-

նէն վեր խնդրոց համար կը դիմէ կեղտնա-  
կան Վարչութեան :

Բ.

Տնօրէն խորհուրդ

7. Վանական Տնօրէն խորհուրդը կը  
բաղկանայ 3 էն 5 Միարաններէ :

8. Տնօրէն խորհրդոց պաշտօնն է :

Ա. Վանուց կալուածոց և ամենայն ըս-  
տացուածոց և հասուիճից պահպանութեանը և  
բարգաւաճմանը հող տանիլ :

Բ. Վանուց դպրոցին յատկապէս խա-  
թեանը և այլ հաստատութեանց պայծառու-  
թեանը ջանք և փոյթ ունենալ :

Գ. Վանուց ներքին և արտաքին գործոց  
համար ըստ պիտոյից պաշտօնատարներ և  
Միարանից համար սպասաւորներ կարգել, և  
անոնց վրայ հսկել : Սոյն յօդուածին ուժովը  
արդիւնաւ է որ և է Միարանի իրեն յատուկ  
սպասաւոր ունենալ :

Դ. Երբ պաշտօնատար մը կամ սպասա-  
ւոր մը պարտազանց դատուի և անուղշայ  
մնայ. եթէ Միարան է, Միարանութեան  
ընդհ. ժողովոյ առջև ամբաստանել. և եթէ  
Միարան չէ՝ արձակել զանի իւր պաշտօնէն :

Ե. Կեղքը. Վարչութեան ղեկավարութեամբ  
Միարանութեան ընդհ. ժողովոյ հաւանու-  
թեամբ որոշեալ ծախքերն ընել :

Զ. Տնօրէն խորհուրդը պարտական է  
վանուց կալուածոց և ամենայն հաստատու-  
թեանց կալուածագրերուն օրինակը յատուկ  
տուճարի մը մէջ արձանագրել տակն վերջը,  
անոնց մէկ օրինակն ալ կեղք. Վարչութեան  
զրկել :

10. Ար և է վանական կալուած, որ վար-  
ձու կը արուի, Տնօրէն խորհուրդը պարտա-  
կան է ըստ օրինի դաճագիր (քովերաթ) ու-  
նենալ վարձակալին հետ, մէկ տարուան և  
ան անտակն երկու տարուան համար : Երկու  
տարին անելի միջոցով եթէ վարձու տալ  
չարի ըլլայ. կեղք. Վարչութեան հաւանու-  
թեանը պիտի դիմէ : Նոյնպէս պիտի դիմէ՝  
եթէ վարձակալին հետ նորագութեան կամ շի-  
նութեան և այլ տեսակ սոցորականէ գուրս  
դաշնագիր մ'ընելու պէտքը տեսնուի :

11. Տնօրէն խորհուրդը որ և է զնունն  
և դաճառունն չի կրնար ընել, մինչև որ կան-  
խաւ կեղք. Վարչութեան հաւանութիւնը  
չաւուտ :

Ստիպողական սարաքայի մէջ կրնայ դը-  
նել վանուց շահաւոր երեցած կալուած կամ  
հող և այլն, և անմիջապէս ծանուցանել կեղք.  
Վարչութեան. բաց որ և է շարժական և ան-  
շարժ ստացուածք չի կրնար վաճառել առանց  
կեղք. Վարչութեան հաւանութիւնն աննե-  
լու կանխաւ :

12. Տնօրէն խորհուրդը դրամական փո-  
խառութիւն և փոխատուութիւն չի կրնար ը-  
նել, մինչև որ կեղք. Վարչութեան հաւա-  
նութիւնը չաւուտ : Եթէ ընդհակառակն վար-  
ուի, իր անդամոց անձնական սարքեր պիտի  
համարուի :

13. Վանական ամենայն փոխառութեան  
և այլ գոյացած պարտուց համար արուած  
պարտագիր (սէնէտ)՝ Վանահոր և Տնօրէն  
խորհրդոց անշաւուց ամենուն կամ մեծազոյն  
մասին ստորագրութիւնը պիտի կրէ :

14. Տնօրէն խորհուրդը կ'որոշէ վանուց  
մէջ կամ գուրար գտնուած վանական ստաց-  
ուածոց վերաբերեալ նորոգութիւնները և շի-  
նութիւնները, բաց կանխաւ հաճութիւն առ-  
նելով Միարանութեան ընդհ. ժողովն, և ա-  
նոր միջոցաւ կեղք. Վարչութեանն : Ի բաց  
առեալ այն մանր մուշը նորոգութիւնները  
կամ շինութիւնները, որոնք ոչ փոխառութեան  
պէտք ունին և ոչ ալ վանուց սնուկին ըն-  
թացիկ ըլլակալին խոշորութեամբ կրնան ըլլալ :

15. Վանուց անուանն եղած կրտսիները  
Տնօրէն խորհուրդը կը հաստատէ, և Վանու-  
հոր կոնդակը կը վաւերացնէ զանոնք. և ապա  
կեղք. Վարչութեանն կը ծանուցուին :

Եթէ միարան մը ոչ յանուն իւր վանուց  
այլ յանուն այլոց կտակ ըրած ըլլայ, անվա-  
ւեր պիտի համարուի. վասն զի իւրաքանչիւր  
Միարանի գոյքը և ստացուածքը իր վանուցը  
կը պատկանի յետ մահուան նորա : Իսկ իր  
չայրենի ժառանգութիւնը, եթէ արդէն ծա-  
նուցեալ է, ըստ հաճոյս իւր կրնայ տնօրինել :

16. Ամեն վանք՝ դպրոց, թանգարան,  
սպարան և այլ ազգօգուտ հաստատութիւն-  
ներ պիտի ունենան իրենց կարողութեան չա-  
փովը. բաց գոնէ դպրոց պիտի ունենան՝ առ-  
նուարէն 40 աշակերտ համար, եթէ վանուց  
նրութեան վիճակը աւելի աշակերտ պահելու  
անկարող ըլլալը ստուղուի :

17. Վանական դպրոցի աշակերտ կ'ըն-

դուռուին նոյն առաջնորդական վիճակին քաղաքներէն և գիւղերէն ընտրանքը, ընդունելի աշակերտաց թուոյն գտնէ կէսը, և միւս կէսը ուրիշ գաւառներէ կրնայ ընդունուիլ . մահաւանդ երբ եթէ մերձակայ առաջնորդական վիճակ մ'իր մէջ վաճը չունենայ, նոյն վանքը պարտական է իր ընդունելի աշակերտաց կէսը այն առաջնորդական վիճակէն ալ ընդունիլ :

18 . Աշակերտի ընդունելութեան մասին ընտրութիւն ընելլ Վանահօր և Տնօրէն խորհրդին գործն է : Ընդունելի աշակերտը զբտնուած տեղւոյն մէջ ամենէն յաջողակը պիտի ըլլայ, ուսման ընդունակ, առողջ կազմուածքի տէր և Աղբիւն խնամոցն արժանի և կարօտ :

19 . Վանական դպրոցները միայն ժառանգաւոր կամ վարդապետներ Հասցնելու պիտի չի ծառայեն, այլ և վարժապետ և քահանայ : Ուստի հասուն աշակերտներէն անոնք որ կուսակրօնութիւն կ'ուխտեն յօժարակամ և ուսուցիչներէն ու Միաբանութեանէն ալ իրենց վարուց և բարուց համար վկայութիւն կ'ընդունին, արժանի լըլլան վարդապետական կ'ըման, և Միաբանութեան ստորաբաժնալ հանրագրովը ձեռնադրութեան հրաման կը խնդրուի կեդր . Վարչութեանէն :

20 . Իսկ անոնք որ կուսակրօնութիւն չեն ուխտեր, կամ ուսուցիչներէն և Միաբանութեանէն անյարմար կը դատուին, իրենց ծնած տեղւոյն մէջ վարժապետելու կամ քահանայանալու պաշտօնը կ'ընդունին, և նոյն վանուց բարոյական պաշտպանութիւնը կը վայելին :

21 . Տնօրէն խորհուրդը տեսչութիւն կ'ընէ իր վանուց մէջ հաստատեալ դպրոցին, տպարանին, թանգարանին և հիւանդանոցին և այլոց հաստատութեանց՝ եթէ կան, ըստ հրահանգի կեդր . Վարչութեան . կամ իր կողմէն յատուկ տեսչի կը յանձնէ զանոնք, իրեն համարատու ըլլալու պայմանաւ :

22 . Տնօրէն խորհուրդը կ'ընէ նաև վանուց մատակարարութիւնը, կամ յատուկ մատակարարի կը յանձնէ իրեն համարատու լինելու պայմանաւ . բայց կարգեալ մատակարարը պիտի ծանուցանէ կեդր . Վարչութեան :

23 . Տնօրէն խորհուրդը յարաբերութիւն ունի նաև այն Գաւառական վարչութեան

հետ՝ իր վանական գործոց համար, որոնց տնօրինութիւնը նոյն տեղւոյ կառավարութեան կը վերաբերի :

24 . Տնօրէն խորհրդոյ պաշտօնը 2 ամբի կը տեւէ և վերընտրելի է :

9 .

Վանայոյր

25 . Վանահայրը երբ վախճանի կամ հրատարի, Միաբանութիւնը անմիջապէս առժամանակեայ Տեղապահ մի ընտրելով, կը ծանուցանէ կեդր . Վարչութեան :

26 . կեդր . Վարչութիւնը նոր Վանահօր ընտրութեան հրահանգը կուտայ, և վանական Միաբանութիւնը ընդհ . ժողով գումարելով, ընտրելեաց ցանկ կը պատրաստէ և կը խրկէ կեդր . Վարչութեան : Այս ցանկը առ նուազն 3 անուն պիտի պարունակէ :

27 . կեդր . Վարչութիւնը ներկայացած ցանկը սրբազրելու իրաւունք ունի . և եթէ ամենքն ալ անարժան են, և գէթ 2 անձ չի գտնուիր արժանի, սրտածառարանութեամբր ետ կը զրկէ ցանկը, նոր մը պատրաստելու համար :

28 . Սրբազրեալ ցանկին վրայ Միաբանութիւնը զազանի կը քուէարկէ, և կ'ընտրէ Վանահայրը բացարձակ առաւելութեամբ քուէից . և Միաբանութեան տեղեկագրով կը զրկուի կեդր . Վարչութեան, որ Պատրիարքական կոնդակաւ կը հաստատէ :

29 . Վանահայրը նախագահ է Միաբանութեան ընդհ . ժողովոյ և Տնօրէն խորհրդոյ, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ և յարաբերութեանց միջնորդն է :

Իր պարտաւորութիւնն է ազգային Մահաճողութեան տրամադրութեանցը և կեդր . Վարչութեանէն սահմանեալ օրինաց և հրահանգաց համեմատ վանուց տեսչութիւնը վարել, և իր վանուց ներքին կանոնադրին անթերի դործադրութեամբ հսկել :

30 . Վանահայրը պարտական է վանուց գործերը Տնօրէն խորհուրդին և կամ Միաբանութեան ընդհ . ժողովին դնել, և անոնց որոշմանը համեմատ գործադրել :

31 . Առ կեդր . Վարչութիւնն ուղղեալ ամենայն գրութիւն սկսեալ է որ Վանահօր և Տնօրէն խորհրդոյ զիւանի ստորադրութիւնը կրնն :



32. Եթէ Վանահօր և Միաբանութեան մէջ անհամաձայնութիւն ծագի, կեդր. Վարչութեան պիտի գիմեն:

33. Վանահայրն իրաւունք ունի վանական Միաբան մը կամ ուրիշ պաշտօնեայ մը ուղղութեան հրաւիրել. և անուղղայնորուն համար Տնօրէն խորհրդին գիմել, եթէ միաբան չեղող պաշտօնեայ է. և Միաբանութեան ընդհ. ժողովին գիմել, եթէ Միաբան է:

34. Վանահօր և վանական Տնօրէն խորհրդոյ անմիջական հսկողութեան ներքև է վանուց սնտուկը. և Վանահայրը առանց Տնօրէն խորհրդոյ զիտութեան ծախք չի կրնար ընել:

35. Վանական ուխտն է հաւասար եղբայրութիւն, յորում խտրութիւն չըլլար. ուստի պէտք է որ Միաբան եղբայրք բոլոր պէտքերը հասարակաց գանձանակէն, այն է վանուց սնտուկէն հոգացուի արժանապէս և ըստ պահանջելոյ հարկին:

36. Թէ և վանահայրութիւնը առաջնորդութենէ բաժանելը թէ՛ Աղգիւն և թէ՛ վանօրէնց օգտակար ըլլալը նկատուած է. բայց առ այժմ վանահայրութեան հետ միացած առաջնորդութիւններն եթէ այնպէս մնան, այն ատեն Առաջնորդ Վանահայրը կրք ամբաստանուի իր Գաւառական ժողովէն, և անոր փոփոխութիւնն ալ վճռուի կեդր. Վարչութեանէն, Առաջնորդ Վանահայրը կը դադրի առաջնորդութենէն՝ բայց ոչ վանահայրութեանէն, եթէ եկեղեցական յանցանաց ներքև ինկած չէ կամ նոյն վանուց Միաբանութենէն ալ ամբաստանուած ու իր պաշտօնանկութիւնը վճռուած չէ:

37. Վանահայր մը կ'ամբաստանուի վանական Տնօրէն խորհրդէն կամ Միաբանութեան ընդհ. ժողովէն, և կամ իր գաւառին Վարչութեանէն:

Ամբաստանողը կամ բողբողը կեդր. Վարչութեան կը ծանուցանէ իր ամբաստանութիւնը կամ բողբը:

38. կեդր. վարչութիւնը նախ բացատրութիւն կը պահանջէ. և երբ գրաւոր հարողակցութիւնք չի բաւականանան խնդիրը պարզելու և լուծելու, կեդր. վարչութիւնը քննիչ կը զրկէ նոյն վանքը. և անոր տեղեկաւորին վրայ իր վճիռը կուտայ:

39. Եթէ քննութեան արդիւնքը Միաբանութեան աննպատ ըլլայ, կեդր. Վարչութիւնը ամբաստանողաց պարագլուխները կը հեռացնէ նոյն վանքէն առ ժամանակ մի կամ իսպառ՝ ըստ ծանրութեան ամբաստանութեան: Իսկ եթէ Վանահօր աննպատ ըլլայ, Վանահայրը առ ժամանակ մի կամ իսպառ կը հեռացնէ նոյն վանքէն, ըստ ծանրութեան յանցանացն: Այս պարագային մէջ Միաբանութիւնը առ ժամանակեայ Տեղապահ մը կը կարգէ. և կամ եթէ Վանահայրը իսպառ պաշտօնանկութեան վճիռ ընդունած է կեդր. Վարչութեան որոշմամբը, նոր Վանահօր մի ընտրութեան կը ձեռնարկէ:

40. Եթէ Միաբանութիւնը Տեղապահի ընտրութիւնը անմիջապէս չի կատարէ, կեդր. Վարչութիւնը զայն կը կարգէ: Այնպէս եթէ Տնօրէն խորհուրդը իր շրջանը լրացնելով՝ դադարի պաշտօնէ, կամ ժամանակէ յառաջ հրաժարի, և Միաբանութիւնը չուզէ կամ չի կրնայ նոր Տնօրէն խորհուրդ մ'ընտրել, կեդրոնական Վարչութիւնը զայն կ'ընտրէ Միաբանութեան մէջէն:

Դ.

Միջամտութիւն կեդրոնական քարտուքեան

41. Երբ կեդր. Վարչութիւնը՝ վանական Միաբանէ կամ Գաւառական Վարչութեանէն և կամ գաւառին ժողովրդէն և կամ ուրիշ միջոցաւ մը լսէ որ Վանահայր և Տնօրէն խորհուրդ ազգ. Մանուկարութեան և վանական կանոնաց հակառակ կը վարուին, և իրենց պաշտօնն ու պարտաւորութիւնը չեն կատարեր, իրաւունք ունի ազդարարութիւն ընել և բացատրութիւն պահանջել:

42. կեդր. Վարչութիւնը 'ի հարկին տեսուչ կը զրկէ նոյն վանքը. և տեսչին տրուած տեղեկագրին վրայ՝ եթէ արժանա դատուի, Միաբանութեան ընդհ. ժողովին մէջ կը քննուի եղած տարածայնութիւնը. որ եթէ ստուգուի, կեդր. Վարչութիւնը պարտազանց Վանահայրն առ Տնօրէն խորհուրդը առաջին անգամին 'ի կանոնապահութիւն և 'ի կարգ կը հրաւիրէ. և եթէ դարձեալ անուղղայ մնան, երկրորդ անգամ ըստ առաջնոյն քննելէ ետքը՝ զանոնք կը դադրեցնէ իրենց պաշտօնէն:

43. Եթէ Միարանութիւնն ալ մի և ծոյն ընթացրի մէջ ըլլայ, մանաւանդ թէ Վա- նահօր և Միարանութեան վրայ Հայաստան- եայց Եկեղեցւոյ վարդապետութեան և օրինաց հախառակ, դպրոցի և վանուց և այլ Հաստա- տութեանց յառաջադիմութեան հակառակ վարմունք, և վանուց սեպհակամութեանց և մատակարարութեան մէջ նենդութիւն ունե- նալին լուռի, և ըստ յանձնարարութեան կեդր. Վարչութեան քննուելով ստուգուի, կամ յատուկ տեսչի և կամ տեղւոյն Չաւառա- կան Վարչութեան միջոցաւ. թէ՛ վանահայր և թէ՛ Միարանութեան մէջն անունք՝ որ յան- ցաւոր են, կեդր. վարչութիւնը կ'արտաքսէ վանքէն. և մնացելոց մէջն արժանաւոր Միա- բան մը վանահայր ընտրելու հրահանգը կու- տայ. և եթէ չի գտնէ արժանաւոր մը, զըր- սէն եկեղեցական մը Տեղապահ կը կարգէ, մինչև վանքը իր արժանաւոր զիրքը գտնայ:

44. Արտաքսեալ վանահայր և միարանը եթէ եկեղեցւոյ ղէմ յանցաւոր են, եկեղեցւո- կան օլառժոյց կ'ենթարկուին. և եթէ Սահմա- նադրութեան և վանական կանոնաց հակա- ռակ վարմունք ցուցուցած են. ուրիշ վանքի կամ տեղւոյ մը մէջ արգելանաց տակ կը դրուին. և եթէ դրամական և այլ նիւթական վնաս մը հասուցած են վանքին, զայն տուժել տարու համար քողարքական օրինաց համեմատ կը դատուին:



**Ա.**

**ԿԱՆՈՆԱԿԻՐ**

**Կ Տ Ա . Կ Ա Յ**

**Ա.Ը**

Կեդրոնական Վարչութեան կրօնական և Քաղաքական խառն ժողովը՝ կտակաց Հոգա- րարութեան և Տնտեսական Խորհրդոյ կար- ծելն անենել ետքը՝ պատրաստեց և վաւե- րադուց այն կտակաց կանոնադիրը, և տպա- րութեամբ կը հրատարակէ, հրատիրելով մայ- րաքաղաքիս Թաղական Խորհուրդները և Չա-

ւառական Վարչութիւնները, որ ըստ այսմ կտակաց դործադրութիւնն ընելով, փորձա- ռութեամբ ունեցած զխտադութիւնն յարե- հասին տեղեկագրել առ կտակաց Հոգարար- ձութիւնն կեդրոնական Վարչութեան որպէս զի այն կանոնադիրը վերաքննուելով մատուց- ուի Ազգային Ը շահանք ժողովոյ ի վաւերա- ցումն:

24 Մայիս 1873

Ի Պատրիարքարանի Հայոց

Ի Կ . Պօլիս

ՏԱՆԱԳԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎՐԱԶՈՒԹԵԱՆ

**ՊԱՏՐԻԱՐԿ Կ . ՊՈԼՍՈՅ**

Մ Կ Ր Տ Ի Զ Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ա Պ Ա Ս

Ի Բ Ի Մ Ե Ա Ն

Դիւան Կրօնական Ժողովոյ

ԱՏԵՆԱԳՊԻՐ

ԱՏԵՆԱԳԵՏ

Մ . Վ . ԻԶՄԵՐԼԵԱՆ ԹԱԻԻԱՍ ԵԳԵՍԿԱՍՍ

Դիւան Քաղաքական Ժողովոյ


ԱՏԵՆԱԳՊԻՐ

ԱՏԵՆԱԳԵՏ

Ս . Գ . Գ . ՓՅՓՁՁՅԱՆՆՅ

ՍԵՆՏԵՐԻՄ

Մ . ՄԵՆՏԵՐԻԱՆ



1. Կտակարար անձը պէտք է որ իր կը- տակագիրն ստորագրէ. և խոստովանայր քահանային և քաղաքին կամ աւագերէցին և երկու ախարհականաց վիպութեամբն ալ թէ՛ իր ստորագրութիւնը և թէ՛ կտակագիրն պարունակութիւնը հաստատել տայ. և ապա կտակագիրը կը ներկայացուի Ազգային Վար- չութեան ի վաւերացումն:

2. Կեդրոնական Վարչութիւնը կը բնն կտակագիր մը, եթէ կտակարարը կ' Պօլսոյ մէջ կը բնակի, և Ս . Պատրիարքն ալ նայն կը- տակագիրը կը վաւերացնէ:

3. Սոյն վաւերացեալ կտակագիրը գտնել երեք օրինակ պիտի ըլլայ. մէկը կտակարարին պիտի յանձնուի, որ պիտի կարդացուի անոր բնակած տեղւոյն եկեղեցւոյն մէջ. մէ- կը կտակընկալ սզգային հաստատութեան (Եկեղեցւոյ, վանուց, վարժարանի, հիմն- դանոցի), ալ ըստայ, որոյ, քահանայի:

դպրաց և ազգոգուտ ընկերութեան և ըն . ) որ եթէ օւրիշ թաղի մէջ է , անոր եկեղեցւոյն մէջ ալ պիտի կարդացուի . և մէկն ալ Կեդր. Վարչութեան Գիւանատուներ պիտի սահուի . և օրինակն ալ լրագրաց միջոցաւ պիտի հրատարակուի :

Կտակագրին ընթերցումը և հրատարակութիւնը այն ատեն չըլլար , երբ կտակարարը չի կամիր :

4. Երբ կտակարարը գաւառի մէջ կը բռնակի , կտակագիրը նոյն գաւառի Ազգային Վարչութեանէն կը քննուի . և նոյն գաւառի Առաջնորդը կը վաւերացնէ զայն . և մէկ օրինակն ալ Կեդր. Վարչութեան Գիւանատուներ կը դրուի , և անկէ ալ հրատարակութեան կը տրուի :

5. Եթէ կտակարար մը իր կտակագիրը միայն իր ստորագրութեամբը հաստատած է , և քահանայի կամ այլոց աշխարհականաց վերկայութեամբ Ազգային Վարչութեան վաւերացնել տալու ժամանակ չէ ունեցած կամ չէ կրցած՝ և վախճանած է . երբ կտակագրին ստորագրութիւնը բուն տիրոջն ըլլալը վիսյուտի և հաստատուի , Ազգային Վարչութիւնը զայն կտակագիրը կը վաւերացնէ , և ըստ այնքան գործադրել կուտայ :

6. Եթէ կտակարար մը ընաւ ժամանակ չէ ունեցեր կամ չէ կրցեր իր կտակագիրը շինել և ստորագրել , այլ միայն եկեղեցական կամ աշխարհական արժանահաւատ անձանց ներկայութեան իր վերջին կամը յայտնել է . այն ատեն նոյն անձանց (որքան կամ մաս մ'ունենալու չեն կտակէն) վկայութեանը համեմատ կտակագիր կը պատրաստուի , և վկայից ստորագրութեամբը հաստատուելէն ետքը՝ Ազգային Վարչութիւնն ալ զայն կը վաւերացնէ . և ըստ այնմ գործադրել կուտայ :

7. Կտակարարը կտակեալ դրամ և այլ շարժական ստացուածք կտակընկալ հաստատութեան կրնայ յանձնել ի կենդանութեան իւրում . և կամ յետ մահուան իւրոյ յանձնել կ'որոշէ : քայց այն ատեն կտակարարին կ'ինն ու ժառանգորդք իրենց ստորագրութեամբը պիտի հաստատեն կտակագիրը . կամ թէ որ ստուրջ դժկամակին , ուրիշ ասպնոյութեան օրինական միջոց պէտք է որ գործածէ թէ՛ կտակարար և թէ՛ Ազգային Վարչութիւնը :

8. Կտակեալ տուն և այլ անշարժ ստացուածք կտակարարն ի կենդանութեան իւրում պարտի ուղղակի կտակընկալ հաստատութեան անուանը դարձնել . կամ անոր անուանը վրայ ըլլալն ասպնոյցնել ըստ օրինի . որուն փոխարէն ինք ալ Պատրիարքական կամ Առաջնորդական կ'ընով վաւերացնալ կտակագրին մէկ օրինակը կ'ստանայ յասպնոյութիւն :

9. Մէկը կրնայ դրամ յանձնել ազգային հաստատութեան մը , և անոր տոկոսի արդիւնքը ստանալ ցվախճան իւր՝ նոյն հաստատութեանէն , յետ մահուան նոյն դրամին տոկոսը ամբողջ կամ կէսը նոյն հաստատութեան մնալու տայմանաւ . և եթէ միւս կէսը ուրիշ հաստատութեան կամ անձի կտակած է , պարտական է կտակընկալ հաստատութիւնը նոյն կէսը մ'ընել ըստ տայմանաց կտակին . որուն մէջ յայտնի գրուած պիտի ըլլայ թէ անձի մը եղած կտակը նոյն անձին մահուանորը պիտի վերջանայ , թէ՛ ժառանգորդաց ալ պիտի վաճարուի :

10. Մէկը տուն կամ այլ անշարժ ստացուածք կտակելով ազգային հաստատութեան մը , անոնց մէջ կրնայ բնակիլ կամ անոնց վարձքն աւանդ . և կտակընկալ հաստատութիւնը բնաւ որ և է միջամտութիւն պիտի չընէ , մինչև ցմահ կտակարարին . և սպա ըստ կտակին պիտի վարուի :

11. Ազգային Վարչութիւնը պարտական է որ և է անձն , թէ՛ եկեղեցական և թէ՛ աշխարհական , որ յորիչը կը յորդորէ կտակընելու բարեբարութեանը , զնա ըստ արժանւոյն վարձատրել տալ կտակընկալ հաստատութեան՝ միանգամ ընդ միշտ :

12. Կտակ յետ մահուն հաստատուն լինելով , կտակարար մը քանի որ կենդանի է , կարող է կտակը փոխել , աւելցնել կամ պակսեցնել . և կամ բոլորովին եղծել , եթէ այսպէս կանխաւ տայմանադրած է կտակագրին մէջ :

Հետևաբար կտակարար մը որ իր կտակը փոխել կամ եղծել կ'ուզէ , պարտական է կրտակընկալ հաստատութեան հատուցանել եղած բոլոր ծախքերը , որ մինչև կտակին փոխուելու կամ եղծուելու օրը եղած են : Այս ծախսոց մէջ են Պէրալի , Ինթիքալի , վարձատրութեան , երթևեկութեան , արձանագ-

րութեան և այլ ամենայն ծախք, որ նոյն կրտսիկն առթիւ տեղի ունեցած են :

Բոլորովին եղծելու միջոցին 10 առ 0/0 կտակընկալ հաստատութեան հատուցանելու պարտական է :

Եւ եթէ կտակարար մը կտակընկալ հաստատութեանն է որ և է գումար մը տուած է ըստ պայմանի կտակագրին իւրոյ, կտակը եղծած ժամանակ պարտական է նոյն գումարը տրինաւոր տոկոսովը վճարել :

13. Կտակարար մը որ ըստ պայմանի կրտակարարին իւրոյ երբ իր կտակն եղծելու կամ փոխելու ինքնին տնօրինութիւն ընէ՝ առանց Ազգային Վարչութեան հաւանութեանը, այդ տնօրէնութիւնն անվաւեր և անընդունելի է :

Ըստ այսմ կտակարարի մը մահուընէն ետքը, եթէ անոր ստորագրութեամբը նոր տնօրէնութեան գիր մը երեան զայ կամ կտակն եղծելու կամ փոխելու մասին մէկ գրութիւնը տեսնուի, որուն վրայօք Ազգային Վարչութիւնը տեղեկութիւն չունի, անս վաւեր և անընդունելի է :

14. Կտակարար մը եթէ դժբաղդութեան հանդիպի, կտակընկալ հաստատութեան կողմէն պէտք է որ խնամուի ըստ կարելոյն, Ազգային Վարչութեան որոշմամբը :

15. Կտակարարի մը մահուընէն յետոյ, անոր կտակը ճշդիւ պիտի գործադրուի. և այս գործադրութեան մասին Ազգային Վարչութիւնը պարտական է ամեն տարի, որդեակ ժամանակ, տեղեկութիւն հրատարակել, կամ եկեղեցւոյ մէջ ծանուցանել տալ ժողովրդեան :

16. Կտակագիր մը եթէ եղած կտակին ինչ բանի համար գործածուելիքը չի պարունակէր, Ազգային Վարչութեան կը վերաբերի այդ տնօրէնութիւնը, զոր լրագրաց միջոցաւ ևս կը հրատարակէ, եթէ կտակարարին կամայք հակառակ չէ :

17. Եթէ դրամական կտակի մը համար կտակարարը տնօրէնութիւն մը չէ ըրած, Ազգային Վարչութիւնը ըստ առաջարկութեան կտակընկալ հաստատութեան կը տնօրինէ, կամ անշարժ ստացածք մը գնել, կամ դրամը հաստատուն իրամատան (պանքայ) մը յանձնել, և այլն :

18. Կտակի մը գործադրութեան մասին

որ և է զանցատուութիւն աններելի է. և բայ ի կտակակալութիւն եթէ կարգեալ է, ամեն հայ իրել կտակակատար իրաւունք ունի բողքելու առ որ անկ է, և կտակին ճշդիւ գործադրութիւնը պահանջելու :

19. Եթէ կտակի մը գործադրութեան մէջ որ և է դժբաղդութիւնը երևան դաս, Ազգային Վարչութիւնը պիտի ըննէ, և հրատարակութեամբ պիտի ծանուցանէ այն դժուարութիւնները. որպէս զի որ և է փոփոխութիւն կարելի ըլլայ արգարանալ հաստատաց ղատաստանին և խղճին առջև իսկ :

20. Ճշդիւ պիտի գործադրուի նաև այն կտակագիրը, որ իր մէջ ազգային հաստատութեան վերաբերեալ կտակէ զատ ընտանեաց կամ այս ու այն անձի և անզոյ սեփական կտակ կը պարունակէ, որ և կանխաւ վաւերացեալ է Ազգային Վարչութեանն :

21. Ամեն եկեղեցի տարւոյն մէջ յատուկ օր մը պիտի ունենայ. յորում նոյն եկեղեցւոյ Գարողիչը և կամ քարոզիչ չեղած ատենը՝ Աւագեղեցւոյ Ս. Վաստրազ պիտի մատուցանէ, և նոյն եկեղեցւոյ և անոր շրջանակին մէջ գտնուող ազգային հաստատութեանց և այլոց եղած բոլոր կտակները և կտակարարները յանկնէ յանուանէ պիտի յիշատակէ որհնութեամբ. և հանդստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի :


Բոլոր կտակընկալը պարտական են մասնակցել այն հանդիսաւոր արարողութեան ծախուց, և բաժին հանել եկեղեցական դատուն և այլ պաշտօնէից :

Այս ընդհանուր յիշատակութեան մէջ պիտի գտնուին նաև անխտիր այն կտակները որոնք տարւոյն մէջ իրենց սահմանալրատուկ յիշատակութեան օր ունին ըստ կամայց կտակարարի :

22. Ամեն եկեղեցւոյ Խորհրդարանին մէջ կամ ուրիշ յարմար տեղ մը, ճոյն եկեղեցւոյ և անոր շրջանակին մէջ գտնուող ազգային հաստատութեանց և այլոց եղած կտակներուն բնագիր օրինակները, կամ անոնց համաօտ պարունակութիւնը և կտակարար բարերարաց անուններն ընդհանուր ցանկի վրայ տուած ի տես պիտի գրուին ժողովրդեան :

Կտակարար մը եթէ չի կամի իր կտակագիրն ի տես ժողովրդեան գնել, ըստ այնմ

պիտի գործադրուի, քանի որ ինք կենդանի է. և յետ մահուան դարձեալ ի անս' պիտի դրուի :



Ծ.

Հ Ր Ա Հ Ա Ն Ք

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌՄՋՆՈՐԴԱՅ ԵՒ ԴՊԱՌԱՎԱՆ

ՎՈՐՉՈՒԹԵԱՆՑ

ԸՆԻ ՏԵՂԱՅՈՒ ԿԱՆՈՎԱՐՈՒԹԵԱՆ

Առաջնորդներն իբրև հոգևոր հովիւ և տեսուչ պարտիք ունին իրենց ժողովրդեան . այս պարտիքը կը քարոզեն արդէն Սուրբ գիրք և մասնաւորաբար Սուրբ Աւետարանը, Հայրապետաց գրութիւնները և մասնաւորաբար նորհալուոյն ընդհանրականը : Հարկ չի կայ այժմ այս մասին վրայ խօսել :

Առաջնորդներն իբրև ազգային պաշտօնեայ և Նախագահ Գաւառական Վարչութեան՝ պարտիք ունին իրենց ժողովրդեան . այս պարտիքը կը ցուցնեն Սահմանադրութիւնը և մասնաւորաբար վերջին անգամ գաւառաց համար հրատարակեալ Սահմանադրական Հրահանգը : Այս մասին Առաջնորդաց գործակից են Գաւառական Վարչութիւնը, որոնց պաշտօնն ու պարտիքը գծուած է յիշեալ Հրահանգին մէջ, և հարկ չի կայ այժմ ևս խօսել :

Առաջնորդք իրենց հոգևոր և ազգային պաշտօններէն զատ, ունին նաև տեղական կառավարութեանց հետ յարաբերութեան պաշտօն . ահա՛ այս կարևոր պաշտօնին վրայ պիտի խօսի ներկայ Հրահանգս :

Ա.

Ինչպէս վերին ըսինք, Առաջնորդք՝ ընդ նոսին և Գաւառական Վարչութիւնք իրենց հոգևոր և ազգային պաշտօնէն զատ տեղական կառավարութեանց հետ յարաբերութեան պաշտօն ալ ունին . և այս պաշտօնին համար

է որ Բ. Գուռը Առաջնորդաց ընտրութիւնը յատուկ ներմանով կը հաստատէ . որ կը նշանակէ թէ նոյն գաւառին ազգայնոց պաշտօնական ներկայացուցիչն է տեղական կառավարութեան քով, և տեղական կառավարութեան և գաւառին ազգայնոց մէջ յարաբերութեան միջնորդն է . ինչպէս է Կ. Պոլսոյ Ս. Պատարիարքը բոլոր Թուրքիանակ ազգայնոց համար Բ. Գրան հետ :

Ասոր համար բոլոր Բուրքիոյ գաւառաց մէջ գտնուող Առաջնորդք և տեսչութեան պաշտօն վարող ու և է կեկեղեցական բնաւ իրաւունք չունեն Բ. Գրան հետ ուղղակի բանակցելու կամ յարաբերութիւն հաստատելու ինչպէս նաև իրենց Վիլայէթէն զուրս ուրիշ տեղական կառավարութեանց հետ : Այլ երբ Բ. Գրան ղրխուել հարկէն մէջ գտնուին, պարտական են 'ի Պատրիարքարան ղրխել, նոյնպէս ուրիշ Վիլայէթի տեղական կառավարութեան ղրխուել հարկէն մէջ, նոյն Վիլայէթի Առաջնորդին ղրխել, և անոր միջնորդութեանից գործել : Իսկ եթէ Առաջնորդ մը Վիլայէթի մը Միւլթաարքիութեան կամ Գայմազամութեան և այլն ներքև գտնուի, պարտական է յարաբերութիւն ունենալ իր Վաւրիին հետ . միանգամայն Վիլայէթի Առաջնորդին ծանուցանել իր խնդիրը :

Ասիկ կը հետևի թէ Առաջնորդ մը բնականաբար պարտական է ուրիշ Առաջնորդի մը կողմէն եղած յանձնարարութիւնը սերտով կատարել, և զանցառութիւն չընել :

Բ.

Միայն բարեխնամ կառավարութեանէն Առաջնորդաց հաստատութիւնը չէ որ անոնց յարաբերութեան պաշտօն ունենալը կ'ապացուցանէ, այլ և Տիւսիսուրը՝ որ բարեխնամ կառավարութեան օրինադրոջն է :

Վիլայէթ Նիշանմամէսին յայտնի ասպցոց մ'է, որ կը տրամադրէ թէ հպատակ ազգաց հոգևոր ղրուխները (թէ Նիսի Բուհանի) պաշտօն ունին Միւլթաարքիութեան և Գայմազամութեան և մինչև իսկ Միւտլերութեան իտարէ Մէճիսանբերուն մէջ բաղմուլը :

Երբ Առաջնորդ մը զրկուած է այս արտօնութեանէն, զայն ստանալու համար նախ թէ ուղղակի և թէ անուղղակի միջոցներով բանակցելու է տեղական կառավարութեան

զլխաւոր և երկրորդական պաշտօնէից հետ : Հարկ չիկայ բացատրել թէ այս բանակցութիւնն որչափ քաղաքավարական և քաղցր լինելու է : Իրաւունք մը պաշտպանելը սրբազան պարտաւորութիւն մը կատարել է : Բայց այդ իրաւունքը պահանջելու կերպն ալ գիտանալ և ըստ այնմ վարուել պէտք է :

Առաջնորդի մը պարտաւորութիւնն է տեղական կառավարութեան հետ համաձայնելու և անոր միջոցաւ գործ մը կարգադրելու համար ամեն հնարաւոր եղանակներն 'ի գործ դնելէ ետքը , զիմել կեդր. Վարչութեան : Բայց շատ անգամ խնդրոյ մը վրայ թի՛է խտտացած ալ ըլլայ տեղական կառավարութիւնը , ժամանակով և այլ միջոցով կարելի է ամրեել անոր սիրտը , և զիջուցանել 'ի խնդիր իւր :

Կրնայ ըլլալ որ Առաջնորդ մը յանակրեկար կամ յակամայից խնդրոյ ' մը վրայ նեղանայ . այս սրբազային մէջ ալ խոհեմութիւն գործածելու և միջոց շահելու մտադիր ըլլալ պէտք է , և ոչ թէ կընճառտել կամ դժուարացնել խնդիրը :

Հարկ չիկայ ըսել թէ Առաջնորդը , ըստ տեսակի խնդրոց ' կամ կրնո՞ ժողովոյ և կամ Քաղ. ժողովոյ և կամ երկուքին խորհրդակցութեամբը պիտի գործէ . և այս ամենը ճշգրտութեամբ և ամենայն խնամով պիտի տեղեկագրէ հետզհետէ ամեն թղթատարով 'ի Պատրիարքարան :

Եթէ դաւառին մէջ ուրիշ հպատակ աղղըք կան , որոնց Առաջնորդները կը բաղմին Մէծիլիսին մէջ , ան ատեն մերայնոց պահանջումը աւելի կը դիւրանայ :

Իսկ եթէ ուրիշ հպատակ աղղաց Առաջնորդներն ալ այդ իրաւունքը վայելէ՛ զրկեալ են , պէտք է տեսակցիլ անոնց հետ , համաձայնելի և միտքանութեամբ խնդրամատոյց լինիլ :

Հոս արժան կը համարինք յիշատակել թէ , Օսմանեան Տէրութեան ուրիշ հոլատակ աղղաց Առաջնորդաց հետ քաղաքավարական տեսակցութիւններ և բանակցութիւններ կրնան ըլլալ , երբ անոնց կողմանէ ալ մի և նոյն պատրաստակամութիւնը տեսնուի :

Այսպէս նաև պաշտօնական այցելութիւններ ալ կրնան տեղի ունենալ , երբ պատշաճ

գատուի , միշտ աղղային արժանապատուութեան նախանձանդիւր լինելով , և պատշաճ ճից օրէնքը յարգելով :

Գ .

Միայն առաջնորդք չեն որ իրաւունք ունին կառավարութեան ժողովոյ մէջ , բարեւրու , այլ և այլ արհեստական անդամակիցք ալ կան այլ և այլ ժողովոց մէջ . ինչպէս են Գայմազամութեան , Միլիթարըֆութեան և Վիլայէթի իտարէ , Տասլի և Թէմեկի Հուզուզ և Ճիւնայէթի ժողովները . ասոնց ընտրութեան ատեն իւրաքանչիւր ազգէ ընտրելինը կ'ուզուի : Այդ ընտրելիները Գաւառական Վարչութիւնը պիտի ներկայացնեն , և ընտրելաց անկեղծութեանը և հաւատարմութեանը վրայ վստահ ըլլալու են , և ընտրելաց մէջ նուազ վստահելի անձ ըլլալու չէ . վասն զի Ազգին տուածը ընտրելիներ են , կառավարութիւնն է ընտրողը . և թերես այն նուազ վստահելի առաջ անցնի , և վնասակար լինի դաւառին : Այս պատճառաւ ընտրութեան ատեն մեծ հոգ և զգուշութիւն բանեցնելու է , որ յետոյ չ'ախտսան :

Ժողովականի մը պարտքը արդարութիւնըն ու ճշմարտութիւնը սիրելն է , ուստի այս ուղիղ ճանապարհէն խտտելու չէ ամեն պարագայի մէջ . այս ընելով մարդկութեան և քրիստոնէութեան պարտքը կատարած կըլլայ :

Բայց ժողովական մը երբ տեսնէ որ արդարութիւնը և ճշմարտութիւնը ստնակոխ կ'ըլլան , բողբոխու՞ և զգուշանալու է իր կրնիքը և ստորագրութիւնը դնելէ ' այնպիսի Մազպաթայի վրայ :

Արդէն Գաւառական Հրահանգին մէջ ծանուցեալ է թէ կառավարութեան ժողովոց Հայ անդամները սրբաւոր են ժողովոց մէջ յուզեալ ազգային հանրական կամ անհատական խնդրոց վրայ իրենց կարծիքը տալէ յառաջ ' Ազգ. Գաւառական Վարչութեան կամքըն ու կարծիքն առնուլ :

Արդարութեան և ճշմարտութեան դէմ չի դործելու համար իր ստորագրութիւնը զընտրող ժողովականը , իւր Գաւառական Վարչութեան հաղորդելու է : Ասանկ պարագայի մէջ ' երբ խնդիրն աղղային ընդհանուր է , կամ աղղային անհատի կը վերաբերի՝ որ կա-

բերէ և ծանրակշիւ : Առաջնորդն իր Գաւառական Վարչութեան նետ համախորհուրդ պաշտօնական կամ անպաշտօն միջոցներու կը ձեռնարկեն . երբ հարկը պահանջէ՝ կը բողոքեն . երբ բողոքին անխել ըլլայ՝ կ'երկրորդեն բողոքին և մէկ օրինակ մ'ալ տեղւոյն Վալիին կը շրկեն . երբ դարձաւ անխել լի ըլլայ՝ կ'երրորդեն . և սոյն բողոքագրոց օրինակները կը ներկայացնեն կեդր. Վարչութեան , որ 'ի հարկինն Բի Գրան ուշադրութեանը ներկայացնէ :

Երբ Առաջնորդը բողոք ունենան , եթէ խնդիրը ծանրակշիւ է՝ աղէկ կ'ընեն որ կանխաւ կեդր. Վարչութեան ներկայացնեն , աւնոր դիտարկելուն ալ եթէ ունի , ստանալու համար :

Իսկ ընդհակառակն , եթէ պատահի՝ որ ժողովական Հայը անտարբեր կեցած է իր պատճենի ու պարտաւորութեանը , և անխառ զճազարդ ներքև իր ստորագրութիւնը դրած է , որ կը վերաբերի աղբային հանրական խնդրոյ , կամ անհատական բայց կարևոր խնդրոց , Առաջնորդ և Գաւառական Վարչութիւն միարան բողոքելու են նոյն ժողովականին և անոր ստորագրութեանը դէմ . և 'ի հարկին դատ պահանջելու են . միանգամայն ծանուցանելու են կեդր. Վարչութեան :

Գ .

Առաջնորդն իր Գաւառական Վարչութեան գործակցութեամբ առանց ժողովական ըլլալու ալ , յարաբերութիւն ունի տեղական կառավարութեան հետ :

Առաջնորդն իր գաւառին աղբային և կրօնական գործոց և խնդրոց համար , ինչպէս են եկեղեցոյ , վանօրէից , կալուածոց , դըպրոցի և այլ հանրական գործք և խնդիրք , տեղական կառավարութեան հետ յարաբերութիւն ունի , Բայց միայն այսչափ չէ :

Յայտնի է որ բարեխնամ կառավարութիւնը կենաց , ընչից և պատուոյ ապահովութիւնը թանկիրմանի միջոցաւ հրատարակած է , և կը բաղձայ որ այդ ապահովութիւնը իր առջին կարգի հպատակը անխտիր վայելեն :

Ուստի այն իրաւամբ որ 'ի վաղուց հետ ձանջուած է և մինչև ցարդ ընդունուած :

ըստ որում Առաջնորդը միջնորդն է տեղական կառավարութեան և Ազգին մէջ , բարեխնամ կառավարութեան Թանկիրման և այլ օրինաց հակառակ պատահած եղելութեանց վրայ պարտաւոր է Թաղերի գրել , և ծանուցանել տեղական կառավարութեան :

Երբ տեղական կառավարութեանն դարձան չի տեսնուի , կրկնելէ և երեքիկնել վերջը , ուղղորդող բնական մնալուն պատճառն ալ հետազօտելով , կը ներկայացնէ Վալիին , և կը տեղեկագրէ կեդր. Վարչութեան :

Բայց գիտնալու են Առաջնորդը և Գաւառական Վարչութիւնը , որ պաշտպանելու զած դատերին շատ լաւ քննելէ և ստուգելէն ետքը պիտի դիմեն տեղական կառավարութեան կամ կեդր. Վարչութեան , 'ի հարկին կեդր. Վարչութիւնը քննութիւն պիտի խնդրէ բարեխնամ կառավարութեանն , և եթէ սխալ տեղեկութիւն հաղորդուած ըլլայ , կամ չի կրնան իրենց դատը պաշտպանել , Առաջնորդ կամ Գաւառական Վարչութիւն պաշտօնէ պիտի դադարին անմիջապէս :

Առաջնորդը և Գաւառական Վարչութիւնը զգուշանալու են անխորհրդաբար և մէկէն 'ի մէկ խնդրոյ մէջ նետուելէ : Զգուշանալու են չափազանց լեզու գործածելէ և չափազանց միջոցներու դիմելէ : պատշաճից օրէնքը 'ի միտ ածելու են :


Մասնական բաներու համար մասնական այցելութիւնը միայն վարման են , բայց ոչ պաշտօնական կերպով :

Վերջապէս հարստահարութեանց՝ կառավարական պաշտօնէից անհոգութեանց և այլ զեղծմանց դէմ գանդատելու , և արդարութեան ու օրինաց գործադրութիւնը պահանջելու մասին հոգ տանելու է : Այսպէս են նաև աղբային հանրական իրաւունքները , սեփականութեան , ստացուածքի , պատուոյ , նոյնպէս և անհատի մը վերաբերեալ այս տեսակ խնդիրները . երբ անխառութեան մը զոհ երթալու վրայ ըլլալով , ամբողջ ընտանիք մը կորստեան վիճակի մէջ ըլլայ :

Իւրաքանչիւր առաջնորդական վիճակի մէջ Գաւառքէ հետտի պաշտօնեայն Առաջնորդին և Գաւառական Վարչութեան Թաղերինները կը ներկայացնէ տեղական կառավարութեան , և անոր բանիւ բերանոյ հրատմանները կը հա-

դորդէ Առաջնորդին և Գաւառական Վարչու-  
թեան և վտխաբարձաբար Վարչութեան  
գիտողութիւնները կը հաղորդէ կառավարու-  
թեան : Առաջնորդին անձամբ կատարելիք բա-  
նակցութեանց ներկայ պիտի գտնուի Իսփու-  
քէ հետան :

Թաղերիներու շտաբներու և ոճին  
ուշադիր ըլլալու է . Թուրքերէն գրութեանց  
մասնաւոր պաշտօնական գրութեանց հմուտ  
և ձեռնհաս անձանց պէտք է որ խմբագրել  
տրուին Թաղերիները : զի այլ է անպատճի  
և սոսկական անձի մը տուած բողբոջիլը ,  
և այլ է կառավարութեան և Առաջնորդաց  
մէջ եղած գրաւոր բանակցութիւնը :



6.

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ԱՆԸ

Ազգային վարժարանաց բարեկարգու-  
թեան համար Ուսումնական խորհրդոյ պատ-  
րաստած սոյն Հրահանգը նկատողութեան  
